Միգրացիայի միջազգային կազմակերպություն

ՄԱՐԴՈՒ ԹՐԱՖԻՔԻՆԳ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ

ՁԵՌՆԱՐԿ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՄԱՐԴՈՒ ԹՐԱՖԻՔԻՆԳ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ

ՁԵՌՆԱՐԿ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Երրորդ հրատարակություն

Հայաստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարի հրամանով երաշխավորված է գործածության որպես ուսումնաօժանդակ նյութ՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների համար

Միգրացիայի միջազգային կազմակերպություն

Հեղինակներ՝ Սիլվա Պետրոսյան, Հեղինե Խաչատրյան,
Ռուզաննա Մուրադյան, Սերոբ Խաչատրյան, Կորյուն Նահապետյան

Լրամշակումը՝ Նունե Ասատրյանի

Սույն հրատարակությունում արտահայտված կարծիքները պատկանում են հեղինակներին և կարող են չհամընկնել Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) տեսակետների հետ: Զեկույցում ներկայացված նյութը և կիրառված նշանները չեն ենթադրում ՄՄԿ կողմից որևէ կարծիքի արտահայտում՝ կապված այս կամ այն երկրի, տարածքի, քաղաքի կամ շրջանի կամ դրանց ղեկավար մարմինների և սահմանների իրավական կարգավիճակի վերաբերյալ:

ՄՄԿ-ն հավատարիմ է այն սկզբունքին, որ մարդասիրական և կանոնավոր միգրացիան շահեկան է միգրանտների և հասարակության համար: Որպես միջկառավարական կազմակերպություն, ՄՄԿ-ն իր միջազգային գործընկերների հետ աշխատում է՝ աջակցել միգրացիոն մարտահրավերների հաղթահարմանը, հստակ պատկերացում կազմել միգրացիոն խնդիրների վերաբերյալ, խրախուսել սոցիալ - տնտեսական զարգացմանը միգրացիայի միջոցով և պաշտպանել միգրանտների մարդկային արժանապատվությունը և բարեկեցությունը:

Հրատարակիչ՝ Միգրացիայի միջազգային կազմակերպություն
Հայաստանի առաքելություն
Հայաստան, Երևան 0010, ՄԱԿ-ի գրասենյակ,
Պետրոս Ադամյան փողոց 14
Հեռ.՝ (+374 10) 58 56 92, 58 37 86
Հեռապատճեն՝ (+374 10) 54 33 65
Էլ.փոստ՝ IOMArmenia@iom.int
Կայք՝ www.iom.int/countries/armenia

© Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)

Հեղինակային իրավունքը պաշտպանված է: Սույն հրատարակության ոչ մի մաս չի կարող վերարտադրվել, պահպանվել որոնողական համակարգում կամ փոխանցվել էլեկտրոնային, մեխանիկական, պատճենահանման, ձայնագրման կամ այլ եղանակով առանց հրատարակչի նախնական գրավոր թույլտվության:

ՀԱՐԳԵԼԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

Սույն ձեռնարկը պատրաստվել է ժամանակակից աշխարհում մարդկանց ուշադրությունն իր վրա ավելի ու ավելի սևեռող մարդու թրաֆիքինգի և այդ երևույթի աճը կանխարգելելու ու հետևանքները մեղմացնելու նպատակով:

Ձեռնարկը պատրաստվել է Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) ***«Մարդկանց առևտուրը կանխելուն ուղղված դպրոցական կրթություն Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում»*** տարածաշրջանային ծրագրի շրջանակներում և լրամշակվել է ՄՄԿ Հայաստանի առաքելության կողմից՝ հաշվի առնելով մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի՝ իրավական և ինստիտուցիոնալ դաշտերի փոփոխությունները: Ձեռնարկում ներառվել են թարմ վիճակագրական տվյալներ, իսկ Դասընթացի բաժինը համալրվել է բաշխման նյութերով:

Ձեռնարկը բաղկացած է երեք բաժնից: Առաջին բաժնում տեղ են գտել թրաֆիքինգի մասին տեսական նյութեր, որոնց ուսումնասիրումը հնարավորություն կտա ձեզ Հանրակրթական միջին և ավագ դպրոցներում դասավանդվող «Հասարակագիտություն» առարկայի տարբեր բաղադրիչներում զետեղված թրաֆիքինգը լուսաբանող նյութերը արդյունավետ օգտագործել, ինչպես նաև երաշխավորված դասերն ընդգրկել դասղեկական ժամերի համար տրվող թեմատիկ պլաններում:

Երկրորդ բաժնում նկարագրված է մարդկանց շահագործմանը նվիրված հիմնական դասընթացի ութ առաջարկվող դասերի ընթացքը:

Ձեռնարկի երրորդ բաժինը նվիրված է ուսուցման արդի այն մոտեցումներին, ռազմավարություններին ու մեթոդներին, որոնք կնպաստեն թրաֆիքինգ երևույթի կառուցողական և ինտերակտիվ դասավանդմանը, քննարկմանն ուգնահատմանը:

Մաղթում ենք հաջողություն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ 7
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. ՄԱՐԴՈՒ ԹՐԱՖԻՔԻՆԳԸ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ ԱՐԴԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԵԾ ՎՏԱՆԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ 6

ԳԼՈՒԽ 1.
ՄԱՐԴՈՒ ԹՐԱՖԻՔԻՆԳԸ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՆԴՐԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ.....11
Ա. Ինչ է մարդու թրաֆիքինգը և շահագործումը 11
Բ. «Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին» արձանագրությունը.....15
Գ. «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի միջոցների մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան ... 20
Դ. Մարդու թրաֆիքինգը և շահագործումը մարդու իրավունքների ոլորտում միջազգային իրավունքի այլ նորմատիվ ակտերի տեսանկյունից 23

ԳԼՈՒԽ 2.
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ՝ ՄԱՐԴՈՒ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՑԱԿԱԶՄԸ..... 28

ԳԼՈՒԽ 3.
ՄԱՐԴՈՒ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆ ՆՊԱՍՏՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ..... 38
Ա. Տնտեսության գլոբալացումը..... 38
Բ. Տարբեր պետությունների և տարածաշրջանների տնտեսական և իրավական անհավասարությունը..... 40

Գ. Գիտության, մասնավորապես բժշկության զարգացման հետևանքով մարդկանց օրգանների և հյուսվածքների փոխպատվաստման հնարավորությունը 42
Դ. Թրաֆիքինգի պոտենցիալ զոհերի վիկտիմ վարքը.... 43

ԳԼՈՒԽ 4.
ՄԱՐԴՈՒ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ 47
Ա. «Մարդու թրաֆիքինգի կանխարգելում» հասկացությունը 47
Բ. Մարդու թրաֆիքինգի և շահագործման կանխարգելման միջոցառումները 49
Գ. Երիտասարդությունը՝ որպես մարդու թրաֆիքինգի և շահագործման ռիսկային խումբ (Կարող է օգտագործվել որպես բաշխման նյութ 5-րդ դասի համար)..... 57

ԳԼՈՒԽ 5.
ՄԱՐԴՈՒ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԶՈՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 60
Ա. Մարդու թրաֆիքինգի և շահագործման զոհերի պաշտպանության և աջակցության ուղղությունները.....60
Բ. Մարդու թրաֆիքինգի և շահագործման հետևանքները 64
Գ. Սկզբունքներ, որոնցով հարկավոր է առաջնորդվել թրաֆիքինգի և շահագործման զոհերին աջակցություն ցուցաբերելիս 66

ԳԼՈՒԽ 6.
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ 69

ԳԼՈՒԽ 7.
ՄԱՐԴՈՒ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ..... 72

ԲԱԺԻՆ2. ԴԱՍԸՆԹԱՑԸ 76
ԴԱՍ 1. Թրաֆիքինգի սահմանումը 77
ԴԱՍ 2. Մարդու թրաֆիքինգի և շահագործման առաջացման պատճառները և դրան նպաստող գործոնները 80
ԴԱՍ 3. Թրաֆիքինգի դրսևորումները 85
ԴԱՍ 4. Թրաֆիքինգի դրսևորումները (շարունակություն) 88
ԴԱՍ 5. Երիտասարդությունը՝ որպես մարդու թրաֆիքինգի և շահագործման ռիսկային խումբ 96
ԴԱՍ 6. «Վիկտիմություն», «վիկտիմ վարք» հասկացությունները 99
ԴԱՍ 7. Մարդու թրաֆիքինգի և շահագործման կանխարգելումը 101
ԴԱՍ 8. Մարդու թրաֆիքինգի և շահագործման զոհերի պաշտպանությունը և աջակցությունը 109

Հավելված 1 117
Հավելված 2 120

ԲԱԺԻՆ 3. ՄԵԹՈԴՆԵՐԻ ՇՏԵՄԱՐԱՆ 122
ԽՃԱՆԿԱՐ.....122
ԴԵՊՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ 127
ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄԵԹՈԴ.....131
ԴԵՐԱԽԱՂ 136
Գրականություն ինտերակտիվ մեթոդների մասին.....155
Գրականության ցանկ 157
Մարդու թրաֆիքինգի և շահագործման հիմնախնդրին առնչվող վավերագրական և գեղարվեստական ֆիլմեր.....159

ԲԱԺԻՆ 1. ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. ՄԱՐԴՈՒ ԹՐԱՖԻՔԻՆԳԸ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ ԱՐԴԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԵԾ ՎՏԱՆԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Նախորդ դարի վերջին տասնամյակներում հասարակագետները սկսեցին խոսել հասարակական գործընթացների գլոբալացման մասին՝ նկատի ունենալով, որ երկրագնդի մասշտաբներն ավելի ու ավելի են փոքրանում բազմաթիվ գործընթացների համար, որոնք անարգել անցնում են պետական սահմաններով, տարբեր մայրցամաքներով ու աշխարհամասերով: Արդի հասարակությունն իրավամբ համարվում է գլոբալացվող, քանի որ աստիճանաբար պետությունների սահմաններն ավելի ու ավելի թափանցիկ են դառնում գաղափարների, դրամի, ապրանքների և մարդկանց շրջանառության իմաստով: Ցավոք, գլոբալացվող արդի հասարակությունում համընդհանուր են դառնում ոչ միայն մարդկության առաջընթացի արդյունքները, այլև մարդկային հանրության առջև ծառացած հիմնախնդիրները: Գլոբալացումն իր հետ բերում է նաև կազմակերպված անդրսահմանային հանցավորության աճ, քանի որ երկրների միջև տնտեսական, քաղաքական, մշակութային և այլ կապերի սերտացումը հանցավոր խմբերն օգտագործում են իրենց նպատակներին հասնելու համար: Դրան նպաստում են նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները: Ի թիվս այլ հիմնախնդիրների՝ գլոբալացման դարաշրջանում ահագնացող է դառնում մարդու թրաֆիքինգի և շահագործման հիմնախնդիրը:

Մարդու թրաֆիքինգը և շահագործումը համարվում է 21-րդ դարի ստրկություն, այն հաճախ անվանում են նաև «մերօրյա կամ արդի ստրկություն»՝ նկատի ունենալով, որ երկու դեպքում էլ մարդը դիտարկվում է որպես սոսկ միջոց, գործիք: Հայաստանի Հանրապետությունը հիմնականում մարդկանց թրաֆիքինգի ծագման

երկիր է, այսինքն՝ «մատակարարում է» այլ երկրներ մարդու թրաֆիքինգի զոհ դարձող մարդկանց: Սակայն արձանագրված են նաև դեպքեր, երբ Հայաստանի Հանրապետության տարածքում մարդու թրաֆիքինգի են ենթարկվել օտարերկրացիները, կան նաև որոշ դեպքեր, որոնք կարելի է կոչել ներքին թրաֆիքինգ, երբ մարդու շահագործումը տեղի է ունենում Հայաստանում: Հայտնի են այլ երկրներում հայաստանցի կանանց, անչափահասների և տղամարդկանց աշխատանքային և սեռական շահագործման դեպքեր, իսկ դա նշանակում է, որ հայաստանյան հասարակությունը պետք է տեղեկացված լինի մարդու թրաֆիքինգի և շահագործման մասին, որպեսզի իրազեկ լինելու շնորհիվ հնարավոր լինի պակասեցնել հնարավոր ապագա զոհերի թիվը, ինչպես նաև չդառնալ մարդու թրաֆիքինգի ենթարկվածների աշխատանքից օգտվողներ ու դրանով իսկ անուղղակիորեն դրան նպաստողներ:

Ներկայումս մարդու թրաֆիքինգի և շահագործման զոհեր են դառնում մեր այն հայրենակիցները, ովքեր ցանկանում են խուսափել ցածր կենսապայմաններից ամեն գնով, երբեմն անշրջահայացորեն այդ նպատակով համաձայնում են լքել մեր հայրենիքը՝ անզգուշորեն հավատալով եկամուտներն արագ բարձրացնելու իրենց տրված հաճախ սին խոստումներին: Արդյունքում նրանցից շատերը հայտնվում են ծանր կացության մեջ, անխղճորեն շահագործվում ֆիզիկապես և բարոյապես, ստիպված լինում կատարել իրենց ուժերից վեր ծանր աշխատանք՝ դրա դիմաց չվճարվելով, ենթարկվելով ծեծի ու սպառնալիքների, արժանապատվության նվաստացման:

ԱՄՆ պետքարտուղարությունը ամեն տարի հրապարակում է մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վերաբերյալ տարեկան զեկույցը, որում անդրադարձ է արվում աշխարհի տարբեր երկրներում ստեղծված իրավիճակին և այս հանցագործության մենկատմամբ համապատասխան արձագանքին: Վերոհիշյալից ելնելով երկրները դասվում են տարբեր խմբերի: 2016 թվականի զեկույցի համաձայն, Հայաստանը երրորդ անգամ դասվել է առաջին խմբում:[1]

[1] Այդ մասին առավել մանրամասն տեղեկացվածության նպատակով տե՛ս մարդկանց թրաֆիքինգի մասին ԱՄՆ պետդեպարտամենտի 2016 թ. զեկույցը. www.state.gov/documents/organization/258878.pdf

Առաջին խմբում ընդգրկված են այն երկրները, որոնց կառավարությունների գործունեությունը լիովին համապատասխանում է Թրաֆիքինգի զոհերի պաշտպանության ակտի նվազագույն պահանջներին:

2008 թվականից մինչև 2013 թվականը Հայաստանն ընդգրկված է եղել երկրորդ խմբում: Ըստ դասակարգման՝ երկրորդ խմբում ընդգրկված են այն երկրները, որոնցում թեպետ մարդու թրաֆիքինգի դեմ պայքարը դեռևս չի համապատասխանում միջազգային չափանիշներին, սակայն այդ երկրների պետական կառույցները ձգտում են հասնել դրան: Կան նաև երկրորդի առավել ռիսկային՝ հատուկ վերահսկման և երրորդ խմբեր: Մինչև 2008թ. Հայաստանի Հանրապետությունը եղել է երկրորդ մակարդակի ռիսկային հատուկ վերահսկման խմբում:

Երկրների երկրորդ, իսկ այնուհետև առաջին խմբում Հայաստանի ներառումը ՀՀ փոխվարչապետի կողմից ղեկավարվող ՀՀ-ում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդի կազմում և ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից համակարգվող խորհրդին կից աշխատանքային խմբում ընդգրկված պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների և միջազգային գործընկերների վերջին տարիների շարունակական և հետևողական աշխատանքի, իրականացված լուրջ բարեփոխումների և սերտ համագործակցության արդյունքն է:

Մարդու թրաֆիքինգի և շահագործման խնդիրը դարձել է մտահոգության առարկա ողջ քաղաքակիրթ հասարակության համար: Որքան էլ երկրները միավորում են իրենց ջանքերն այդ հանցագործության դեմ պայքարում, արդի ստրկությունը շարունակում է մնալ դաժան իրողություն: Համաձայն ԱՄՆ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վերաբերյալ 2016 թվականի զեկույցի 600 000 - 800 000 մարդ տարեկան ենթարկվում է թրաֆիքինգի: Տարբեր հաշվարկների համաձայն՝ մարդու թրաֆիքինգն ու շահագործումը հանցագործներին բերում է տարեկան միլիարդավոր դոլարների եկամուտ:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո մարդու իրավունքների պաշտպանության մի նոր փուլ սկսվեց: Մարդը հռչակվեց գերագույն արժեք, նրա իրավունքներն ու

ազատությունները՝ հիմնարար ու անկապտելի: Ժողովրդավարական պետություններն իրենց առաքելությունը տեսան մարդու իրավունքների պաշտպանության երաշխավոր լինելու մեջ, ու այդ նպատակով երկրագնդի բազմաթիվ երկրներ միացան Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին այն հույսով, որ հասարակության զարգացման շնորհիվ աստիճանաբար անցյալում կմնան մարդու արժանապատվությունը նսեմացնող վարվելակերպերը, պատիժներն ու շահագործումը:

Սակայն 20-րդ դարի ավարտին և արդեն նոր՝ երրորդ հազարամյակում կազմակերպված հանցավորության գործունեության ծավալների մեծացման հետևանքով պարզ դարձավ, որ բռնությունից ու մարդու իրավունքների ոտնահարումներից զերծ աշխարհը դեռևս հեռու է իրականություն լինելուց: Ողջ երկրագնդի մասշտաբով նոր թափ ստացավ մարդու թրաֆիքինգի տարածումը, բացահայտվեցին մարդկանց ստրկացման, աշխատանքի և սեռական շահագործման, օրգանների կորզման ու վաճառքի և այլ բազմաթիվ դեպքեր, և պետությունները որոշեցին առավել համակարգված ու միահամուռ դարձնել պայքարը նորօրյա ստրկացման՝ անդրազգային կազմակերպված ծանր հանցագործության դեմ, որի արդյունքում խախտվում են մարդու կյանքի, առողջության և անվտանգության, անձեռնմխելիության և արժանապատվության, աշխատանքի դիմաց պատշաճ վարձատրության և մի շարք այլ հիմնարար ու անկապտելի իրավունքներ:

ԳԼՈՒԽ 1.

ՄԱՐԴՈՒ ԹՐԱՖԻՔԻՆԳԸ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՆԴՐԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Ա. Ինչ է մարդու թրաֆիքինգը և շահագործումը

«Մարդու թրաֆիքինգ» հասկացությունը նշանակում է շահագործման նպատակով իրականացվող մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը՝ ուժի սպառնալիքով կամ դրա կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման, առևանգման, խարդախության, խաբեության, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը չարաշահելու կամ ուրիշ անձի կողմից վերահսկվող անձի համաձայնությունն ստանալու համար վճարումների կամ շահերի ձևով կաշառելու ճանապարհով:[2]

Սահմանման ընկալումը հեշտացնելու նպատակով ստորև բերվում են մի շարք օրինակներ, որոնցում առկա են մարդու թրաֆիքինգի և շահագործման տարրեր.

- Քաղաքացի Վ. -ն տղամարդկանց մի խումբ էր հավաքագրել ու տեղափոխել Ռուսաստանի Դաշնություն շինարարության վրա աշխատելու համար: Այդ խմբի հանդեպ կիրառվել էր հարկադրանք, տղամարդկանց ստիպել էին աշխատել, իսկ վճարվելիք գումարները յուրացրել էին Վ.-ն ու իր գործընկերները՝ աշխատողներին տալով միայն սնունդ:
- Քաղաքացի Մ. -ն մարմնավաճառ էր իր հայրենի քաղաքում: Նա համաձայնում է մեկնել Y երկիր, քանի որ հավաքագրողը նրան խոստանում է իր «աշխատանքի» համար կրկնակի եկամուտ,

[2] Սույն սահմանումը տրվել է Պալերմոյի արձանագրությունում, որի մասին կխոսվի հետագա շարադրանքում:

մինչդեռ Y երկրում Մ.-ն աշխատում է կրկնակի շատ, սակայն չի վճարվում, քանի որ նրան հասանելիք գումարները յուրացնում են խաբեությամբ նրա փաստաթղթերին տեր դարձած միջնորդները:

Մարդու կողմից մարդու շահագործումը բավական հին երևույթ է: Դրա հնագույն տարատեսակը ստրկությունն է: Հին Հունաստանում կամ Հռոմում, օրինակ, ստրուկներին շահագործելն ու որպես ապրանք վաճառելը համարվել է սովորական երևույթ գուցեև այն պատճառով, որ ստրուկի և բանող կենդանիների միջև տարբերություն չեն տեսել: Ստրուկները չեն ունեցել անձնական կյանք և ունեցվածք ունենալու իրավունք, ավելին, իրենք են եղել ուրիշի ունեցվածքի մի մասնիկը: Մարդկությունը դարերի ընթացքում հրաժարվել է ստրկությունից, քանի որ անձնական շահագրգռվածություն չունեցող ստրուկի աշխատանքը աստիճանաբար դարձել է ոչ շահութաբեր՝ տերերին ստիպելով գտնել նրան շահագրգռելու եղանակ: Այդ նպատակով աստիճանաբար ազատագրել են ստրուկներին ու, հողը որպես սեփականություն վերջիններիս տալով, նրանց մղել ավելի արդյունավետ աշխատանքի:

Հայտնի է նաև, որ հին աշխարհում, զինվորներ ունենալու անհրաժեշտությունից ելնելով, շատ իշխանավորներ հակված են եղել արգելելու ազատ քաղաքացիներին պարտքերի դիմաց ստրկացնելը. մասնավորապես, նման մի արձանագրություն է պահպանվել Համմուրապիի օրենքների ժողովածուում:

Ստրկության երկրորդ շրջափուլը կապվում է ռասայական խտրականության հետ, երբ սպիտակ ռասայի մարդիկ ստրկացրել են սևամորթ ռասայի ներկայացուցիչներին: Այս փուլը զարգանում է Աֆրիկա և Ամերիկա մայրցամաքների յուրացման դարաշրջանում և գոյատևում է մինչև 19-րդ դարի վերջը: Ստրկության այս տեսակը դատապարտվել է մարդասեր մտածողների կողմից, որոնք պնդել են, որ բոլոր ռասաները պատկանում են միևնույն «բանական մարդ» տեսակին և չեն կարող միմյանց կողմից շահագործվել: Այնուամենայնիվ, այս կամ այն ձևով նման ստրկությունը գոյատևել է ողջ 19-րդ դարի ընթացքում:

Առաջին անգամ ստրկավաճառության, մասնավորապես, Աֆրիկայի սևամորթների վաճառքի արգելման մասին միջազգային մակարդակով խոսվել է 1815թ. Վիեննայի համաժողովի հատուկ հռչակագրում: Այնուհետև, 1818թ. Ահենի համաժողովում սևամորթների վաճառքը ոչ միայն արգելվում է, այլև համարվում է հանցավոր: Այնուհանդերձ հիշյալ երկու փաստաթղթերը չի հաջողվում կյանքի կոչել, դրանք մնում են սոսկ որպես հռչակագրեր: Այդ ժամանակից ի վեր ստրկավաճառության դեմ պայքարը գնալով ավելի ու ավելի խիստ է դառնում, սակայն, ցավոք, ստրկության կամ դրան համանման մարդու թրաֆիքինգի ու շահագործման երևույթները չեն վերանում:[3]

Քաղաքակրթության զարգացման որևէ փուլում չի կարելի խոսել ստրկությունից զերծ աշխարհի մասին, քանի որ այս կամ այն կերպ ստրկության այս կամ այն տարատեսակը առկա է եղել միշտ: Արևելյան երկրներում տարածված է եղել սեռական շահագործումը: Հարեմներում պահվող կանանց մեծ մասն, ըստ էության, ստրկացված է եղել:

Այնուամենայնիվ, կա մի սկզբունքային տարբերություն դասական ստրկության ու մարդու ժամանակակից շահագործման միջև: Եթե անցյալի ստրկատերերը բացեիբաց ցույց էին տալիս իրենց ստրուկներին, հպարտանում էին նրանց քանակով և ինչ-ինչ կարողություններով, ապա նորօրյա ստրկատերերը, մարդու թրաֆիքինգի անօրինական լինելու պատճառով, ամեն գնով ձգտում են թաքցնել իրենց այդպիսին լինելը: Նրանք, որպես կանոն, թրաֆիքինգի ենթարկվածներին թաքցնում են հասարակության աչքից, պահում են, օրինակ, նկուղներում, անտառներում կազմակերպված «աշխատանքային ճամբարներում», կամ էլ եթե զոհը, օրինակ, տնային ծառայող է, պարզապես թաքցնում են այն փաստը, որ ծառայողն ըստ էության ստրուկ է, քանի որ չի վարձատրվում աշխատանքի դիմաց, չունի հանգստյան օրեր, ենթարկվում է ծեծի ու սպառնալիքների: Մարդու թրաֆիքինգ երևույթը երբեմն էլ գոյատևում է իշխանության պատասխանատու ներկայացուցիչների աչք փակելու շնորհիվ, քանի որ կաշառվելով

[3] Այդ մասին առավել մանրամասն տե՛ս **Երեմյան Ա., Թումասյան Դ., Ղամբարյան Ա., Պետրոսյան Տ.,** *ՀՀ-ում մարդու թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի իրավական հիմունքները*, Երևան, 2011, էջ 16-20:

մարդկանց շահագործողների կողմից, վերջիններս դադարում են նկատել, թե ինչ է կատարվում, օրինակ, այս կամ այն հյուրանոցում կամ շինարարության վրա, ինչպես նաև սահմանային անցագրային հսկումների ժամանակ կարծես չեն տեսնում ակնհայտ կեղծ փաստաթղթերը, 15-20 տարեկան աղջիկներին 30 տարեկան ներկայացնող անձնագրերը և այլն:

Ներկայումս մարդու թրաֆիքինգն ու շահագործումը սահմաններ չճանաչող՝ անդրազգային, հանցագործություններ են, որոնք առկա են թե՛ հարուստ, թե՛ աղքատ երկրներում, և որոնց զոհ դարձած մարդիկ կրում են այնպիսի ծանր մարմնական, հոգեկան կամ տնտեսական հարվածներ, որ հետագայում նրանց վերականգնումն ու հասարակության լիարժեք անդամ դառնալը պահանջում են լրացուցիչ ջանքեր ու ժամանակ:

Մարդու թրաֆիքինգը անդրազգային կազմակերպված հանցավորություն է, որի դեմ պայքարի նպատակով բազմաթիվ պետություններ միավորում են իրենց ջանքերը: Կանանց, տղամարդկանց, և երեխաների թրաֆիքինգի կանխարգելման և դրա դեմ պայքարի արդյունավետ միջոցներ ձեռնարկելու համար հանդես է բերվել համընդգրկուն միջազգային մոտեցում ծագման, տարանցման և նպատակակետ երկրներում, ներառյալ այն միջոցները, որոնք ուղղված են թրաֆիքինգի կանխարգելմանը, դրանով զբաղվող անձանց պատժելուն և զոհերի պաշտպանությանը, այդ թվում՝ նրանց միջազգայնորեն ճանաչված մարդու իրավունքների պաշտպանության միջոցով:

Բ. «Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին» արձանագրությունը

Հաշվի առնելով մարդկանց, հատկապես կանանց և երեխաների թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի համընդհանուր փաստաթուղթ ունենալու, ինչպես նաև մարդկանց առևտրի տեսակետից առավել խոցելի անձանց բավարար չափով պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտությունը՝ 2000 թվականի դեկտեմբերի 12-ին Պալերմոյում ստորագրվել է Միավորված ազգերի կազմակերպության «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» կոնվենցիան լրացնող՝ **«Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին»** արձանագրությունը[4]: Հարկ է ևս մեկ անգամ ընդգծել, որ քննարկվող հանցագործության տեսակը իր բնույթով անդրազգային է, ըստ Միավորված ազգերի կազմակերպության 2000 թվականի դեկտեմբերի 12-ի «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» կոնվենցիայի 3-րդ հոդվածի, համաձայն որի հանցագործությունն անդրազգային բնույթ է կրում, եթե՝

ա) այն կատարվել է մեկից ավելի պետություններում,

բ) այն կատարվել է մի պետությունում, բայց դրա նախապատրաստման, ծրագրման, ղեկավարման կամ վերահսկողության էական մասը տեղի է ունեցել այլ պետությունում,

գ) այն կատարվել է մի պետությունում, բայց այնպիսի կազմակերպված հանցավոր խմբի մասնակցությամբ, որը հանցավոր գործունեություն է իրականացնում մեկից ավելի պետություններում,

դ) այն կատարվել է մի պետությունում, բայց դրա էական հետևանքները եղել են այլ պետությունում:

---

[4] Տվյալ արձանագրությունում և մի շարք միջազգային փաստաթղթերում «մարդու թրաֆիքինգ» և «մարդկանց առևտուր» եզրույթները կիրառվում են որպես հոմանիշներ:

«Մարդկանց հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման արգելման և պատժի մասին» արձանագրությունը Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է 2001 թվականի նոյեմբերի 15-ին և վավերացրել է 2003 թվականի հուլիսի 1-ին:

Արձանագրության նպատակներն են՝

ա) մարդկանց առևտրի կանխարգելումը և դրա դեմ պայքարը՝ հատուկ ուշադրություն դարձնելով կանանց և երեխաներին,

բ) այդպիսի առևտրից տուժողների պաշտպանությունը և օգնությունը՝ ամբողջովին հարգելով նրանց մարդու իրավունքները, և

գ) այդ նպատակներին հասնելու գործում պետությունների համագործակցության խրախուսումը:

Արձանագրության 3-րդ հոդվածով սահմանվում է **«մարդու թրաֆիքինգ»** հասկացությունը:

Արձանագրության նպատակների համար՝

ա) *մարդկանց առևտուր նշանակում է՝ շահագործման նպատակով իրականացվող մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը ուժի սպառնալիքով կամ դրա կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման, առևանգման, խարդախության, խաբեության, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը չարաշահելու կամ ուրիշ անձի կողմից վերահսկվող անձի համաձայնությունն ստանալու համար վճարումների կամ շահերի ձևով կաշառելու ճանապարհով: Շահագործումը նվազագույնը ներառում է այլ անձանց մարմնավաճառության շահագործումը կամ սեքսուալ շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկությունը կամ ստրկությանը համանման սովորույթները, անազատ վիճակը կամ մարմնի մասերը կորզելը.*

բ) մարդկանց առևտրի զոհի համաձայնությունը այնպիսի պլանավորված շահագործմանը, որի մասին խոսվում է սույն

հոդվածի «ա» ենթակետում, հաշվի չի առնվում, եթե օգտագործվել է «ա» ենթակետում նշված ներգործության միջոցներից որևէ մեկը.

գ) շահագործման նպատակով երեխա հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը համարվում է «մարդկանց առևտուր» նույնիսկ այն դեպքում, եթե դրանք կապված չեն սույն հոդվածի «ա» ենթակետում նշված ներգործության միջոցներից որևէ մեկի կիրառման հետ.

դ) «երեխա» նշանակում է ցանկացած անձ, որի 18 տարին չի լրացել:

Մարդու թրաֆիքինգը բաղկացած է երեք հիմնական տարրերից՝

գործողություններ՝ մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը:

միջոցներ՝ ուժի սպառնալիք կամ դրա կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառում, առևանգում, խարդախություն, խաբեություն, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը չարաշահելը կամ ուրիշ անձի կողմից վերահսկվող անձի համաձայնությունն ստանալու համար վճարումների կամ շահերի ձևով կաշառելը:

նպատակ՝ շահագործում, որը նվազագույնը ներառում է այլ անձանց մարմնավաճառության շահագործումը կամ սեքսուալ շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկությունը կամ ստրկությանը համանման սովորույթները, անազատ վիճակը կամ մարմնի մասերը կորզելը:

Վերոնշյալ տարրերը ներկայացված են ստորև բերվող աղյուսակում.

Թրաֆիքինգ իրականացնողների ***գործողությունները***	*Թրաֆիքինգի իրականացման* ***միջոցները***	*Թրաֆիքինգ իրականացնելու* ***նպատակները***
Թրաֆիքինգի դեպքում ստորև նշված գործողությունները կատարվում են **շահագործման** նպատակով. մարդկանց • հավաքագրելը • տեղափոխելը • փոխանցելը • թաքցնելը • ստանալը	• ուժի սպառնալիքի գործադրումը • ուժի գործադրումը • հարկադրանքի այլ ձևերի կիրառումը • առևանգումը • խարդախությունը • խաբեությունը • իշխանության կամ վիճակի խոցելիության չարաշահումը • այլ անձնավորության նկատմամբ վերահսկողություն իրականացնող անձի համաձայնությունը ստանալու համար դրամական միջոցների կամ օգուտների տրամադրումը	Հիմնական նպատակը **շահագործումն** է, որը կարող է հանդես գալ հետևյալ ձևերով. • այլ անձանց մարմնավաճառության շահագործումը • սեռական այլ շահագործումը (օրինակ՝ պոռնկագրության դրդելը) • հարկադիր աշխատանքները կամ ծառայությունները • ստրկությունը կամ ստրկությանը հավասարազոր վիճակը • առք ու վաճառքը • օրգանների կորզումը

Մարդու թրաֆիքինգի դեպքում պետք է համատեղ առկա լինի երեք կատեգորիաներից յուրաքանչյուրի տարրերից որևէ մեկը (գործողություն, միջոց, նպատակ): Սակայն, երեխաների դեպքում գոյություն ունի մի բացառություն. Արձանագրության 3-րդ հոդվածի «գ» ենթակետով սահմանված հավաքագրումը, տեղափոխումը, փոխանցումը, թաքցնելը կամ ստանալը պետք է դիտվի որպես

մարդու թրաֆիքինգ, եթե անգամ այդ գործողությունը չի կատարվել նույն հոդվածի «ա» ենթակետում թվարկված միջոցներից որևէ մեկի օգտագործմամբ:

Արձանագրության 3-րդ և 5-րդ հոդվածներին համապատասխան պետությունները պարտավորվել են օրենսդրական միջոցներ գործադրել քրեականացնելու անդրազգային բնույթ կրող և հանցավոր խմբերի մասնակցությամբ կատարված դիտավորյալ այնպիսի հանցագործություններ, որպիսիք հանդիսանում են շահագործման նպատակով իրականացվող մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը՝ ուժի սպառնալիքով կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառմամբ, առևանգման, խարդախության, խաբեության, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը չարաշահելու կամ ուրիշ անձի կողմից վերահսկվող անձի համաձայնությունը ստանալու համար վճարումների կամ շահերի ձևով կաշառելու ճանապարհով, ինչպես նաև այդպիսի հանցագործությունների կատարման փորձը, հանցակցությունը և այդպիսի արարքների կատարման նպատակով կազմակերպված խումբ կամ հանցավոր համագործակցություն ստեղծելը կամ ղեկավարելը:

Գ. «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի միջոցների մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան

«*Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին*» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է 2005 թվականի մայիսի 16-ին և վավերացրել 2008 թվականի ապրիլի 14-ին:

Կոնվենցիան նպատակ ունի կանխարգելելու մարդու թրաֆիքինգը և շահագործումը՝ անկախ վերջինիս դրսևորման ձևից և բնույթից, պաշտպանելու մարդու թրաֆիքինգի զոհերի իրավունքները, ապահովելու մարդկանց շահագործման փաստերի առնչությամբ հարուցված քննությունների և քրեական հետապնդումների արդյունավետությունը, ինչպես նաև խթանելու միջազգային համագործակցությունը մարդու թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի ոլորտում: Կոնվենցիայի առաջին հոդվածում նշվում են կոնվենցիայի նպատակները՝

ա. կանխարգելել մարդու թրաֆիքինգ հանցագործությունը ու պայքարել դրա դեմ՝ երաշխավորելով գենդերային հավասարությունը,

բ. պաշտպանել մարդու թրաֆիքինգի զոհերի իրավունքները, մշակել զոհերի ու վկաների պաշտպանության համապարփակ մեխանիզմ՝ երաշխավորելով գենդերային հավասարությունը, ինչպես նաև ապահովել արդյունավետ քննություն և քրեական հետապնդում,

գ. նպաստել մարդու թրաֆիքինգի դեմ պայքարի բնագավառում միջազգային համագործակցության զարգացմանը:

Հայաստանի Հանրապետությունը սույն կոնվենցիայով ստանձնել է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

ա) համակարգել և/կամ ամրապնդել ներպետական մարմինների փոխհամագործակցությունը մարդու թրաֆիքինգը և շահագործումը կանխարգելելու և դրա դեմ պայքարելու գործում, արդյունավետ միջոցների կիրառմամբ մշակել այնպիսի քաղաքականություն և ծրագրեր, որոնցում

առաջնային դիրքերում կլինեն մարդու իրավունքների, ներառյալ երեխաների շահերի պաշտպանությունը, գենդերային հավասարությունը,

բ) ձեռնարկել կամ ամրապնդել օրենսդրական, վարչական, կրթական, սոցիալական, մշակութային և այլ միջոցներ, որոնք կնպաստեն մարդկանց, հատկապես կանանց և երեխաների շահագործման բոլոր ձևերի պահանջարկի վերացմանը,

գ) բոլոր, այդ թվում օրենսդրական միջոցներով ուժեղացնել սահմանների վերահսկողությունը՝ չխախտելով անձանց ազատ տեղաշարժման առնչությամբ ստանձնած միջազգային պարտավորությունները,

դ) թրաֆիքինգը կանխարգելող և դրա դեմ պայքարող իրավասու մարմինները համալրել համապատասխան որակավորում ունեցող մասնագետներով՝ գործադրելով բոլոր հնարավոր միջոցները թրաֆիքինգի զոհերին հայտնաբերելու համար, անհրաժեշտության դեպքում համագործակցելով նաև կոնվենցիայի մասնակից այլ պետությունների և համապատասխան օժանդակող կազմակերպությունների հետ, իսկ զոհին հայտնաբերելու դեպքում վերջինիս տրամադրել կացության թույլտվություն,

ե) պաշտպանել զոհերի անձնական կյանքն ու ինքնությունը, վերջիններիս վերաբերող անձնական տվյալները պահպանել և օգտագործել «Անձնական տվյալների ավտոմատացված մշակումից անձանց պաշտպանության մասին» կոնվենցիայի դրույթներին համապատասխան:

Կոնվենցիայում կարևորվում են նաև այնպիսի հարցեր, որպիսիք են զոհերի ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական վերականգնմանը նպաստող օրենսդրական կամ այլ միջոցների կիրառումը, զոհին կացության կարգավիճակ տրամադրելը, զոհերի՝ անվճար իրավաբանական խորհրդատվություն և իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, զոհի վնասների փոխհատուցման երաշխավորումն ապահովող օրենսդրական և այլ միջոցների ձեռնարկումը:

Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է նաև տուժած երեխաներին չվերադարձնել որևէ պետություն, եթե հիմք կա ենթադրելու, որ դա չի բխում երեխայի լավագույն շահերից, վերը թվարկված միջոցները կիրառելիս խթանել գենդերային հավասարությունը և վարել գենդերային իրավահավասարության ուղղված քաղաքականություն:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձված մարդկանց շահագործման քրեականացմանը և դրա հետ կապված մի շարք հարցերի, ինչպիսիք են պատժամիջոցների կիրառումը, ծանրացուցիչ հանգամանքների թվարկումը և այլն:

Նախատեսված է նաև մոնիտորինգի մեխանիզմ, որը վերահսկում է, թե պետություններն ինչպես են իրականացնում կոնվենցիան:

Դ. Մարդու թրաֆիքինգը և շահագործումը մարդու իրավունքների ոլորտում միջազգային իրավունքի այլ նորմատիվ ակտերի տեսանկյունից

Մարդու իրավունքների ոլորտում միջազգային իրավունքը մի այնպիսի հիմնարար գործիք է, որը ոչ միայն լավագույնս նկարագրում է մարդու թրաֆիքինգի և շահագործման էությունն ու բնույթը, այլև սահմանում է այն պարտավորությունները, որոնք պետությունները ստանձնում են այս ոլորտում: Միջազգային իրավական նորմերի մի ամբողջ ցանկ առնչվում է կանանց և երեխաների սեռական շահագործման նպատակով մարդու թրաֆիքինգի տարատեսակ ձևերին:

Ստրկության առաջին բնորոշումը տրված է Ազգերի Լիգայի **«Ստրկության մասին»** 1926 թվականի կոնվենցիայում: Վերջինիս 1-ին հոդվածի առաջին կետի համաձայն՝ «ստրկությունը այն անձի վիճակն է կամ դրությունը, ում նկատմամբ իրականացնում են սեփականության իրավունքին բնորոշ կամ որոշակի լիազորություններ»:

1956թ. Ժնևում ընդունվել է ՄԱԿ-ի՝ **«Ստրկության, ստրկավաճառության և ստրկությանը հավասարազոր ավանդույթների վերացման մասին»** լրացուցիչ կոնվենցիան, որի 1-ին հոդվածը նախատեսում է ոչ միայն ստրկության, այլև դրան հավասարազոր և կախյալ վիճակների հասկացությունների սահմանումները: Մասնավորապես, այդպիսիք են համարվում՝

1. **պարտապանի ստրկացումը**, այսինքն՝ այնպիսի վիճակ կամ դրություն, երբ պարտապանը՝ որպես պարտքի ապահովման միջոց գրավ է դնում կամ իր, կամ իրենից կախման մեջ գտնվող անձի աշխատանքը, եթե կատարվող աշխատանքի արժեքը չի հաշվակցվում տվյալ պարտքի մարմանը, կամ եթե այդ աշխատանքի տևողությունը չի սահմանափակվում և դրա բնույթը չի կոնկրետացվում:

2. **ճորտական վիճակը**, այսինքն՝ հողի այնպիսի օգտագործումը, որի դեպքում օրենքով, ավանդույթի ուժով կամ փոխադարձ համաձայնությամբ օգտագործողը պարտավոր է ապրել և աշխատել ուրիշին պատկանող հողատարածքի վրա և

վարձատրությամբ կամ առանց դրա որոշակի աշխատանք կատարել այդ սեփականատիրոջ օգտին ու չի կարող փոփոխել իր նման վիճակը:

3. **ցանկացած ինստիտուտ կամ ավանդույթ, որի ուժով՝**

ա) կնոջ ծնողները, խնամակալը, ընտանիքը կամ յուրաքանչյուր այլ անձ կամ անձանց խումբ կամ բնեղենով վարձատրելու դիմաց խոստանում են ամուսնացնել, կամ ամուսնացնում են այդ կնոջը առանց նրան մերժելու իրավունք վերապահելու,

բ) կնոջ ամուսինը, վերջինիս ընտանիքը կամ տոհմը իրավունք ունեն վարձատրությամբ կամ այլ պայմանով փոխանցելու տվյալ կնոջն այլ անձի,

գ) ամուսնու մահից հետո կինը ժառանգաբար փոխանցվում է որևէ այլ անձի:

4. ցանկացած ինստիտուտ կամ ավանդույթ, որի ուժով երեխան /մինչև 18 տարեկան անձը/ ծնողների կամ նրանցից մեկի, կամ խնամակալի կողմից վարձատրությամբ կամ առանց դրա փոխանցվում է մեկ այլ անձի՝ այդ երեխայի կամ աշխատանքի շահագործման նպատակով:

ՄԱԿ-ի «**Հարկադիր աշխատանքի մասին**» 1930 թվականի կոնվենցիայի 2-րդ հոդվածի առաջին կետով սահմանված է հարկադիր /կամ պարտադիր/ աշխատանքի կամ ծառայությունների հասկացությունը: Մասնավորապես, հարկադիր կամ պարտադիր աշխատանք ասելով պետք է հասկանալ ցանկացած աշխատանք կամ ծառայություն, որի կատարումը կամ մատուցումը պահանջվում է որևէ անձից որևէ պատժի կիրառման սպառնալիքով և որի համար տվյալ անձը կամավոր չի առաջարկել իր ծառայությունները: Նույն հոդվածի երկրորդ կետի համաձայն՝ նշված կոնվենցիայի նպատակների համար հարկադիր կամ պարտադիր աշխատանք տերմինը չի ներառում՝

1. ցանկացած աշխատանք կամ ծառայություն, որը պահանջվում է պարտադիր զինվորական ծառայության վերաբերյալ օրենքներով և կիրառվում է զուտ զինծառայության հետ կապված նպատակների իրականացման համար,

2. ցանկացած աշխատանք կամ ծառայություն, որը հանդիսանում է լիովին ինքնավար պետության քաղաքացու սովորական քաղաքացիական պարտականությունների մաս,
3. ցանկացած աշխատանք կամ ծառայություն, որը պահանջվում է որևէ անձից դատարանի կայացրած որոշման հետևանքով, պայմանով, որ այդ աշխատանքը կամ ծառայությունն իրականացվելու է պետական իշխանության մարմինների հսկողության և վերահսկողության ներքո և որ նշված անձին չեն զիջելու կամ փոխանցելու մասնավոր անձանց, կազմակերպությունների կամ միությունների տնօրինությանը,
4. ցանկացած աշխատանք կամ ծառայություն, որը պահանջվում է արտակարգ հանգամանքների պայմաններում, այսինքն՝ պատերազմի կամ աղետի /հրդեհ, ջրհեղեղ, սով, երկրաշարժ, համաճարակ և այլն/, կամ դրանց սպառնալիքի դեպքում, ինչպես նաև ընդհանուր առմամբ այնպիսի հանգամանքներում, որոնք սպառնում են կամ կարող են սպառնալ բնակչության կամ դրա մի մասի կյանքին կամ նորմալ կենսագործունեությանը,
5. հանրային բնույթի մանր աշխատանքները, այսինքն՝ այն աշխատանքները, որոնք կատարվում են տվյալ կոլեկտիվի անդամների կողմից և օգտակար են այդ կոլեկտիվի համար և որոնք այդ պատճառով կարող են համարվել տվյալ կոլեկտիվի անդամների սովորական քաղաքացիական պարտականություններ, պայմանով, որ բնակչությունը կամ դրա անմիջական ներկայացուցիչներն իրավունք ունենան սեփական կարծիքն արտահայտելու այդ աշխատանքների նպատակահարմարության կապակցությամբ:

Ստրկական աշխատանքի և այդպիսի վիճակի հարկադրելու արգելքը տեղ է գտել Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում և Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրում, որոնց համապատասխանաբար 4-րդ և 8-րդ հոդվածներով հաստատագրված է՝

«Ոչ ոք չպետք է մնա ստրկության կամ անազատ վիճակում: Ստրկությունը և ստրկավաճառությունը, իրենց բոլոր տարատեսակներով, արգելվում են»:

ՄԱԿ-ի «**Երեխայի իրավունքների մասին»** 1989 թվականի կոնվենցիայի 32-րդ հոդվածը հաստատում է, որ «մասնակից պետությունները ճանաչում են երեխայի՝ տնտեսական շահագործումից և այնպիսի աշխատանք կատարելուց պաշտպանվելու իրավունքը, որը կարող է վտանգավոր լինել կամ խոչընդոտել երեխայի կրթությանը կամ վնասել նրա առողջությանը և ֆիզիկական, մտավոր, բարոյական ու սոցիալական զարգացմանը»: Նույն կոնվենցիայի 34-րդ և 35-րդ հոդվածները սահմանում են՝

«Հոդված 34. Մասնակից պետությունները պարտավորվում են երեխային պաշտպանել սեռական շահագործման բոլոր ձևերից և սեռական չարաշահումից: Այդ նպատակով մասնակից պետությունները, մասնավորապես, ներպետական, երկկողմ և բազմակողմ մակարդակներով ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի կանխարգելեն.

ա) երեխային ցանկացած ապօրինի սեռական գործունեության դրդելը կամ հարկադրելը,

բ) շահագործման նպատակով երեխաներին պոռնկության մեջ կամ այլ ապօրինի սեռական պրակտիկայում օգտագործելը,

գ) շահագործման նպատակով երեխաներին պոռնոգրաֆիայի և պոռնոգրաֆիկ նյութերի մեջ օգտագործելը:

Հոդված 35. Մասնակից պետություններն ազգային, երկկողմ և բազմակողմ մակարդակներով ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները երեխաների առևանգումը, նրանց վաճառքը կամ ցանկացած նպատակով և ցանկացած ձևով նրանց առուվաճառքը կանխելու համար»:

ՄԱԿ-ի «**Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի մասին»** 1979 թվականի կոնվենցիան (հոդված 6-րդ) պարտավորեցնում է մասնակից պետություններին ձեռնարկել բոլոր համապատասխան, ներառյալ՝ օրենսդրական, միջոցները՝ արգելելու կանանց առևտրի և կանանց պոռնկության շահագործման բոլոր տեսակները:

ՄԱԿ-ի «**Ռասայական խտրականության բոլոր ձևերի մասին»** 1965 թվականի միջազգային կոնվենցիան (հոդված 1-ին)

«ռասայական խտրականություն» հասկացությունը սահմանում է որպես՝

«...ռասայի, մաշկի գույնի, ցեղային, ազգային կամ էթնիկական ծագման հատկանիշների հիմքով ցանկացած տարբերակում, բացառում, սահմանափակում կամ նախապատվություն, որոնք ունեն քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային կամ հասարակական կյանքի ցանկացած այլ բնագավառում մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները չեղյալ հայտարարելու կամ դրանց ճանաչումը, օգտագործումը կամ իրականացումը նվազեցնելու նպատակ կամ հանգեցնում են նման հետևանքների»:

ԳԼՈՒԽ 2.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ՝ ՄԱՐԴՈՒ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՑԱԿԱԶՄԸ

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը հանցավոր է համարում ինչպես շահագործման նպատակով մարդուն հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, այնպես էլ մարդուն պոռնկության կամ սեռական շահագործման այլ ձևերի մեջ, հարկադիր աշխատանքի կամ ծառայությունների մեջ ներգրավելը կամ ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելը կամ պահելը: Նշված երկու հանցակազմերն էլ ուղղակիորեն առնչվում են մարդու թրաֆիքինգի և շահագործման երևույթներին: Դրանք ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություններ են, որոնք ուղղված են մարդու ազատության դեմ: 2011 թվականին ՀՀ քրեական օրենսգրքում առաջին անգամ ամրագրվել է հոդված, որը պատասխանատվություն է նախատեսում շահագործման վիճակում գտնվող անձի ծառայությունից օգտվելու համար:

ՀՀ քրեական օրենսգիրք

Հոդված 132. Մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը

1. *Մարդու թրաֆիքինգը՝ շահագործման նպատակով մարդուն հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, ինչպես նաև մարդուն շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը՝ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ*

հարկադրանքի այլ ձևերով, առևանգման, խաբեության կամ վստահությունը չարաշահելու, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը օգտագործելու կամ նրան վերահսկող անձի հետ համաձայնություն ձեռք բերելու նպատակով նյութական կամ այլ օգուտ տալու կամ ստանալու կամ այդպիսիք խոստանալու միջոցով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ առանց դրա:

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

1) երկու կամ ավելի անձանց նկատմամբ,

2) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

3) պաշտոնեական դիրքն օգտագործելով,

4) կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,

5) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ,

6) Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելով՝ անձի տեղափոխումը կազմակերպելու միջոցով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ յոթից տասներկու տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ առանց դրա:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է կազմակերպված խմբի կողմից,

2) անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ կամ այլ ծանր հետևանքներ՝

պատժվում է ազատազրկմամբ՝տասից տասնչորս տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա,

որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

4. *Սույն հոդվածով, ինչպես նաև սույն օրենսգրքի 132.2-րդ հոդվածով շահագործում են համարվում այլ անձի՝ պոռնկության շահագործումը կամ սեքսուալ շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելը, առքը կամ վաճառքը, օրգանները կամ հյուսվածքները վերցնելը:*

5. *Սույն հոդվածով, ինչպես նաև սույն օրենսգրքի 132.2-րդ հոդվածով նախատեսված հանցագործություններից տուժած անձն ազատվում է իր կատարած ոչ մեծ կամ միջին ծանրության այն հանցագործությունների համար քրեական պատասխանատվությունից, որոնցում ներգրավված է եղել իր նկատմամբ իրականացված թրաֆիքինգի կամ շահագործման ընթացքում և այդ արարքները կատարել է հարկադրանքի ներքո:*

(132-րդ հոդվածը խմբ., լրաց. 09.06.04 ՀՕ-97-Ն, խմբ. 01.06.06 ՀՕ-103-Ն, փոփ. 01.06.06 ՀՕ-119-Ն, փոփ., լրաց. 18.11.09 ՀՕ-220-Ն, խմբ. 01.03.11 ՀՕ-69-Ն)

Հոդված 132.2. Երեխայի կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգը կամ շահագործումը

1. *Շահագործման նպատակով երեխային, հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձին հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, ինչպես նաև այդպիսի անձանց շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը՝*

պատժվում է ազատազրկմամբ՝ յոթից տասը տարի

ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ առանց դրա:

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

1) երկու կամ ավելի անձանց նկատմամբ,

2) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

3) պաշտոնեական դիրքը օգտագործելով,

4) բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,

5) առևանգման միջոցով,

6) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ,

7) Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելով՝ անձի տեղափոխումը կազմակերպելու միջոցով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասներկու տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ առանց դրա:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է կազմակերպված խմբի կողմից,

2) անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ կամ այլ ծանր հետևանքներ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասներկուսից տասնհինգ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ առանց դրա:

(132.2 հոդվածը լրաց. 01.03.11 ՀՕ-69-Ն)

Հոդված 132.3. Շահագործման վիճակում գտնվող անձի ծառայությունից օգտվելը

1. Շահագործման վիճակում գտնվող անձի ծառայությունից օգտվելը, եթե այդ անձի շահագործման վիճակի մեջ լինելը ակնհայտ է ծառայությունից օգտվողի համար, և եթե հանցագործություն կատարած անձի արարքում բացակայում են սույն օրենսգրքի 132-րդ կամ 132.2-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

1) ակնհայտ անչափահասի նկատմամբ,

2) հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի նկատմամբ,

3) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ,

4) երկու կամ ավելի անձանց նկատմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ առանց դրա:

3. Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմիններին տուժողի մասին կամովին տեղեկություններ հայտնած անձն ազատվում է սույն հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից, եթե նրա փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ չի պարունակում:

(132.3 հոդվածը լրաց. 01.03.11 ՀՕ-69-Ն)

Շահագործման նպատակով մարդուն **հավաքագրելը** դրսևորվում է տուժողին տարբեր եղանակներով (բռնությամբ, դրա գործադրման սպառնալիքով, խաբեությամբ և այլն) մարդկանց առևտրի մեջ ներգրավված անձանց կազմում ընդգրկելով: Օրինակ՝ իբր աշխատանքի նպատակով արտասահման մեկնողների ցուցակում մուտքագրելը, կեղծ աշխատանքային պայմանագրեր կնքելը և այլն:[5]

Տեղափոխելը տուժողին շահագործելու նպատակով նրան մի վայրից մեկ այլ վայր փոխադրելն է: Օրինակ՝ օդանավով կամ ավտոբուսով ծագման երկրից նպատակակետ երկիր փոխադրելը:

Փոխանցելը դրսևորվում է տուժողին համապատասխան անձանց (ընդունողներին) հանձնելով: Օրինակ՝ երբ սեռական շահագործման կամ օրգանները վերցնելու նպատակով տուժողին հանձնում են համապատասխան հանցավոր խմբի ներկայացուցչին: Տուժողի հանձնումը կայացած է համարվում այն պահից, երբ նա հայտնվում է ընդունող անձի տրամադրության տակ:

Թաքցնելը տուժողին մեկուսացնելն է, նրա գտնվելու վայրի գաղտնի պահելը: Օրինակ՝ երբ համապատասխան անձանց հանձնելու նպատակով մարդկանց առևտրի մեջ ներգրավվողին թաքցնում են տան նկուղում կամ ավտոտնակում:

Ստանալը դրսևորվում է տուժողին այլ անձանցից ընդունելով, սեփական տրամադրության տակ թողնելով: Օրինակ՝ երբ հարկադիր աշխատանքի ներգրավելու նպատակով հանցավորն ընդունում է տուժողին:

Մարդու թրաֆիքինգի իրականացման եղանակներն են՝ բռնություն գործադրելը կամ դա գործադրելու սպառնալիքը կամ հարկադրանքի այլ ձևերը, առևանգելը, խարդախությունը, վիճակի խոցելիությունն օգտագործելը, ինչպես նաև տուժողին վերահսկող անձի համաձայնությունը ստանալու համար վճարումներ կամ բարիքներ տալը կամ ստանալը:

Բռնությունը տուժածի դիմադրությունը հաղթահարելու համար ֆիզիկական ուժ գործադրելն է, ծեծի ենթարկելը, մարմնական

[5] Տվյալ հոդվածների մեկնաբանությունը շարադրված է ըստ «ՀՀ քրեական իրավունք: Հատուկ մաս», խմբ. Գ.Ղազինյան, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2007, էջ 202-204:

վնասվածքներ հասցնելը, մազերից քաշքշելը, կապկպելը և այլն: Ընդ որում բռնությունը տվյալ դեպքում կարող է գործադրվել ինչպես տուժողի, այնպես էլ այլ անձանց, օրինակ, նրա մերձավորների նկատմամբ:

Բռնություն գործադրելու սպառնալիքն արտահայտվում է նրանում, որ շահագործման նպատակով մարդուն հավաքագրելու, տեղափոխելու, փոխանցելու, թաքցնելու կամ այլ անձի նկատմամբ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր ֆիզիկական բռնություն գործադրելու սպառնալիքի միջոցով հանցավորը հաղթահարում է տուժողի դիմադրությունը: Այս առումով անհրաժեշտ է, որ առկա լինի սպառնալիքն անհապաղ իրագործելու իրական վտանգը: Այսինքն՝ հանցակազմի առկայության համար տվյալ դեպքում պահանջվում է, որ սպառնալիքի գործադրմամբ տուժողը դրվի անելանելի վիճակի մեջ:

Հարկադրանքի այլ ձևեր ասելով պետք է հասկանալ տուժողի դիմադրությունը ճնշելուն ուղղված բռնություն կամ դրա գործադրման սպառնալիք չհանդիսացող գործողությունները: Օրինակ՝ տուժողին կամ նրա մերձավորներին արատավորող տեղեկություններ տարածելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքը և այլն:

Առևանգումը դրսևորվում է մարդու կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու բնական միկրոսոցիալական միջավայրից դուրս հանելով և մշտական կամ ժամանակավոր բնակության վայրից այլ վայր տեղափոխելով ու այնտեղ պահելով:

Խաբեություն ասելով քննարկվող հանցակազմերի իմաստով պետք է հասկանալ իրականությունը դիտավորյալ խեղաթյուրելը կամ այն գիտակցաբար թաքցնելը, դիմացինին որոշակի փաստերի, հանգամանքների, իրադարձությունների վերաբերյալ ապակողմնորոշելը՝ շահագործման նպատակով մարդկանց հավաքագրելու, տեղափոխելու, փոխանցելու, թաքցնելու կամ ստանալու համար: Օրինակ, երբ սեռական շահագործման կամ հարկադիր աշխատանքի ներգրավելու համար հանցավորն ուղեկցում է տուժողին նշանակման վայր՝ թաքցնելով կամ քողարկելով այնտեղ մեկնելու իրական նպատակը, իսկ հասնելով այդ վայրը՝ հրաժարվում է վերադարձնել նրա անձը հաստատող փաստաթղթերը և ստիպում զբաղվել մարմնավաճառությամբ:

Խաբեությունը թրաֆիքինգով զբաղվողների կողմից հաճախ օգտագործվող միջոցներից է, երբ զոհերին հավատացնում են, որ նրանց սպասվում է գրավիչ աշխատանք, այլ ոչ թե նախապես ծրագրված շահագործում:

Տուժողի վիճակի խոցելիության չարաշահումը ենթադրում է այնպիսի իրավիճակի չարաշահում, երբ անձը չունի որևէ իրական և ընդունելի այլընտրանք, քան շահագործման ենթարկվելը: Խոցելիությունը կարող է լինել ցանկացած բնույթի՝ ֆիզիկական, հոգեբանական, զգացմունքային, ընտանեկան, սոցիալական կամ տնտեսական: Վերոհիշյալ իրավիճակներից կարող է լինել զոհի իրավական կարգավիճակի անապահովությունը կամ անօրինականությունը, տնտեսական կախվածությունը կամ թույլ առողջական վիճակը: Այլ կերպ ասած՝ նման իրավիճակ կարող է լինել ցանկացած դժվարին դրությունը, որում գտնվող անձը ստիպված է լինում համաձայնվել շահագործման ենթարկվելուն: Նման իրավիճակները չարաշահող անձինք կոպիտ կերպով խախտում են մարդու իրավունքները և ոտնահարում են մարդու արժանապատվությունն ու անձեռնմխելիությունը:

Մարդու թրաֆիքինգի իրականացման հաջորդ եղանակը տուժողին վերահսկող անձի համաձայնությունը ստանալու համար վճարումներ կամ բարիքներ տալը կամ ստանալն է: Տուժողին վերահսկող է համարվում այն անձը, ով որոշակի հարաբերությունների ուժով պարտավոր է հսկողություն իրականացնել նրա նկատմամբ: Այդպիսիք կարող են համարվել տուժողի ծնողները (որդեգրողները), խնամակալը, հոգաբարձուն, մանկապարտեզի դաստիարակը, դպրոցի ուսուցչուհին, մարզիկի մարզիչը և այլն:

Տվյալ դեպքում, փաստորեն, վճարումների կամ բարիքների փոխանցման միջոցով նշված անձանց նյութապես շահագրգռում են (կաշառում)՝ նրանց համաձայնությունը ստանալու նպատակով: Օրինակ՝ որոշակի գումար կամ թանկարժեք իր փոխանցելով և այլն: Ընդ որում, տվյալ դեպքում պատասխանատվության են ենթարկվում նշված վճարումները կամ բարիքներն ինչպես տվողները, այնպես էլ ստացողները (տուժողին վերահսկող անձինք):

Մարդու թրաֆիքինգի նպատակը մարդու շահագործումն է: Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 132-րդ

հոդվածի չորրորդ մասի համաձայն շահագործում են համարվում այլ անձի՝ պոռնկության շահագործումը կամ սեքսուալ շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելը, առքը կամ վաճառքը, օրգանները կամ հյուսվածքները վերցնելը: Ընդ որում, մարդու թրաֆիքինգի առկայության համար պարտադիր չէ, որ անձը անպայմանորեն շահագործված լինի: Բավական է, որ անձը շահագործման նպատակով ենթարկված լինի քննարկվող հոդվածում նշված գործողություններից որևէ մեկին՝ սահմանված եղանակներից ցանկացածի օգտագործմամբ: Հետևաբար, մարդու թրաֆիքինգն առկա է նախքան զոհի փաստացի շահագործումը:

Պոռնկությունը վճարի դիմաց պատահական, արտաամուսնական սեռական այնպիսի հարաբերությունների մեջ մտնելն է, որոնք հիմնված չեն անձնական համակրանքի, զուգընկերոջ հանդեպ սեռական հակումների վրա:

Պոռնկության ներգրավելը որպես շահագործում նշանակում է, որ մարմնավաճառին սեռական հարաբերություններ ունենալուն հարկադրելով կամ պարտադրելով՝ երրորդ անձինք որոշակի շահ են ստանում: Ընդ որում, շահը տվյալ դեպքում կարող է լինել նաև ոչ նյութական բնույթի: Օրինակ՝ երբ մարմնավաճառին մատուցում են որպես նվեր, առանց դրա դիմաց որևէ վարձատրություն ստանալու: Մարմնավաճառության շահագործումն առկա է ոչ միայն այն դեպքում, երբ մարմնավաճառից ամբողջությամբ վերցնում են մատուցած սեռական ծառայությունների դիմաց վճարված գումարը կամ չեն վճարում նրան, այլև այն դեպքում, երբ նա ստանում է այդ գումարի մի մասը, որը, որպես կանոն, չնչին է լինում:

Սեռական այլ շահագործումը նշանակում է, որ շահ ստանալու նպատակով տուժողին ստիպում են սեռական բնույթ կրող, բայց պոռնկություն չհանդիսացող գործողություններ կատարել: Օրինակ՝ զբաղվել մերկապարով, նկարահանվել էրոտիկ ամսագրերում կամ տեսաֆիլմերում և այլն: Ընդ որում, սեռական շահագործումը հաճախ կարող է զուգորդվել նաև բռնաբարությամբ, սեքսուալ բնույթի բռնի գործողություններով կամ սեքսուալ բնույթի գործողությունների հարկադրելով:

Հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ինչպես նաև ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելը մեկնաբանկվել է համապատասխան կոնվենցիաների շրջանակներում:

Առք ու վաճառքի դեպքում անձի շահագործումն իրականացվում է նրան վերավաճառելու միջոցով, երբ հանցագործը տուժողին ընկալում է որպես «ապրանք» և եկամուտ ստանալու աղբյուր:

Մարդկանց շահագործումը նրանց մարմնի մասերը կամ հյուսվածքները վերցնելու (օգտագործելու) նպատակով նույնպես մեծ վտանգավորություն է ներկայացնում, ընդ որում, այդ նպատակով մարդկանց շահագործման դեպքերը հատկապես զարգացող երկրներում ավելի լայն տարածման միտում ունեն:

Պոռնկության, սեռական շահագործման այլ ձևերի մեջ ներքաշել, հարկադիր աշխատանքի կամ ծառայությունների մեջ ներգրավել, ստրկության կամ դրան նմանվող վիճակի մեջ դնել կամ պահել ասելով պետք է հասկանալ տուժողին համապատասխան գործունեությամբ զբաղվելուն կամ այն շարունակելուն հարկադրելը, հակելը կամ դրդելը: Ընդ որում, տվյալ դեպքում անհրաժեշտ է, որ նշված գործողությունները կատարվեն բռնություն գործադրելու կամ դա գործադրելու սպառնալիքի կամ հարկադրանքի այլ ձևերի, առևանգելու, խարդախության, վիճակի խոցելիությունն օգտագործելու, ինչպես նաև տուժողին վերահսկող անձի համաձայնությունը ստանալու համար վճարումներ կամ բարիքներ տալու կամ ստանալու միջոցով:

Կարևոր է հիշել, որ մարդու թրաֆիքինգը համարվում է առկա անգամ այն դեպքում, երբ դեռ ռեալ շահագործում չեն հասցրել իրականացնել, բայց շահագործման նպատակով կատարվել են վերը նշված գործողությունները՝ օգտագործելով սահմանման մեջ նշված միջոցները:

ԳԼՈՒԽ 3.

ՄԱՐԴՈՒ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆ ՆՊԱՍՏՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Մարդու թրաֆիքինգ և շահագործում երևույթի պատճառների ու դրան նպաստող գործոնների իմացությունը կարևոր է այդ երևույթի կանխարգելման ու դրան չենթարկվելու համար: Պատճառների բացահայտումը պարզ է դարձնում, թե ինչու, չնայած միջազգային հանրության միավորված ջանքերին, մարդու թրաֆիքինգ և շահագործում երևույթը դեռևս կա, այն էլ՝ մեծ մասշտաբներով: Թրաֆիքինգին նպաստող գործոնների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հասկանալ հավաքագրողների հոգեբանությունը, նրանց մանիպուլյացիաների որոշ մեխանիզմներ և պաշտպանված լինել դրանցից՝ չդրսևորելով անզգույշ, տվյալ դեպքում՝ վիկտիմ վարք: Ստորև կխոսվի մարդու թրաֆիքինգին նպաստող մի շարք հանգամանքների մասին:

Ա. Տնտեսության գլոբալացումը

Տնտեսության և առևտրի գլոբալացումը, լինելով արդի հասարակական զարգացման օրինաչափ գործընթաց, ունի դրական և բացասական ազդեցություններ: Բացասական ազդեցություններից մեկն էլ այն է, որ դրա հետևանքով բարենպաստ ֆոն է ստեղծվում մարդու թրաֆիքինգի ծավալման համար: Շնորհիվ միջազգային տնտեսական կապերի ընդարձակման շուկան ավելի ճկուն ու շարժունակ է դառնում: Անհատ անձինք և ձեռնարկություններն այլևս ստիպված չեն արտադրել և վաճառել ապրանքներն ու ծառայությունները միայն իրենց հայրենիքում, այլ կարող են դա անել աշխարհի ցանկացած վայրում, որտեղ դա առավել շահութաբեր է: Արտադրանքը տեղափոխվում է այն շրջան, որտեղ

դրա ծախսերը նվազագույնն են: Զարգացած երկրների բազմաթիվ հայտնի ձեռնարկություններ արդեն տեղափոխել են իրենց արտադրամասերը այսպես կոչված երրորդ աշխարհի երկրներ կամ մտածում են այդ հարցի շուրջ: Այս դեպքում շահութաբերության հիմնական գործոն է հանդիսանում էժան աշխատուժը, այսինքն՝ այն աշխատողները, որոնք համաձայն են աշխատանքի ոչ այնքան լավ պայմաններին, ցածր աշխատավարձին և սոցիալական երաշխիքի բացակայությանը: Սա ինքնըստինքյան մարդու թրաֆիքինգ չէ, բայց որոշ հանցագործ «ձեռներեցների» հնարավորություն է տալիս տվյալ երկրներում համանմանորեն «բացել աշխատատեղեր» այդտեղ գտնվող անկանոն միգրանտների կամ որակավորում չունեցող աշխատուժի համար՝ անխղճորեն շահագործելով վերջիններին:

Երբեմն էլ ոչ թե արտադրությունն է տեղափոխվում էժան աշխատուժի մոտ, այլ մնալով տվյալ երկրում, կարող է օգտվել այնտեղ առկա էժան աշխատուժից: Զարգացած երկրներից շատերում կան բազմաթիվ աշխատանքային, այդ թվում նաև՝ անկանոն միգրանտներ, որոնց առկայությունը գայթակղում է որոշ «գործարարների» դիմել նրանց շահագործմանը: Հարկ է նշել, որ էժան աշխատուժի ներկրումը բերում է մրցակցության բարձրացման, ինչն իր հերթին նպաստում է աշխատուժի էժանացմանը, որն էլ ավելի է սրում մարդկանց շահագործումը:

Տրանսպորտի զարգացումն ու մատչելիությունը հնարավորություն են տալիս մարդկանց մեծ մասշտաբներով տեղափոխվելու երկրագնդի տարբեր վայրեր: Զարգացման այս դրական միտումն իր հերթին հնարավորություն է ընձեռում հանցագործ տարրերին աննախընթաց զարգացում ապրող օրինական տուրիզմին զուգահեռ կազմակերպել սեքս-տուրիզմի ու տրանսպլանտացիոն տուրիզմի ապօրինի շուկա: Որոշ երկրներում կա կույս աղջիկների առաջին գիշերվան տիրանալու պահանջարկ, ինչը խթանում է հանցագործ տարրերի շահագրգռվածությունը զբաղվելու նման գործունեությամբ:

Բ. Տարբեր պետությունների և տարածաշրջանների տնտեսական և իրավական անհավասարությունը

Տարբեր պետությունների և տարածաշրջանների տնտեսական և իրավական անհավասարությունը վերը նշված հանգամանքի առավել մասնավորեցումն է: Զարգացած պետությունների առկայությունը և դրանցում մարդու տնտեսական ու իրավական պաշտպանվածությունը աղքատ երկրների բնակչության համար գայթակղության հիմք են դառնում: Պետք է հաշվի առնվի նաև այն հանգամանքը, որ երբեմն զարգացող երկրների տնտեսական վիճակը վատանում է պետական հեղաշրջումների, քաղաքացիական պատերազմների, արտաքին թշնամիների հետ պատերազմների արդյունքում, որոնք տևում են տասնամյակներ: Աղքատությանն ու սովին գումարվում է վախը սեփական և երեխաների ապագայի համար: Հեռանկարի բացակայությունը և դժվարին պայմանները բարձրացնում են մարդու թրաֆիքինգին ենթարկվելու հավանականությունը: Ընտանիքը պահելու համար այլընտրանք չունենալով՝ մարդիկ դիմում են ամեն միջոցի, որպեսզի հայտնվեն բարձր կենսամակարդակ ունեցող երկրներում: Այդ միջոցներից ամենատարածվածն անկանոն միգրացիան է, որն ինքնըստինքյան մարդու թրաֆիքինգ չէ, բայց անկանոն միգրանտները առավել մեծ հավանականությամբ են համալրում մարդու թրաֆիքինգի ռիսկի խումբը՝ հայտնվելով ստրկության կամ դրան համանման իրավիճակների մեջ և հնարավորություն չունենալով օգնության համար դիմելու այն երկրների իշխանություններին, որտեղ իրենք գտնվում են:

Շուկայական տնտեսության պայմաններում գործատուների համար շատ կարևոր է աշխատուժի հաշվին կրճատել իրենց ծախսերը: Խոշոր արդյունաբերական կազմակերպությունները ինչպես Եվրոպայում, այնպես էլ Ամերիկայում, հաճախ իրենց գործարանները տեղափոխում են երրորդ երկրներ, որտեղ աշխատավարձը անհամեմատ ցածր է, քան իրենց հայրենիքում: Փոքր և միջին բիզնեսով զբաղվող կազմակերպությունները չեն կարող իրենց թույլ տալ արտադրությունը տեղափոխել այլ երկիր, սակայն կարող են գտնել ցածր վարձատրվող աշխատուժ: Էժան աշխատուժ են համարվում աշխատավոր միգրանտները, որոնք

համաձայն են աշխատել այնպիսի ցածր աշխատավարձով, որով չէին աշխատի տեղացի բնակիչները: Երբեմն մարդկանց ստիպում են աշխատել առանց վճարի՝ խաբեության կամ ահաբեկության ճանապարհով: Շատ ինքնակոչ ձեռնարկություններ գործում են օրենքի սահմաններից դուրս և չեն հետևում աշխատանքային օրենսդրությանը: Նրանք չեն ապահովում առողջության ապահովագրումը, ամենամյա արձակուրդը և լիարժեք չեն վճարում հարկերը: Զարգացած երկրներից ոչ մի քաղաքացի չէր համաձայնի աշխատել այդպիսի պայմաններում, այդ պատճառով պետք է գտնել միգրանտներ աղքատ երկրներից: Բացի նրանից, որ արտադրության ծախսերի կրճատման անհրաժեշտությունը բարձրացրեց միգրանտների աշխատուժի պահանջարկը, բարձրացել է նաև տնային պայմաններում աշխատող օտարերկրյա կանանց պահանջարկը: Քանի որ Արևմուտքի զարգացած որոշ երկրների բնակչությունը ծերանում է, աճել է ծերերին խնամող տնային աշխատողների պահանջարկը: Այդ աշխատանքները իրականացնելու համար հարկավոր է կանանց աշխատուժ: Սա ինքնըստինքյան չի նշանակում մարդու թրաֆիքինգի և շահագործման առկայություն, բայց հանգամանք է, որն անուղղակիորեն կարող է նպաստել դրան:

Որոշ երկրներում գոյություն ունի մանկական աշխատուժի շուկա: Երխաների աշխատանքը շատ երկրներում օրենքից դուրս է: Երեխաները կարող են աշխատել սկսած որոշակի տարիքից և ոչ լրիվ աշխատանքային օր: Բայց, ցավոք, մանկական աշխատուժն ավելի ցածր է վարձատրվում, և երեխաներին ավելի հեշտ է շահագործել, քան մեծահասակներին: Որոշ երկրներում տարածված է երեխաների շահագործումը բամբակի արտադրության մեջ և տնային աշխատանքներում: Հաճախ երեխաներին բռնի ներգրավում են մուրացկանության կամ այլ հակասոցիալական գործունեության մեջ:

Սեռական շահագործման կայուն գործոն է համարվում որոշ երկրներում կանանց անհամեմատ վատ տնտեսական վիճակը: Աղքատության, այսպես կոչված, ֆեմինիզացման հիմքում ընդհանուր իմաստով ընկած է սեռերի անհավասարությունը, իսկ ավելի կոնկրետ՝ կանանց և տղամարդկանց կողմից կատարվող աշխատանքների նկատմամբ խտրականությունը և նշված

աշխատանքների դիմաց վճարման տարբերությունը: Աղքատությունը նվազեցնում է կանանց ընտրության հնարավորությունը և նրանց ավելի խոցելի է դարձնում մարդու թրաֆիքինգի և շահագործման ենթարկվելու հարցում:

Գերակշռող ավանդական սեռային դերերի առկայության պատճառով տնային գործերի կատարման, երեխաների և ծերերի խնամքի պատասխանատվությունը բաժին է ընկնում կանանց: Աղքատության ֆեմինիզացմանը զուգընթաց վատանում են նաև երեխաների կենսապայմանները, ինչն անուղղակիորեն բերում է նրան, որ երեխաներն էլ են հայտնվում մարդու թրաֆիքինգ և շահագործում իրականացնողների հետաքրքրությունների կենտրոնում:

Աշխատանքային շահագործման գործոն է աղքատությունն ընդհանրապես, քանի որ ծայր աստիճան աղքատության պատճառով է, որ տղամարդիկ ստիպված են լինում, անգամ հասկանալով առկա վտանգները, համաձայնել աշխատելու իրենց երկրից դուրս՝ երբեմն ենթարկվելով մարդու թրաֆիքինգի:

Երեխաներին նույնպես «աշխատանքի» են ուղարկում ընտանիքի աղքատությունից դրդված:

Գ. Գիտության, մասնավորապես բժշկության զարգացման հետևանքով մարդկանց օրգանների և հյուսվածքների փոխպատվաստման հնարավորությունը

Ինքնին լինելով դրական և հնարավորություն տալով երկարացնելու մարդու կյանքն ու վերականգնելու առողջությունը՝ այս երևույթը նույնպես անուղղակիորեն նպաստում է մարդու թրաֆիքինգին: Ինչպե՞ս: Արդեն ակնհայտ է, որ որոշ օրգանների և հյուսվածքների համար վճարել կարողացողների թիվն ավելի մեծ է, քան դրանց մատակարարողների թիվը: Այսինքն՝ կա ավելցուկային պահանջարկ, որի հետևանքով օրգանների և հյուսվածքների գներն աճում են ու գայթակղում արագ ու հեշտ հարստանալ ցանկացող որոշ տարրերի:

Ըստ 2016 թվականի տվյալների՝ միայն ԱՄՆ-ում մոտ 120000 հիվանդ հերթագրվել է տարբեր օրգանների փոխպատվաստումների

համար:[6] Սպասելու միջին ժամկետը կարող է կազմել երեքից տասը տարի: Հերթագրված հիվանդների 15-30 տոկոսի ողջ մնալու հավանականությունը շատ փոքր է մինչև իրենց հերթը հասնելը: Օրգաններ գնելու գործում ավելի շատ հետաքրքրված են զարգացած երկրների քաղաքացիները: Նրանք ի վիճակի են վճարել և շատ թանկ են գնահատում իրենց առողջությունը: Շատ երկրների (այդ թվում՝ Հայաստանի) օրենսդրության համաձայն՝ կենդանի դոնորները կարող են տալ իրենց զույգ օրգաններից մեկը միայն մերձավոր ազգականներին: Անթույլատրելի է վճարել կամ գումար պահանջել տվյալ օրգանի դիմաց, քանի որ մարդկային օրգանների առևտուրը ՀՀ-ում արգելված է:

Մարդկային օրգանների մեծ պահանջարկը և նրա սահմանափակ առաջարկը հայտնի է կազմակերպված հանցավոր խմբերին, որոնք օգտագործում են այդ իրավիճակը և ճնշում են գործադրում սոցիալապես անապահով մարդկանց վրա՝ ստիպելով նրանց վաճառել իրենց օրգանները: Հայտնի են այնպիսի դեպքեր, երբ ցանկալի արդյունքի հասել են բռնության ճանապարհով:

Դ. Թրաֆիքինգի պոտենցիալ զոհերի վիկտիմ վարքը

(Կարող է օգտագործվել որպես բաշխման նյութ 6-րդ դասի համար)

«Վիկտիմ» բառը լատիներեն ծագում ունի և նշանակում է զոհ: ***Վիկտիմությունն*** *այնպիսի վարք է, որի դեպքում համեմատաբար հեշտ են դառնում հանցագործության զոհ կամ հանդես են բերում անկարողություն՝ խուսափելու այնպիսի վտանգից, որից օբյեկտիվորեն կարելի էր խուսափել*: Վիկտիմությունը մարդու ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական այնպիսի հատկանիշներն են, որոնց արդյունքում մարդը կարող է հանցագործության զոհ դառնալ:[7]

---

[6] Տե՛ս **The Organ Procurement and Transplantation Network (OPTN) կայքը.** http://optn.transplant.hrsa.gov/

[7] Վիկտիմության մասին առավել մանրամասն տե՛ս. Франк Л.В. Виктимология и виктимность. Об одном новом направлении в теории и практике борьбы с преступностью: Учебное пособие.– Душанбе, 1972:

Վիկտիմ վարքը մարդու այն վարքագիծն է, որը կարող է դրդապատճառ հանդիսանալ իր նկատմամբ հանցագործություն կատարելու, այսինքն՝ այն վարքագիծը, որի ընթացքում անձն իրեն վտանգի է ենթարկում (հաճախ՝ ոչ գիտակցաբար):

Անհատական վիկտիմություն ասելով հասկանում ենք անձի ընդունակությունը ձևավորելու այնպիսի նպաստավոր պայմաններ կամ ակտիվորեն նպաստելու այնպիսի պայմանների ստեղծմանը, որոնք հանգեցնում են հանցագործության: Օրինակ՝ երեխան, որը պարբերաբար փախնում է տանից, զբաղվում է թափառաշրջիկությամբ, չի վստահում ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին թիրախային է թրաֆիքինգի տեսանկյունից, քանի որ նրան հեշտությամբ կարելի է հրապուրել և ներգրավվել շահագործման մեջ:

Առանձնացվում են վիկտիմության հետևյալ տարատեսակները՝

ա) *անհատական վիկտիմություն՝* որպես մարդկանց հարաբերական «հակվածություն» հանցագործության տեսակներից մեկին՝ բռնաբարված, խաբված, կողոպտված լինելու հանցագործի կողմից:

բ) *զանգվածային վիկտիմություն՝* որպես գոյություն ունեցող իրական հնարավորություն բնակչության որոշակի զանգվածի համար իրենց սուբյեկտիվ հատկանիշներին համապատասխան ֆիզիկական, հոգեբանական և նյութական վնաս կրել հանցագործությունների հետևանքով:

Վիկտիմությունը կարելի է գնահատել նաև այլ չափանիշներով, օրինակ, տուժողի մասնագիտական պատկանելիությամբ՝ մերկապարուհիներ, մարմնավաճառներ և այլն: Նման վիկտիմությունն անվանում են խմբային: Վիկտիմությունը չի նշանակում, որ տուժողի վարքագիծն անբարոյական է կամ անօրինական, այլ դա կարելի է բնութագրել որպես անձին բնորոշ հատկանիշների համակցություն, որոնք նրան դարձնում են հանցագործության հավանական զոհ: Օրինակ՝ մարդը կարող է հանցագործության զոհ դառնալ իր չափից դուրս վստահության հետևանքով՝ կախված տարիքից (մանկահասակներ), մասնագիտությունից (մերկապարուհի և այլն), որը դեռևս չի խոսում

տուժողի ոչ պատշաճ վարքագծի կամ բացասական կողմերի մասին:

Մարդու վարքագիծը բնությունից օժտված կարող է լինել վիկտիմ, այսինքն՝ ռիսկային, անզգույշ, թեթևամիտ, չմտածված, պրովոկացիոն կամ իր համար շատ վտանգավոր հատկանիշներով:

Շատ հանցագործություններ, այդ թվում՝ մարդու թրաֆիքինգը և շահագործումը, որպես կանոն, կատարվում են՝օգտվելով տուժողի վիկտիմ վարքից՝ իր և այլ անձանց (պատվի և արժանապատվության, ինչպես նաև ունեցվածքի) նկատմամբ թեթևամիտ և անզգույշ վերաբերմունք, իրավապահ մարմինների հետ համագործակցելու ցանկության բացակայություն, անօրինական գործարքների մեջ մտնելու համաձայնություն, չմտածված վերաբերմունքի ցուցաբերում: Ինչ խոսք, հանցագործության համար պատասխանատվություն են կրում այն իրականացնողները, պարզապես վիկտիմ վարք հանդես չբերելը կմեծացնի պոտենցիալ զոհի թրաֆիքինգի զոհ չդառնալու հավանականությունը:

Այսինքն, շատ հանցագործություններ կարող էին և չկատարվել, եթե պոտենցիալ զոհը ցուցաբերեր զգուշություն և պատրաստ լիներ հանձն առնել գործողություններ վտանգը կամ հանցագործությունը կանխարգելելու համար:

Մարդու թրաֆիքինգի և շահագործման պոտենցիալ զոհերը հանդես են բերում վիկտիմություն, երբ.

- Ծանոթների և պատահական մարդկանց առաջարկներին ու խոստումներին հավատում են առանց բավարար հիմքերի:
- Արտերկրում աշխատանքի տեղավորվելու հայտարարությունների հանդեպ ոչ քննադատական մոտեցման արդյունքում, առանց դրանց արժանահավատությունը ստուգելու վստահում են դրանց:
- Ամուսնական առաջարկություններին դյուրահավատորեն և հապճեպ համաձայնում են:
- Անվերապահորեն հավատում են համացանցում տեղակայված տեղեկատվությանը:

Հիշե՛ք, ողջամիտ կասկածներն ու քննադատական միտքը կօգնեն վիկտիմ վարք հանդես չբերել և չխաբվել: Ասվածն, ինչ խոսք, չի նշանակում նաև հակառակ ծայրահեղությանը հակվելը և խիստ

կասկածամտություն հանդես բերելը: Որոշումների կայացումը պետք է լինի ողջամտության և բավարար հիմքեր ունենալու պարագայում:

Հիշե՛ք, որ հավաքագրողները բավական հմտացած են մարդկանց հոգեբանության վրա ազդելու, նրանց երազանքների, հետաքրքրությունների վրա մանիպուլյացիաներ անելու մեջ: Երբ սկսում են սարեր խոստանալ շատ կարճ ժամանակահատվածների համար, պետք է խելամիտ կասկած ու զգուշություն հանդես բերել, չտրվելով անհարկի խուճապին ու մերժողականությանը:

Ներկայումս մարդկությունն ապրում է գլոբալ հարաբերությունների դարաշրջանում և ինտենսիվ տեղաշարժումն իրականություն է: Խնդիրն այն է, որ առաջարկները քննվեն առողջ քննադատական մտածողությամբ՝ իրազեկ լինելով որոշ դարանակալող հնարավոր վտանգների մասին:[8]

[8] Մարդու թրաֆիքինգի կանխարգելման մասին խոսք կլինի հաջորդ բաժնում, որտեղ կտրվեն մի շարք խորհուրդներ:

ԳԼՈՒԽ 4.

ՄԱՐԴՈՒ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ

Ա. «Մարդու թրաֆիքինգի կանխարգելում» հասկացությունը

Մասնագիտական գրականության մեջ (քրեագիտություն) «*հանցագործության կանխարգելում*» հասկացությունը սահմանվում է որպես միջոցառումների և դրանք իրականացնող սուբյեկտների այնպիսի համակարգ, որը ենթադրում է՝

- հանցագործության և նրա առանձին տեսակների պատճառների, ինչպես նաև նպաստող պայմանների հայտնաբերում, վերացում և չեզոքացում,
- որոշակի տարածքում հանցագործության կատարման անմիջական շարժառիթների հայտնաբերում և վերացում,
- ազգաբնակչության կազմում հանցագործության զոհ դառնալու իմաստով բարձր ռիսկային խմբերի հայտնաբերում,
- այնպիսի անձանց հայտնաբերում, որոնց վարքը վկայում է նրանց կողմից հանցագործության կատարման հավանականության մասին, և նրանց նկատմամբ զսպող և վերադաստիարակող միջոցառումների կիրառում (անհրաժեշտության դեպքում այդ միջոցառումները կարող են կիրառվել նաև նրանց մերձավոր անձանց նկատմամբ):[9]

Մարդու թրաֆիքինգի կանխարգելումը եռաշերտ գործընթաց է, որն իր մեջ ընդգրկում է՝

[9] Криминология/Под ред. В. Н. Кудрявцева.Москва, Юрист, 2002г. ст.279-280:

1. Երևույթների կանխում նախքան դրանց առաջացումը:

Պայքար կանանց, տղամարդկանց, երեխաների՝ սեռական, աշխատանքային և շահագործման այլ ոլորտներում, առաջարկի և պահանջարկի դեմ՝ այդ ծառայությունները գնողներին և տուժածներին տեղեկություններ տրամադրելով, իրականացնելով տնտեսական այնպիսի քաղաքականություն, որը զբաղվածության ավելի մեծ հնարավորություններ կընձեռի նրանց:

2. Աշխատանք դեպքերի թիվը նվազեցնելու ուղղությամբ:

- Միջամտության ծրագրերի իրականացում բարձր ռիսկային խմբերի շրջանում, ինչպիսիք են, օրինակ, գյուղական բնակավայրերի երիտասարդները, արտերկիր ուղևորվող կամ կրթություն չունեցող կանայք:
- Այցելություններ բարձր ռիսկային տնային տնտեսություններ:
- Իրավապահ և դատական մարմինների աշխատանքի ակտիվացում՝ շահագործողներին պատժելու համար:
- Այս ոլորտում որոշակի դերակատարություն ունեցող ձեռնարկությունների՝ օրինակ, տուրիստական գործակալությունների, աշխատանքի տեղավորման գործակալությունների, ծանոթությունների բյուրոների և ավիաընկերությունների, մուտքի թույլտվություններով զբաղվող հյուպատոսական ծառայությունների աշխատանքների պետական վերահսկողության սահմանում:
- Հանցագործների համար առավել խիստ պատիժների սահմանում:

3. Դեպքերի ծավալների և վնասակար հետևանքների նվազեցում:

Իրավապահ մարմինների աշխատանքի ակտիվացում, տուժածների վերականգնում և նույն անձանց՝ կրկին թրաֆիքինգի և շահագործման ենթարկվելու և կրկին տուժողի կարգավիճակում հայտնվելու դեպքերի կանխում:[10]

[10] Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքար իրականացնող իրավապահ մարմինների վերապատրաստման կարիքների գնահատման զեկույց: Երևան, 2007, դեկտեմբեր, էջ 21:

Բ. Մարդու թրաֆիքինգի և շահագործման կանխարգելման միջոցառումները

Ինչպես երևում է վերը նշվածից, մարդու թրաֆիքինգի կանխարգելումը նախատեսում է ինչպես ընդհանուր պետական միջոցառումներ՝ տնտեսական, սոցիալական, գաղափարախոսական, իրավական և կրթական-դաստիարակչական, այնպես էլ հատուկ, որոնք իրականացվում են իրավապահ մարմինների կողմից:

Մ. Բանդուրկան առանձնացնում է մարդու թրաֆիքինգի կանխարգելման հետևյալ միջոցառումները՝

- ազգաբնակչության շրջանում տարվող իրավական, քարոզչական և բացատրական աշխատանքները,
- մարդու թրաֆիքինգի և նրան նպաստող պայմանների ժամանակին հայտնաբերումը և չեզոքացումը,
- մեղավորների և տուժողների հայտնաբերմանն ուղղված օպերատիվ-հետախուզական գործունեության ակտիվացումը և մարդու թրաֆիքինգի դեմ պայքարում առկա թերությունների վերացումը,
- մարդու թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարում հասարակության և ոստիկանության ներգրավումը:[11]

Քննարկենք մարդու թրաֆիքինգի և շահագործման կանխարգելման մի շարք կարևոր միջոցառումներ և ռազմավարություններ:

1. Ով իրազեկված է, նա պաշտպանված է:

Այս կարգախոսն առավել քան արտացոլում է մարդու թրաֆիքինգի կանխարգելման բովանդակությունը, շեշտադրում մարդու թրաֆիքինգի և շահագործման վտանգի վերաբերյալ հասարակության տարբեր շերտերի իրազեկության մակարդակի բարձրացման անհրաժեշտությունը: Այն ենթադրում է՝

[11] Երեմյան Ա., Թումասյան Դ., Ղամբարյան Ա., Պետրոսյան Տ. Հայաստանի Հանրապետությունում մարդու թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի իրավական հիմունքները: Երևան, 2011թ., էջ 224:

- ազգաբնակչության, հատկապես նրա ռիսկային, խոցելի խմբերի ու պոտենցիալ զոհերի իրազեկության մակարդակի բարձրացում,
- տուրիստական, ամուսնական կամ աշխատանքային գործակալությունների (որոնք առաջարկում են համապատասխան ծառայություններ արտերկրում) աշխատակազմի իրազեկության բարձրացում,
- բնակչության հետ անմիջական կապի մեջ գտնվող պետական կառույցների, իրավապահ մարմինների իրազեկության բարձրացում,
- ՁԼՄ-ների աշխատակիցների՝ մարդու թրաֆիքինգի և շահագործման վերաբերյալ իրազեկության բարձրացում և այլն:

Մասնավորապես, ազգաբնակչության խոցելի, ռիսկային խմբերին պետք է տրամադրել տեղեկատվություն՝

- թրաֆիքինգով զբաղվողների կողմից կիրառվող հավաքագրման մեթոդների մասին,
- այլ երկրներ մուտք գործելու օրինական պահանջների և այնտեղ աշխատելու հնարավորությունների վերաբերյալ,
- սեռական ճանապարհով փոխանցվող, սեռական ծառայությունների մատուցմամբ ու շահագործմամբ պայմանավորված տարաբնույթ հիվանդությունների մասին,
- այն կազմակերպությունների մասին, որոնց կարող են դիմել տեղեկատվություն և աջակցություն ստանալու նպատակով:

Ընդ որում, հասարակության տարբեր շերտերի իրազեկության աստիճանը բարձրացնելուն ուղղված տեղեկատվական-լուսավորչական աշխատանքները պետք է իրականացվեն ինչպես կոնկրետ՝ թրաֆիքինգի երևույթի վերաբերյալ, որպես մարդկության արդի հրատապ հիմնախնդիր, այնպես էլ առավել լայն՝ քաղաքացիական հասարակության, մարդու իրավունքների, սեռերի հավասարության տեսանկյունից:

Վերջինիս համատեքստում ուշադրության են արժանի հասարակության մեջ արմատավորված կարծրատիպերն ու պատկերացումները:

Այսպես, մարդու թրաֆիքինգի և շահագործման կանխարգելման առումով կարևոր է վերլուծել հասարակության պատկերացումները կանանց և տղամարդկանց դերերի ու պարտականությունների, նրանց վարքի, արժեքային համակարգի և աշխատանքի սեռային բաժանման վերաբերյալ, հասկանալ, թե դրանցից որո՞նք են վերածվել կարծրատիպերի՝ մասնավորապես մեծացնելով թրաֆիքինգի և շահագործման զոհ դառնալու վտանգը:

Կնոջ, ընտանիքի մոր կերպարը մեր հասարակության մեջ ենթադրում է մի շարք հատկանիշների և դերերի պարտադիր առկայություն. բարոյական, համեստ, հնազանդ, օջախի պահապան, երեխաների խնամատար ու դաստիարակ և այլն: Իսկ տղամարդու, ընտանիքի հոր կերպարը ենթադրում է լինել ուժեղ, առնական, ընտանիքի ֆիզիկական, սոցիալական և նյութական ապահովության երաշխավոր:

Թեև ընտանիքի նյութական ապահովման պարտականությունը հիմնականում վերապահվում է տղամարդուն, սակայն սոցիալ-տնտեսական ծանր պայմանների հետևանքով այդ բեռը մասամբ կամ երբեմն էլ ամբողջությամբ դրվել է նաև կնոջ ուսերին: Միչդեռ այրի, միայնակ, ամուսնալուծված, նաև կրթություն, մասնագիտական հմտություններ և աշխատանք գտնելու այլ հնարավորություններ չունեցող կանայք, որպես կանոն, ընտանիքի կենսապահովման սահմանափակ ընտրություն են ունենում, ուստի առավել խոցելի են մարդու թրաֆիքինգի և շահագործման տեսանկյունից:

Տնտեսական այնպիսի պայմաններում, երբ բարձր է գործազրկությունը, տղամարդիկ, ումից հասարակությունն ակնկալում է ընտանիքի համար հիմնական «ապրուստ հայթայթողի» դերակատարում, նույնպես հաճախ խաբվում են տղամարդկանց բնորոշ աշխատանքի առաջարկներով՝ հիմնականում շինարարության բնագավառում:

Թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց համար սեռական և/կամ աշխատանքային ստրկության, հարկադիր աշխատանքի ամոթը և խարանը չեն համապատասխանում վարքի սոցիալապես ընդունված նորմերին: Նրանց գործողություններն ընդունելի չեն և հակասում են «բարոյական» կնոջը և «առնական» տղամարդուն ներկայացվող ակնկալիքներին, հասարակության սպասելիքներին:

Որպես հետևանք՝ կանայք ու տղամարդիկ հայրենիք վերադառնալուց հետո չեն բացահայտում իրենց հետ տեղի ունեցածը՝ նախընտրելով մնալ անհայտ և էապես չօգնել քրեական գործերի քննությանը:

Կարծրատիպի և խտրականության դրսևորում է նաև թրաֆիքինգի և շահագործման ենթարկված կանանց մարմնավաճառ անվանելը, իսկ «մարդու թրաֆիքինգի կազմակերպիչ» արտահայտության փոխարեն, որպես հոմանիշ, անփութորեն «կավատ» բառն օգտագործելը: Կանխակալության մասին է վկայում նաև հաճախ արտահայտվող այն կարծիքը, թե մարդու թրաֆիքինգի ենթարկվող կանայք մինչ այդ էլ մարմնավաճառներ էին, կամ գիտեին, թե իրենց ինչ է սպասվում, ուստի համաձայն էին շահագործվելու:

Հետևաբար, հասարակության մեջ արմատավորված կարծրատիպերի և մոտեցումների փոփոխումը, կարեկցանքի և ըմբռման ձևավորումը և այն փաստի գիտակցումը, որ մարդու թրաֆիքինգը և շահագործումը մարդու իրավունքների կոպիտ խախտում է, թրաֆիքինգի դեմ տեղեկատվական կանխարգելիչ միջոցառումների կարևոր բաղադրիչներից մեկն է:

Հարկ է նկատի ունենալ, որ հասարակության մեջ արմատավորված կարծրատիպերը «կոտրելը» ու պատկերացումներն ու մոտեցումները փոփոխելը տևական և լուրջ աշխատանք են պահանջում: Մասնավորապես, բնակչության շրջանում հարկ է ձևավորել դիրքորոշումներ այն մասին, որ՝

- մարդու թրաֆիքինգը և շահագործումը չպետք է հավասարեցվի մարմնավաճառության հետ,
- զոհերի համաձայնությունը չունի հիմնավորում, երբ մարդու թրաֆիքինգ և շահագործում իրականացնողները կիրառում են մարդու թրաֆիքինգի սահմանման մեջ մեջբերված միջոցները անձին թրաֆիքինգի ենթարկելու համար,
- հարկադրական մարմնավաճառությունը մարդու թրաֆիքինգի և շահագործման միակ ձևը չէ, գոյություն ունեն նաև աշխատանքային շահագործում, հարկադիր մուրացկանություն, հարկադիր զինվորական ծառայություն, մարմնի օրգանների առևտուր, պարտապանի ստրկացում և այլ ձևեր,

- տղամարդիկ նույնպես կարող են դառնալ մարդու թրաֆիքինգի և շահագործման զոհեր:

Մարդու թրաֆիքինգի և շահագործման վտանգի վերաբերյալ բնակչության հետ անմիջական կապի մեջ գտնվող պետական և հասարակական կառույցների իրազեկության մակարդակը բարձրացնելու նպատակով ևս նախատեսվում են *մարդու թրաֆիքինգի հարցերով դասընթացներ և ուսուցողական ծրագրեր, վերապատրաստման դասընթացներ,* մարդու թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի, ինչպես նաև հանրապետությունում տրամադրվող սոցիալական աջակցության, զբաղվածության և առողջապահական անվճար ծառայությունների մասին նյութերի տրամադրում, միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ համատեղ «կլոր սեղանների», տարբեր ռազմավարական քննարկումների, սեմինարների անցկացում:

Միգրացիայի միջազգային կազմակերպությունը (ՄՄԿ) իրականացնում է տեխնիկական համագործակցություն կառավարությունների և ոչ կառավարական կազմակերպությունների հետ տարբեր ծրագրերի իրականացման միջոցով, որոնց նպատակն է զորացնել կառավարությունների և քաղաքացիական հասարակության հաստատությունների կարողությունները մարդու թրաֆիքինգի և շահագործման խնդրիներն առավել արդյունավետ լուծելու համար: Այս համագործակցությունն ընդգրկում է՝

- ՀԿ-ների, պետական պաշտոնյաների, իրավապահ մարմինների վերապատրաստում,
- մարդու թրաֆիքինգի և շահագործման վերաբերյալ օրենսդրության, քաղաքականության ու ընթացակարգերի մշակման և կառուցվածքային բարելավումների գործում տեխնիկական աջակցություն:

2. Զանգվածային լրատվական միջոցների (ԶԼՄ) դերի բարձրացում:

Նկատի ունենալով ԶԼՄ-ների հույժ կարևոր դերը մարդու թրաֆիքինգի դեմ պայքարի գործընթացում՝ որպես պարտադիր պայման հարկավոր է ընդգծել թրաֆիքինգին վերաբերող և ԶԼՄ-

ներում ներկայացված տեղեկությունների ամբողջական և ճշգրիտ լինելը: Զանգվածային լրատվական միջոցների դերի բարձրացումն առաջին հերթին ենթադրում է պետական և մասնավոր հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից համատեղ երկարաժամկետ և կայուն աշխատանքային կանոնակարգի մշակում՝ ուղղված մարդու թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի արտացոլմանը, այդ թվում՝ հատուկ հաղորդումների, հայտարարությունների, թեմատիկ ֆիլմերի և տեսահոլովակների անվճար հեռարձակման, սոցիալական գովազդի և ուղերձների միջոցով: Անհրաժեշտ է, որ ՁԼՄ-ներում պարբերաբար արտացոլվեն մարդու թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի կազմակերպման նպատակով իրականացվող միջոցառումները, ապահովվեն այդ հարցերով զբաղվող անձանց մասնակցությունը հեռուստահաղորդումներին, ռադիոհաղորդումներին, մամլո ասուլիսներին, նրանց՝ հոդվածներով հանդես գալը: Մարդու թրաֆիքինգի և շահագործման հարցերով զբաղվող լրագրողների իրազեկության բարձրացման և այդ երևույթի մասին մատուցվող տեղեկատվության էթիկական և մասնագիտական մոտեցումների կազմավորման նպատակով հարկավոր է կազմակերպել սեմինարներ և դասընթացներ:

Ժամանակակից աշխարհն աչքի է ընկնում մեր կյանքում տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) դերի աննախադեպ աճով: Այսօր գաղտնիք չէ, որ այն իրավամբ վերածվել է հասարակությունները մոբիլիզացնող, հասարակական զարգացումներն ու շարժումներն ուղղորդող հզոր և գործուն միջոցի: Ուստի մարդու թրաֆիքինգի դեմ պայքարի գործում առավել քան արդյունավետ է ՏՀՏ-ների կիրառումը:

Մեր հանրապետությունում գնալով ավելի ու ավելի ամրապնդվում է համացանցից օգտվելու մշակույթը, ինչն էլ ենթադրում է թրաֆիքինգի կանխարգելման ժամանակակից միջոցառումներ՝ սոցիալական ցանցերում մարդու թրաֆիքինգի և դրա դեմ պայքարի հիմնախնդրի բարձրացում, ակտիվ քննարկումների ծավալում, համացանցի համապատասխան կայքէջերի (www.antitrafficking.am , www.iom.int/countries/armenia և այլն) արդիականացում, դրանցում զետեղված համապատասխան նյութերի մշտապես թարմացում և այլն:

3. Երեխաների շահագործման կանխարգելում:

Այս նպատակով Հայաստանի Հանրապետությունում նախատեսվում է շարունակել «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագիրը, որը, մասնավորապես, իրականացնում է մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին բնակարանով ապահովում և առաջնահերթության կարգով զբաղվածության պետական ծրագրերում ընդգրկում:

Այս գործին մեծապես կնպաստեն նաև մանկատների և հատուկ դպրոցների սոցիալական աշխատողների և անչափահասների գործերով ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցների համար հատուկ դասընթացների կազմակերպումը:

Երեխաների թրաֆիքինգը և շահագործումը կանխարգելող միջոցառումներում էական նշանակություն ունեն դպրոցականներին ու երիտասարդությանն ուղղված ուսումնական նյութերի (ծրագրեր, դասագրքեր, ֆիլմեր, տեսահոլովակներ, գովազդներ) մշակումն ու տարածումը, դասախոսությունների անցկացումը: Վերջիններս իրենց մեջ կընդգրկեն ինչպես ուղղակի, անմիջական գիտելիքներ և տեղեկատվություն մարդու թրաֆիքինգի և շահագործման վտանգների, դրանցից խուսափելու հնարավորությունների վերաբերյալ, այնպես էլ անձի խոցելիությունն ավելացնող գործոնների, մարդու իրավունքների, նրա արժանապատվության և ամբողջական կերպարի, սեռերի հավասարության, հանդուրժողականության վերաբերյալ առավել ընդհանրական գիտելիքներ և մոտեցումներ: Նպատակահարմար են նաև դեռահասների մասնագիտական կողմնորոշմանն ու մասնագիտության ընտրությանն ուղղված ուսուցումների կազմակերպումը:

4. Սոցիալ-տնտեսական ծրագրերի իրականացում:

Ելնելով այն իրողությունից, որ Հայաստանի Հանրապետությունում աղքատությունը և գործազրկությունը մարդու թրաֆիքինգին և շահագործմանը նպաստող կարևոր գործոններ են, նախատեսվում է զարգացնել բնակչության շրջանում իրականացվող

ծրագրերի սոցիալ-տնտեսական ուղղվածությունը, Հայաստանի Հանրապետությունում աղքատության նվազեցման ռազմավարական ծրագրում որպես բաղադրիչ մաս ընդգրկել նաև մարդու թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի միջոցառումները, հատկապես առավել խոցելի խմբերի համար, մարդու թրաֆիքինգի և շահագործման հետ կապված հարցերը ներառել նաև կոռուպցիայի դեմ պայքարի, գենդերային, զարգացման և այլ ծրագրերում:

Մասնավորապես, գործազուրկ և միգրանտ կանանց համար իրականացնել ձեռներեցությամբ զբաղվելուն նպաստող աջակցության ծրագրեր, գյուղական վայրերում ապրող կանանց զբաղվածության ապահովման ծրագրեր՝ դրանք զուգակցելով իրազեկության բարձրացմանն ուղղված ծրագրերով ու հրապարակումներով:

Աջակցել գործազուրկներին, կանանց և երիտասարդներին մասնագիտական կողմնորոշման հարցերում, նրանց համար կազմակերպել մասնագիտական ուսուցման դասընթացներ աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագիտությունների գծով:

Մարդու թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի և կանխարգելման վերը նշված միջոցառումները բխում են նրանից, որ մարդու թրաֆիքինգի կանխարգելմանն ուղղված ռազմավարությունը պետք է որպես հիմնապատճառ անդրադառնա պահանջարկին, իսկ պետություններն ու միջկառավարական կազմակերպությունները պետք է ապահովեն, որ իրենց միջամտություններն անդրադառնան մարդու թրաֆիքինգի նկատմամբ խոցելիությունը մեծացնող գործոններին, այդ թվում գենդերային անհավասարությանը, աղքատությանը և խտրականության բոլոր ձևերին:

Գ. Երիտասարդությունը՝ որպես մարդու թրաֆիքինգի և շահագործման ռիսկային խումբ (Կարող է օգտագործվել որպես բաշխման նյութ 5-րդ դասի համար)

Մարդու թրաֆիքինգի և շահագործման զոհեր հիմնականում դառնում են այն մարդիկ կամ մարդկանց այն խմբերը, որոնց կենսական դիրքորոշումները բավականին թույլ են մինչ մարդկանց առևտրի զոհ դառնալը: Այդ մարդիկ առնչվում են ռիսկի խմբին: Մարդու թրաֆիքինգի զոհ դառնալուն նպաստում են աղքատությունը, սեռային անհավասարությունը, երիտասարդությունը:

Ներկայացնենք և քննարկենք մի շարք գործոններ, որոնցով պայմանավորված է երիտասարդների շահագործման ռիսկի ավելացումը:

- *Բարձրագույն կրթությունը դառնում է չափանիշ, որի համար, սակայն, հարկավոր է վճարել:* Մի կողմից բարձրագույն կրթությունը ըստ մասնագիտության հեշտ աշխատանք գտնելու երաշխիք է, մյուս կողմից՝ բարձրագույն կրթության ոլորտում աստիճանաբար պետպատվերը վճարովի տեղերի համեմատ նվազում է: Շատ երիտասարդների ֆինանսական վիճակը թույլ չի տալիս միաժամանակ և՛ գոյություն պահպանել, և՛ վճարել ուսման համար:
- *Գործազրկությունը երիտասարդների շրջանում:* Հայաստանում գործազուրկների բավական մեծ տոկոս են կազմում 18-25 տարեկան երիտասարդները, որոնք չեն կարողանում աշխատանք գտնել՝ չնայած իրենց մեծ ցանկությանն ու աշխատասիրությանը: Պատճառներից մեկը գործատուների կողմից նախնական աշխատանքային փորձի առկայության պահանջն է:
- *Կախվածություն ալկոհոլից, թմրանյութերից, մոլախաղերից:* Երիտասարդ թմրամոլները, ալկոհոլամոլները, խաղամոլները մարդու թրաֆիքինգի և շահագործման շատ լավ թիրախ են, քանի որ նրանց վրա ազդելը, ներգործելը բավականին դյուրին է: Նրանք անմիջապես ծուղակն են ընկնում և հեշտությամբ դառնում են թրաֆիքինգի զոհեր:

- *Երիտասարդ կանանց դեպքում աշխատանքի շուկայում պաշտոնների սեռային սահմանազատումն ու խտրականությունը:* Հաճախ գործատուները նախընտրում են աշխատանքի վերցնել տղամարդկանց, այլ ոչ թե կանանց, քանի որ նրանց կարծիքով հղի կանայք և մայրերը չեն կարող անհրաժեշտ չափով նվիրվել աշխատանքին և լրացուցիչ հոգս են դառնում իրենց համար:
- *Հակասություն երիտասարդներին հասցեագրված սպառման չափանիշների և նրանց իրական հնարավորությունների միջև:* Այսպես կոչված «սպառող» հասարակության պայմաններում հաճախ զանգվածային լրատվամիջոցները գովազդում են երիտասարդների կյանքի այնպիսի կենսակերպ, որը գերազանցում է իրականում նրանց համար ստեղծված միջին հնարավորությունները:
- *Որոշ խմբերի սոցիալական օտարացումը*: Անօթևան, թափառաշրջիկ, ինչպես նաև մանկատները լքած, մանկատներից դուրս եկած երեխաները, ովքեր փորձում են ինքնուրույն կյանք սկսել, պատկանում են ռիսկի խմբին, քանի որ նրանք չունեն սոցիալական կյանքի փորձառություն, անհրաժեշտ սոցիալական կապեր և աջակցություն: Կարելի է շատ հեշտությամբ շահել և չարաշահել նման երեխաների վստահությունը, քանի որ նրանք չունեն մշտական բնակավայր և զուրկ են ընտանիքի կամ մեծերի աջակցությունից:[12]
- *Լրացուցիչ դժվարություններ, որոնց հետ բախվում են հեռավոր մարզերում կամ գյուղերում բնակվող երիտասարդները,* որոնց մեծ մասը չունի շահավետ կապեր՝ բարձր վարձատրվող աշխատանք գտնելու համար:
- *Մարդու թրաֆիքինգի և շահագործման վերաբերյալ ոչ լիարժեք կանխարգելիչ աշխատանքներ,* որոնք իրականացվում են ուսումնական հաստատություններում կամ զանգվածային լրատվամիջոցների օգնությամբ:

[12] Որոշ դեպքերում թրաֆիքինգի և շահագործման ռիսկի այս խմբին կարող են առնչվել նաև հայրենիքից արտագաղթած և այլ երկրում ապաստան որոնող ընտանիքների երեխաները:

- *Երիտասարդները սովորաբար լավատես են, դրականորեն տրամադրված, երբեմն նաև՝ միամիտ և դյուրահավատ:* Որոշ դեպքերում նրանք չափազանց վստահ են իրենց ուժերի վրա (առավելապես զարգացման տարիքային առանձնահատկություններով պայմանավորված), հավատում են, որ կարող են կառավարել իրենց անգամ նոր և անծանոթ իրավիճակում:

ԳԼՈՒԽ 5.

ՄԱՐԴՈՒ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈԶՈՀԵՐԻ

Ա. Մարդու թրաֆիքինգի և շահագործման զոհերի պաշտպանության և աջակցության ուղղությունները

Մարդու թրաֆիքինգը և շահագործումն այն հանցատեսակներից է, որի դեմ պայքարը պահանջում է նախևառաջ հասարակության հանդուրժողականություն և դեպի զոհը կենտրոնացվածություն: Այն պետք է միտված լինի հատկապես զոհերի շահերի և իրավունքների պաշտպանության ապահովմանը: Հանցագործության բացահայտման աշխատանքները չպետք է վտանգեն զոհերի և նրանց հարազատների առողջությունը, ոտնահարեն նրանց իրավունքները: Սա է թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի էությունը, առանձնահատկությունն ու կարևորությունը: Ուստի թրաֆիքինգի և շահագործման զոհերի պաշտպանությունն ու աջակցությունը մարդու թրաֆիքինգի դեմ պայքարի առաջնահերթ խնդիրներից է: Այն նախատեսում է՝

- զոհերի բացահայտում և նրանց՝ դեպի ծագման երկիր կամավոր վերադարձի կազմակերպում,
- օգնություն և աջակցություն զոհերին:

Միանգամայն հասկանալի է, որ թրաֆիքինգի և շահագործման զոհերի պաշտպանության ու աջակցության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է հաջող համագործակցությամբ, որը ենթադրում է միջազգային, միջպետական համագործակցություն, պետական մարմինների ու պաշտոնյաների համագործակցություն քաղաքացիական հասարակության և նրա անդամների, հասարակական կազմակերպությունների և շահագրգիռ այլ կառույցների հետ:

Մարդու թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի ոլորտում, թրաֆիքինգի զոհերի աջակցության գործում կարևորագույն

դերակատարություն ունեն միջազգային և ազգային կառույցները և կազմակերպությունները: Այսպես, ՄՄԿ-ն այն միջազգային միջկառավարական կազմակերպություններից է, որը տարբեր երկրներում իր գրասենյակների ցանցի միջոցով իրականացնում է մարդու թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնացումն ու նրանց կամավոր վերադարձը հայրենիք: Մինչ օրս մարդու թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնացման համար օգտագործվում է ՄՄԿ-ի կողմից մշակված հարցաշարը:

ՀՀ-ում մարդկանց թրաֆիքինգի և (կամ) շահագործման ենթարկված լինելու մեջ կասկածվող անձանց հայտնաբերման պահից նրանց ուղղորդման, նրանց վերաբերյալ տեղեկատվության կուտակման և փոխանակման, որպես զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ[13] նույնացման, աջակցության և պաշտպանության ապահովման, մտորման ժամկետի[14] ընձեռնման գործընթացների հետ կապված հարաբերությունները կարգավորվում է «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» 2014 թվականի դեկտեմբերի 17-ին ընդունված ՀՀ օրենքով: Սույն օրենքով նախատեսված համապատասխան աջակցության և պաշտպանության տրամադրման նպատակով մարդը կարող է ճանաչվել զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ բացառապես նույնացման հանձնաժողովի կողմից, անդամների բաց քվեարկությամբ, մեծամասնական սկզբունքով: Նույնացման հանձնաժողովը կազմավորվում է մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման զոհերին նույնացնելու գործում փորձառու

[13] **Հատուկ կատեգորիայի զոհը** մարդկանց թրաֆիքինգի և (կամ) շահագործման ենթարկված անձն է, որը հայտնաբերման պահին եղել է երեխա կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունն ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձ և այդպիսին է ճանաչվել Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնացման հանձնաժողովի որոշմամբ:

[14] **Մտորման ժամկետն** այն ժամանակահատվածն է, որով իրավունք և հնարավորություն է ընձեռվում օտարերկրացի հավանական զոհին, զոհին և հատուկ կատեգորիայի զոհին, անկախ կացության կարգավիճակի օրինականությունից, մնալով Հայաստանի Հանրապետության տարածքում, ձերբազատվել մարդկանց թրաֆիքինգ կամ շահագործում իրականացրած անձանց ազդեցությունից, վերականգնվել պատճառված ֆիզիկական վնասվածքների հետևանքներից, ինչպես նաև կայացնել սթափ և կշռադատված որոշումներ: Այդ իրավունքն ընձեռվում է նախանույնացման փուլի մեկնարկի հետ մեկտեղ և սահմանվում է 30 օր ժամկետով:

հասարակական կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Հայաստանի Հանրապետության ոստիկանության ներկայացուցիչներից, որոնք նույնացման հանձնաժողովում հանդես են գալիս հավասար իրավունքներով: Հասարակական կազմակերպությունները և պետական մարմինները նույնացման հանձնաժողովում ներկայացված են անդամների հավասար քանակով: Նույնացման հանձնաժողովի նախագահն է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցիչը:

Թրաֆիքինգից տուժած մարդիկ, վերադառնալով տուն, բախվում են բազմաթիվ խնդիրների, ունենում են շատ դժվարություններ: Դրանք առնչվում են զոհի՝

1. սոցիալական և տնտեսական վիճակին,
2. իրավական պաշտպանվածությանը,
3. հոգեկան առողջությանը,
4. ֆիզիկական առողջությանը,
5. կյանքին ու անվտանգությանը,
6. հասարակության մեջ ինտեգրմանը, վերասոցիալականացմանը և այլն:

Հարկ է փաստել, որ համապատասխան աջակցության և հնարավորությունների բացակայությունը բերում է նրան, որ զոհերից ոմանք նորից են ենթարկվում թրաֆիքինգի և շահագործման, ընդհուպ՝ կրկին թրաֆիքինգի շրջապտույտի մեջ ընկնելը:

Հենց սա նկատի ունենալով՝ «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» օրենքը օգնության կազմակերպման արդյունավետությունը մեծապես պայմանավորում է պետական կառույցների, հասարակական և այլ շահագրգիռ կազմակերպությունների համատեղ աշխատանքով և համագործակցությամբ: Որպես ուղենիշ ունենալով կարևոր այն սկզբունքը, որ թրաֆիքինգից տուժած անձինք կարիք ունեն ըմբռնման և կարեկցանքի և ոչ մի դեպքում չպետք է դատապարտվեն կամ հետապնդվեն, մեկուսացվեն ու

օտարվեն հասարակությունից, զոհերի և հատուկ կատեգորիայի զոհերի աջակցությունը նպատակաուղղված է նրանց կյանքի բնականոն ընթացքից մարդկանց թրաֆիքինգի և (կամ) շահագործման ենթարկվելու հետևանքով առաջացած շեղումների վերացմանը, զոհերի՝ հասարակությանը լիարժեք սոցիալական վերաինտեգրմանը և կարող է ներառել՝

1. կացարանի տրամադրում,
2. բնաիրային օգնություն,
3. անհրաժեշտ փաստաթղթերի տրամադրում կամ վերականգնում,
4. բժշկական օգնություն և սպասարկում,
5. հոգեբանական օգնություն,
6. խորհրդատվական օգնություն,
7. իրավաբանական օգնություն,
8. խնամքի տրամադրում, այդ թվում՝ համապատասխան հաստատությունում,
9. թարգմանչական ծառայությունների մատուցում,
10. հիմնական կրթության ապահովում,
11. միջնակարգ կրթության կամ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության հասանելիության ապահովում,
12. աշխատանքի ապահովում,
13. անվտանգ վերադարձի կազմակերպում,
14. միանվագ դրամական փոխհատուցում:[15]

Նշենք նաև, որ այս օգնության արդյունավետությունը զգալիորեն կախված է թրաֆիքինգի զոհի սոցիալական հմտություններից և այն հանգամանքից, թե որքանով է զոհը լրջորեն վերաբերվում իր կարգավիճակի վերականգնմանը:

[15] «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենք:

Բ. Մարդու թրաֆիքինգի և շահագործման հետևանքները

Նախ նշենք, որ մարդու թրաֆիքինգի և շահագործման հետևանքները զոհերի համար խիստ բացասական են: Անգամ եթե զոհին հաջողվում է դուրս գալ այդ վտանգավոր ցանցից և տուն վերադառնալ, թրաֆիքինգի հիմնախնդիրները դրանով չեն ավարտվում: Մինչև բնականոն կյանքին անցնելը զոհերը պետք է վերականգնվեն նվաստացման, անտարբեր վերաբերմունքի, ֆիզիկական և հոգեբանական բռնությունների հետևանքներից: Փաստենք նաև, որ մարդու թրաֆիքինգի բացասական հետևանքները բազմաթիվ են և լուրջ դժվարություններ են հարուցում զոհի կյանքի ամենատարբեր ոլորտներում:

Տուն վերադառնալուց հետո մարդու թրաֆիքինգի և շահագործման զոհերը հաճախ ստիպված են լինում բախվել ոչ միայն բնակարանի, աշխատատեղի բացակայության, դրամական դժվարությունների հետ, այլև հասարակության անդամների որոշ մասի անտարբերության, հանդիմանանքի հետ, հաղթահարել սոցիալական օտարցումն ու մեկուսացումը, հասարակության մեջ ինտեգրվելու դժվարությունները:

Քիչ չեն դեպքերը, երբ թրաֆիքինգի և շահագործման զոհերը տագնապում են իրենց ու իրենց հարազատների կյանքի ու անվտանգության համար:

Մարդու թրաֆիքինգի զոհերը ունենում են առողջության հետ կապված լուրջ *խնդիրներ*: Աշխատելով և ապրելով խիտ բնակեցված շինություններում և հակահիգիենիկ պայմաններում՝ նրանք հեշտությամբ վարակվում են ինֆեկցիոն հիվանդություններով, մշտական կիսաքաղց վիճակը հանգեցնում է մարսողության խնդիրների, ստամոքսի խոցերի, թափվում են ատամները: Ծանր ու երկարատև աշխատանքն առաջացնում է սիրտանոթային համակարգի, ողնաշարի հիվանդություններ: Նրանք, հաճախ ենթարկվելով բռնության ու ծեծի, ունենում են ներքին օրգանների վնասվածքներ: Այս տեսակետից հատկապես տուժում են մարմնավաճառները, որոնց, «ապրանքային» տեսքը չվնասելու համար, հարվածում են մարմնի հենց այն մասերին, որտեղ գտնվում են ներքին օրգանները: Հաճախ սեռական բռնության զոհերը տառապում են սեռական ճանապարհով փոխանցվող տարաբնույթ հիվանդություններով:

Մարդու թրաֆիքինգի զոհերն ունենում են նաև բավականին լուրջ հոգեբանական խնդիրներ: Նկատվում են հասարակության մեջ նրանց մարգինալացման, օտարացման դեպքեր, նրանք չեն ցանկանում խոսել իրենց հետ պատահածի մասին կամ էլ ստում են ու ձևանում, կարծես ոչինչ չի եղել: Թրաֆիքինգի շատ զոհեր ապրում են մշտական վախի ու սարսափի մեջ, որ ինչ-որ մեկն իրենց նկատմամբ բռնություն կգործադրի: Նրանք չեն կարողանում թուլանալ և հանգստանալ, անվստահությամբ են վերաբերվում մյուս մարդկանց: Քիչ չեն դեպքերը, երբ նրանք ընկնում են դեպրեսիայի մեջ, նրանց հանգիստ չի տալիս կյանքին վերջ տալու միտքը:

Հաճախ շահագործման զոհերը տառապում են հետտրավմատիկ սթրեսային համախտանիշով, որի դեպքում նրանց մոտ դրսևորվում են՝

- Տրավմատիկ իրավիճակը վերապրելու հակում՝ հաճախ կրկնվող հիշողություններ և մղձավանջներ, ապրած տրավմայի մասին մտածելու և խոսելու ցանկության իսպառ բացակայություն, տրավմայով պայմանավորված զգացմունքների ժխտում, բացասական իրավիճակի հետ կապված հանգամանքները վերհիշելու անկարողություն:
- Անտարբերություն և ինքնամեկուսացում՝ նախկինում ուրախություն և բավարարվածություն պատճառող գործունեության նկատմամբ հետաքրքրության կորուստ, մյուս մարդկանցից խզված ու անջատված լինելու զգացում, հուզական անզգայություն («բթություն») և հարազատների նկատմամբ սիրո անկարողություն, ապագա չունենալու զգացողություն:
- Նյարդայնություն՝ քնի խանգարում, մակերեսային և ընդհատվող քուն, բարձր գրգռվածություն, անվերահսկելի զայրույթի պոռթկումներ, դժվարություններ՝ կապված ուշադրության կենտրոնացման հետ, մշտական զգուշավորություն:[16]

Առավել բարդ են այն դեպքերը, երբ թրաֆիքինգի և

[16] Farley, Melissa; Barkan, Howard (1988) Prostitution, Violence against Women, and Posttraumatic Stress Disorder, Women & Health, 27 (3): 37-49. 1998, The Haworth Press, Inc.

շահագործման զոհն ունենում է ոչ միայն դժվարություններ առանձին ոլորտներում, ասենք՝ սոցիալական, տնտեսական, ֆիզիկական և այլն, այլև խումբ բարդություններ, համալիր բացասական հետևանքներ:

Գ. Սկզբունքներ, որոնցով հարկավոր է առաջնորդվել թրաֆիքինգի և շահագործման զոհերին աջակցություն ցուցաբերելիս

Նկատի ունենալով վերը նշվածը՝ հարկ է փաստել, որ թրաֆիքինգի և շահագործման զոհերի օգնությունն ու աջակցությունը երկարատև գործընթաց է և պահանջում է համբերատար, հետևողական աշխատանք, որոշակի սկզբունքների և պահանջների պահպանում:

1. Ամենից առաջ թրաֆիքինգից տուժած անձինք կարիք ունեն ըմբռնման և կարեկցանքի և ոչ մի դեպքում չպետք է դատապարտվեն կամ հետապնդվեն, մեկուսացվեն ու օտարվեն հասարակությունից:
2. Թրաֆիքինգի և շահագործման զոհի ու նրա հարազատների կյանքի ու անվտանգության երաշխավորում:
3. «Հանուն մարդու» սկզբունքի պահպանում: Հարկ է հիշել, որ հաճախ թրաֆիքինգի և շահագործման զոհը գտնվում է ճգնաժամային իրավիճակում, երբ թուլանում են սեփական պաշտպանական մեխանիզմները, և հարկավոր է օգնել նրան սեփական ուժերն ու էմոցիոնալ դիմադրողականությունը վերականգնելու համար:
4. Զոհի արժեվորումն ու գնահատումը՝ անկախ մշակութային և հոգևոր, ազգային և ռասայական, սեռային և սոցիալական առանձնահատկություններից, ինչպես նաև նրա հետ պատահած իրավիճակից:
5. Համոզվածություն այն բանում, որ մարդը չի կարող «վատը» լինել, իսկ դժվարությունները նրա կյանքում վկայում են ստեղծված իրավիճակից կառուցողական ելքերի բացակայության մասին:

6. Հարգանք և նրբանկատություն մշակութային այն արժեքների ու հավատալիքների նկատմամբ, որոնք իրենց ազդեցությունն են թողել զոհի վարքագծի վրա (չի բացառվում, որ վերջիններս նախկինում նրա համար հանգստության և վստահության աղբյուր են եղել, և նրանց կարևորությունը պետք չէ նվազեցնել կամ անտեսել):
7. Թրաֆիքինգի և շահագործման զոհի խնդրի և իրավիճակի յուրատիպություն, վերջինիս լուծման անհատական ուղի: Յուրաքանչյուր զոհի համար իր հետ պատահածն ու վերջինիս ընկալման առանձնահատկությունները, իրավճակի լուծման ձևերը անկրկնելի են և նման չեն ուրիշներին: Այլ մարդկանց, այլ դեպքերի, իրավիճակների փորձը կարող է օգնել հասկանալու հիմնախնդիրը, բայց լուծումը պետք է համապատասխանի տվյալ անձնավորությանը և նրա կարիքներին:
8. Անձի սուբյեկտիվ ապրումները չեն կարող գնահատվել «լավ» կամ «վատ»: Հարկավոր է հնարավորություն տալ անձին դրսևորելու և արտահայտելու իր բոլոր հույզերն ու զգացմունքները, օգնել նրան հասկանալու և գիտակցելու դրանք:
9. Վստահություն և հավատ թրաֆիքինգի և շահագործման զոհի ուժերի ու հնարավորությունների նկատմամբ: Գիտակցում այն բանի, որ հարկավոր է օգնել նրան գնահատել սեփական ուժերն ու հնարավորությունները: Զոհի ընկալում որպես սեփական խնդիրները լուծելու համար պոտենցիալ հնարավորություններ ունեցող անձ: Այն ենթադրում է խնդրահարույց իրավիճակներից դուրս գալու ուղիներ փնտրելու անձի նախաձեռնությունը տեսնելու և աջակցելու կարողություն:
10. Տեղեկատվության գաղտնիության ապահովում և խարդավանքների ու զանազան մանիպուլիացիաների նպատակով թրաֆիքինգի և շահագործման զոհի, նրա հարազատների վերաբերյալ տեղեկատվության օգտագործման բացառում:

Նշված սկզբունքների ապահովումը ստեղծում է բարենպաստ մթնոլորտ, ինչը հնարավորություն է տալիս թրաֆիքինգի և շահագործման զոհին, նրա հարազատներին՝

- վստահել և հավատալ օգնություն տրամադրող կազմակերպությունների աշխատակիցներին, ի դեմս նրանց տեսնել իրեն հասկացող և հավատացող անձի, որը պատրաստ է ու կարող է իրեն օգնել,
- ազատորեն և հանգիստ շարադրել իր պատմությունը, նկարագրել իր ապրումներն ու զգացմունքները և ազատորեն դրսևորել դրանք,
- համապատասխան օգնություն տրամադրող կազմակերպությունների աշխատակիցների հետ համատեղ գտնել իր խնդրի, դժվարությունների լուծման ուղիները և իրականացնել դրանք:

ԳԼՈՒԽ 6.

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ

Նկատի ունենալով մարդու թրաֆիքինգի և շահագործման էությունը, դրա առանձնահատկություններն ու յուրահատկությունները՝ վերջինիս դեմ պայքարի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է հաջող համագործակցությամբ, ինչն էլ հենց ամրագրված է մի շարք միջազգային իրավական ակտերում, մասնավորապես՝ Եվրոպայի խորհրդի 2005թ.-ի «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին» կոնվենցիայում: Ըստ այդ կոնվենցիայի՝ համագործակցությունը դիտարկվում է երկու ասպեկտով՝ *միջազգային համագործակցություն* և *համագործակցություն քաղաքացիական հասարակության հետ:*

Միջազգային համագործակցության ոլորտում Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները պարտավորվում են համագործակցել միմյանց հետ՝ հնարավորինս լայնորեն կիրառելով համապատասխան միջազգային և տարածաշրջանային փաստաթղթերը, միասնական կամ փոխադարձ պարտավորություններ սահմանող օրենսդրության հիման վրա ձեռք բերված պայմանավորվածությունները:

Միջազգային համագործակցությունը ենթադրում է մարդու թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի միջպետական ծրագրերի, համապարփակ մոտեցումների, միգրացիային առնչվող միասնական հանձնարարականների մշակում և այս ոլորտում համաձայնեցված գործողությունների իրականացում:

Միջազգային համագործակցության ոլորտում կիրառվող միջոցառումները և ծրագրերը իրենց մեջ ընդգրկում են մարդու թրաֆիքինգի դեմ պայքարի հետևյալ քայլերը՝

- Առևտրային (կոմերցիոն) նպատակներով մարմնավաճառության և շահագործվող աշխատանքի նկատմամբ պահանջարկի ձևավորման գործոնների և օրենսդրական, ռազմավարական և այլ միջոցառումների վերլուծություն:
- Կյանքում բազմազան հնարավորություններ ընձեռող ծրագրերի մշակում՝ ընդգրկելով բազային կրթություն, մասնագիտական պատրաստում և անգրագիտության վերացում, հատկապես կանանց և անբարենպաստ պայմաններում գտնվող խմբերի համար:
- Երեխաների կրթական հնարավորությունների ընդլայնում, դպրոց չհաճախող երեխաների թվի նվազեցում:
- Պոտենցիալ միգրանտներին անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում միգրացիայի վտանգների (շահագործում, պարտքեր, առողջության և անվտանգության սպառնալիքներ, անբուժելի սեռական հիվանդություններ), ինչպես նաև օրինական միգրացիայի հնարավորությունների վերաբերյալ:
- Իրազեկման միջոցառումների անցկացում մարդու թրաֆիքինգի վտանգների վերաբերյալ հասարակության իրազեկության ընդարձակման նպատակով:
- Մարդուն միգրացիայի, անօրինական և մեծ ռիսկեր պարունակող հարկադիր աշխատանքի դրդող իրավիճակների հետազոտում և փոփոխում:
- Օրինական, շահույթ բերող կամ աշխատանքային շահագործումը բացառող միգրացիայի հնարավորությունների ընդարձակման հետազոտում: Պետության կողմից աշխատանքային միգրացիայի խրախուսումը պետք է պայմանավորված լինի միգրանտ աշխատողների իրավունքների պաշտպանության մեխանիզմների առկայությամբ:
- Իրավապահ և դատական մարմինների պոտենցիալի ամրապնդում մարդու թրաֆիքինգով և շահագործմամբ զբաղվող մարդկանց ձերբակալման և դատական հետապնդման ոլորտում:

- Խոցելիության աստիճանի նվազեցմանն ուղղված միջոցառումների ձեռնարկում բոլոր մարդկանց անհրաժեշտ փաստաթղթեր՝ անձնագիր, ծննդյան, ամուսնության և այլ վկայականներ տրամադրելու միջոցով:

Ինչպես տեսնում ենք, մարդու թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի վերը նշված քայլերն ուղղված են երևույթի ոչ թե արտաքին դրսևորումների, այլ հիմնահարցի խորը և արմատական պատճառների բացահայտմանն ու դրանց վերացմանը: Այդ ռազմավարությունները բխում են այն հանգամանքից, որ թրաֆիքինգի և շահագործման արմատական պատճառներից մեկը *պահանջարկն է:* Պետությունների և միջպետական կազմակերպությունների միջոցառումների ծրագրերում առանձնահատուկ կարևորվում և շեշտադրվում են մարդկանց թրաֆիքինգի և շահագործման առնչությամբ խոցելիության աստիճանը մեծացնող գործոնների, անհավասարության, չքավորության, խտրականության և նախապաշարմունքների բոլոր ձևերի նվազեցումը և աստիճանական վերացումը:

Քաղաքացիական հասարակության հետ համագործակցության ոլորտը ենթադրում է պետական մարմինների ու պետական պաշտոնյաների համագործակցությունը քաղաքացիական հասարակության և նրա անդամների, հասարակական կազմակերպությունների և շահագրգիռ այլ կառույցների հետ: Այսպես օրինակ, ՄՄԿ-ն սերտորեն համագործակցում է կառավարական, միջկառավարական և ոչ կառավարական գործընկերների, ինչպես նաև գիտահետազոտական հաստատությունների և մասնավոր հատվածի հետ՝ նպատակ հետապնդելով աջակցել և մարդասիրական օգնություն ցուցաբերել դժվարին կացության մեջ հայտնված միգրանտներին՝ փախստականներին, տեղահանվածներին, թրաֆիքինգի զոհերին: ՄՄԿ-ն ընդգրկված է մարդու թրաֆիքինգի դեմ պայքարում 1994 թ.-ից և աջակցություն է տրամադրել թրաֆիքինգի ենթարկված ավելի քան 70000 մարդու: ՄՄԿ-ի հիմնական նպատակն է կանխել մարդու թրաֆիքինգն ու պաշտպանել զոհերին՝ միևնույն ժամանակ նրանց ընձեռելով վերադարձի ապահով ուղիներ, հասարակությանը վերաինտեգրվելու եղանակներ: *ՄՄԿ-ի հակաթրաֆիքինգային գործունեությունն ամբողջությամբ հիմնված է թրաֆիքինգի ենթարկված անձի բարօրության ապահովման սկզբունքի վրա:*

ԳԼՈՒԽ 7.

ՄԱՐԴՈՒ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Թրաֆիքինգի դեմ պայքարը Հայաստանի Հանրապետությունում սկսվել է 2002 թվականի հոկտեմբերից, երբ Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ Հայաստանի Հանրապետությունից շահագործման նպատակով մարդկանց ապօրինի փոխադրման, տեղափոխման ու առուվաճառքի (թրաֆիքինգի) հետ կապված հարցերն ուսումնասիրելու և առաջարկություններ ներկայացնելու նպատակով ստեղծվեց միջգերատեսչական հանձնաժողով: Այն գործում էր Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարության ղեկավարությամբ և ընդգրկում բոլոր շահագրգիռ նախարարությունների ու գերատեսչությունների ներկայացուցիչներին, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմերի փորձագետներին, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների: Իրականացվող աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2007 թվականի դեկտեմբերի 6-ի N 861-Ա որոշմամբ ստեղծվել է Հայաստանի Հանրապետությունում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհուրդ՝ Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի նախագահությամբ: Խորհրդի անդամներ են բոլոր շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների ղեկավարները: Խորհրդի ընթացիկ աշխատանքները կազմակերպելու նպատակով ստեղծվել է նաև աշխատանքային խումբ, որը ղեկավարվում է ՀՀ արտաքին գործերի նախարարության միջազգային կազմակերպությունների վարչության պետի կողմից: Խորհրդի և

աշխատանքային խմբի աշխատանքներին ակտիվ մասնակցում և մեծ ներդրում են բերում ոլորտում գործող հասարակական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները, ինչպես նաև սոցիալական գործընկերները:

Թրաֆիքինգի երևույթի դեմ արդյունավետ պայքար մղելու նպատակով ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «Հայաստանի Հանրապետությունից շահագործման նպատակով մարդկանց ապօրինի փոխադրման, տեղափոխման և առուվաճառքի (թրաֆիքինգ) կանխման» հայեցակարգը և ընդունվել ու իրականացվել են դրանից բխող չորս ազգային ծրագրերը. «Հայաստանի Հանրապետությունից շահագործման նպատակով մարդկանց ապօրինի փոխադրման, տեղափոխման և առքուվաճառքի (թրաֆիքինգ) կանխման 2004-2006 թվականների միջոցառումների ազգային ծրագիրը» (ՀՀ կառավարության 2004 թվականի հունվարի 15-ի N 58-Ն որոշում), «Հայաստանի Հանրապետությունում 2007-2009 թվականների ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը» (ՀՀ կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 6-ի N 1598-Ն որոշում), «Հայաստանի Հանրապետությունում 2010-2012 թվականների ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը» (ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 3-ի N 1140-Ն որոշում) և «Հայաստանի Հանրապետությունում 2013-2015 թվականների ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը» (ՀՀ կառավարության 2013 թվականի փետրվարի 28-ի N 186-Ն որոշում):

Չորրորդ՝ 2013-2015 թվականների մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագիրը ներառում է նախորդ ծրագրերի հիմնական ուղղությունները, միևնույն ժամանակ նախատեսված միջոցառումներով և նպատակներով ավելի զոհակենտրոն է:

Չորրորդ ծրագիրը նպատակ էր հետապնդում առավել կենտրոնացնել պետության ջանքերը հատկապես մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերի նույնացման և աջակցության

բարելավման ուղղություններով՝ անհրաժեշտ ենթաօրենսդրական բարեփոխումներ իրականացնելով, ինչպես նաև ֆինանսական հիմք ստեղծելով ու զարգացնելով ոլորտում գործող դերակատարների կարողությունները:

Չորրորդ ծրագրի հիմնական նպատակներից էր նաև ուսումնասիրությունների անցկացումը, այդ թվում՝ աշխատող երեխաների շրջանում:

Չորրորդ ծրագրում, ինչպես նախորդ բոլոր ծրագրերում, մեծ ուշադրություն էր դարձվում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի)՝ հատկապես աշխատանքային շահագործման (թրաֆիքինգի) կանխարգելման միջոցառումների իրականացմանը՝ ինչպես ընդհանուր բնակչության, այնպես էլ խոցելի խմբերի շրջանում:

Կարևոր ուղղություններից մեկն էր նաև զանգվածային լրատվամիջոցների (այսուհետ՝ ԶԼՄ) հետ համագործակցության զարգացումը՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեպքերի լուսաբանման և զոհերի մասին տեղեկության ներկայացման ձևաչափի և մոտեցումների, ինչպես նաև զոհերի տվյալների գաղտնիության ապահովմանը վերաբերող հարցերում:

Ծրագիրը մշակվել էր Հայաստանի Հանրապետությունում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդին կից աշխատանքային խմբի կողմից:

Ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել նաև երրորդ ազգային ծրագրի կատարման անկախ մշտադիտարկման արդյունքները, ինչպես նաև միջազգային ատյանների, մասնավորապես, 2012 թվականի սեպտեմբերին հրապարակված Եվրոպայի խորհրդի «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի» կոնվենցիայի դրույթների Հայաստանի կողմից կատարման վերաբերյալ առաջին զեկույցի, ինչպես նաև ԱՄՆ պետքարտուղարության զեկույցի առաջարկները:

Ծրագրում ներկայացված ռազմավարություններն ու գործողություններն ուղղված են մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի արդյունավետ կազմակերպմանը և ներառված են 5 հիմնական բաժիններում՝

- մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի օրենսդրություն և օրենքների կիրառում,

- մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) կանխարգելում,
- մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերի պաշտպանություն և աջակցություն,
- համագործակցություն,
- ուսումնասիրությունների կատարում, մշտադիտարկում և գնահատում:

ՀՀ Կառավարության 2016 թվականի հուլիսի 7-ի N 726-Ն որոշմամբ հաստատվել են «Հայաստանի Հանրապետությունում 2016-2018 թվականների ընթացքում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը»:

Հինգերորդ՝ 2016-2018 թվականների մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագրով սահմանված են բազմապիսի նպատակներ, որոնք հասցեագրված են մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի բոլոր ոլորտներին և ներառում են նախորդ ծրագրի հիմնական ուղղությունները:

Հինգերորդ ազգային ծրագրում, ինչպես նախորդ բոլոր ծրագրերում, մեծ ուշադրություն է դարձվում երեխաների թրաֆիքինգի և շահագործման, ինչպես նաև աշխատանքային շահագործման կանխարգելման միջոցառումների իրականացմանը՝ ինչպես ընդհանուր բնակչության, այնպես էլ խոցելի խմբերի շրջանում:

Ծրագրում ներկայացված գործողություններն ուղղված են մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի արդյունավետ կազմակերպմանը և ներառված են 5 հիմնական բաժիններում՝

- մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի օրենսդրություն և դրանց կիրառման ապահովում,
- մարդկանց թրաֆիքինգի և շահագործման կանխարգելում,
- մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց հայտնաբերում, պաշտպանություն և աջակցություն,
- համագործակցություն,
- ուսումնասիրությունների կատարում, մշտադիտարկում և գնահատում:

ԲԱԺԻՆ 2.
ԴԱՍԸՆԹԱՑԸ

Առաջարկվող դասընթացը բաղկացած է ութ 45-րոպեանոց դասերից, որոնց նկարագրությունը կտրվի ստորև:

Դասընթացի ընդհանուր նպատակները

Դասընթացն ուսումնասիրելու արդյունքում սովորողը պետք է կարողանա.

- Սահմանել և բացատրել մարդու թրաֆիքինգ և շահագործում երևույթը: Սեփական վերաբերմունքն արտահայտի այդ երևույթի նկատմամբ:
- Թվել և նկարագրել մարդու թրաֆիքինգի ձևերը:
- Մեկնաբանել և վերլուծել մարդու թրաֆիքինգի առաջացման պատճառները:
- Դատողություններ անել հասարակության, պետության և զոհերի վրա թրաֆիքինգի ազդեցության հետևանքների վերաբերյալ:
- Քննարկել թրաֆիքինգի ենթարկվածների հավաքագրման եղանակներն ու մարդու թրաֆիքինգից խուսափելու ձևերը:
- Իմանալ՝ ինչով է պայմանավորված երիտասարդների շահագործման ռիսկի ավելացումը: Թվարկել երիտասարդների շահագործման ռիսկի ավելացման գործոնները: Մեկնաբանել և վերլուծել երիտասարդների ռիսկային խմբում ներգրավելու հասարակությամբ պայմանավորված պատճառները:
- Ծանոթանալ արտերկրում օրինական աշխատանքի ձեռքբերման ուղիներին ու ճանապարհներին և կարողանալ խուսափել հնարավոր վտանգներից:

- Ձեռք բերել կարողություններ և հմտություններ անձանոթ իրավիճակներում վիկտիմ վարք հանդես չբերելու և մարդու թրաֆիքինգի ու շահագործման չենթարկվելու համար:
- Քննարկել և գնահատել մարդու թրաֆիքինգի հիմնահարցով զբաղվող միջազգային և ազգային կազմակերպությունների դերն ու գործունեությունը:
- Որոշել իր դերը մարդու թրաֆիքինգի դեմ պայքարի գործընթացում և իր վերաբերմունքը թրաֆիքինգի զոհերի հանդեպ:

ԴԱՍ 1.
Թրաֆիքինգի սահմանումը

Դասի նպատակները

Այս դասի արդյունքում սովորողները

- կծանոթանան մարդու թրաֆիքինգ և շահագործում երևույթին,
- կկարողանան սահմանել մարդու թրաֆիքինգ և շահագործում երևույթը ու մեկնաբանել սահմանման բաղկացուցիչ տարրերը:

Խթանում (10 րոպե)

Խթանման համար ցանկալի է դասընթացը սկսելուց մեկ-երկու շաբաթ առաջ սովորողներին բաժանել խմբերի ու յուրաքանչյուր խմբի հանձնարարել կարդալու հետևյալ երկերից որևէ մեկը.

- Ղ. Աղայան «Անահիտ»
- Մուրացան «Հարուստները զվարճանում են»
- Ռաֆֆի «Անմեղ վաճառք»
- Վլադիմիր Հարությունյան «Արևադարձ» (հատված)
- Հեկտոր Մալո «Առանց ընտանիքի» (հատված)

Ուսուցիչը կարող է նաև իր ընտրությամբ առաջարկել մարդկանց շահագործման տարր պարունակող որևէ այլ երկ կամ ստեղծագործություն:

Այստեղ հնարավոր են բազմաթիվ տարբերակներ: Հնարավոր է, որ ուսուցիչն ընտրի նշվածներից միայն մեկ կամ երկու գործ: Այդ դեպքում ավելի շատ ժամանակ կունենան քննարկելու տվյալ երկում նկարագրված մարդու շահագործման կոնկրետ դեպքը: Հնարավոր է նաև աշակերտներին խմբերի չբաժանել, այլ տարերային կերպով ըստ ցանկության հանձնարարել կարդալ վերոնշյալ երկերը: Այս դեպքում դասարանում բոլորի առջև կխոսեն այն սովորողները, ովքեր կարդացել են առաջարկված հատվածները:

Իսկ եթե հնարավորություն է եղել կարդալու մի քանի գործ, ապա դասի սկզբին ուսուցիչը կարող է խմբերը վերադասավորել այնպես, որպեսզի նոր ձևավորված խմբերում լինեն տարբեր գրքեր կարդացած սովորողներ: Ապա խմբերին տալ 7 րոպե ժամանակ ու առաջադրանք. **միմյանց ներկայացնել իրենց բաժին հասած երկերի հերոսների հետ կատարվածն ու փորձել բացահայտել, թե որն էր իրենց կարդացած հատվածների հերոսների հետ կատարված իրադարձությունների ընդհանուր կողմը**: Ենթադրաբար, աշակերտները կհանգեն այն մտքին, որ իրենց հերոսները ենթարկվել են շահագործման, ճնշման, դարձել են խաբեության զոհ և այլն: Խմբերում քննարկումից հետո հաջորդ երեք րոպեների ընթացքում համադասարանական քննարկման ժամանակ սովորողները ներկայացնում են այն ընդհանրությունները, որ բնորոշ են բոլոր երկերի հերոսների հետ կատարվածին:

Իմաստի ընկալում (15 րոպե)

Ուսուցիչը ներկայացնում է ընդմիջվող դասախոսություն թրաֆիքինգի մասին (տե՛ս բաժին 1) (8 րոպե)՝ ընթացքում բավարարելով աշակերտների հետաքրքրասիրությունն ու բերելով օրինակներ արդի կյանքից:

Ապա ներկայացնում է թրաֆիքինգի սահմանմանը նվիրված նյութը ձեռնարկից և թրաֆիքինգի գործողությունները ներկայացնող աղյուսակը (Գլուխ 1.), որպեսզի աշակերտներն այն ուսումնասիրեն ինքնուրույն, զույգերով կամ 4-5 հոգանոց խմբերում (7 րոպե):

Կշռադատում (20 րոպե)

Սահմանման և աղյուսակի ընկալման աշխատանքից հետո սովորողներն անցնում են հետևյալ աղյուսակի լրացմանը: Այդ անելու համար նրանք նորից խմբավորվում են այն խմբերում, որոնցում կարդացել են առաջարկված երկերը: Աղյուսակը խմբով լրացնելը ցանկալի է, քանի որ լրացնելու ժամանակ սովորողները փաստարկում են, համոզում միմյանց, սովորեցնում իրար ու սովորում միմյանցից:

Աշակերտները կարող են աղյուսակների վրա աշխատել անհատապես կամ զույգերով: Ուսուցիչն աշխատելու ձևը կորոշի՝ ելնելով դասարանի առանձնահատկությունից:

Աղյուսակի լրացմանը տրվում է 5-10 րոպե ժամանակ (5 րոպե, եթե մեկ երկի համար պետք է լրացնեն, և 10 րոպե, եթե խմբով են աշխատում և լրացնում են 2 երկի համար):

Երկի կամ հատվածի անվանումը	Մարդկանց շահագործման գոհ(եր)ը	Նրա(նց) հանդեպ կիրառված գործողությունները	Շահագործման նպատակը	Շահագործողների օգտագործած միջոցները	Շահագործման հետևանքները
1.					
2.					

Ապա որոշ խմբերի ներկայացուցիչներ կամ առանձին աշակերտներ ներկայացնում են իրենց լրացրած աղյուսակները՝ դասարանի օգնությամբ անելով լրացումներ ու մեկնաբանություններ (5 րոպե):

Դասի վերջին 5 րոպեն տրվում է անդրադարձ-մտախորհմանը: Դասարանը կրկնում է մարդու թրաֆիքինգի և շահագործման սահմանումը, տարբերակում դրա բաղկացուցիչ գործողությունները և նշում նպատակների ամբողջությունը:

Առաջադրանք

Ուսուցիչն առաջարկում է, որ սովորողները մարդու թրաֆիքինգ երևույթի մասին պատմեն իրենց ծնողներին ու նրանց հետ քննարկեն մարդու թրաֆիքինգ և շահագործում երևույթն առաջացնող հնարավոր պատճառները, որպեսզի այդ մասին քննարկում անցկացնեն հաջորդ դասին:

ԴԱՍ 2.
Մարդու թրաֆիքինգի և շահագործման առաջացման պատճառները և դրան նպաստող գործոնները

Դասի նպատակները

Այս դասի արդյունքում սովորողները՝

- կհասկանան, թե որոնք են մարդու թրաֆիքինգ և շահագործում երևույթի առաջացման պատճառները,
- կտարբերակեն դրանք ըստ սոցիալական, հուզակամային, աշխարհագրական, տնտեսական և այլ գործոնների,
- կկարողանան ինքնուրույն դատողություններ անել մարդու թրաֆիքինգից պաշտպանված լինելու հանգամանքների մասին:

Խթանում (5-10 րոպե)

Խթանումը տեղի է ունենում մտագրոհի միջոցով, երբ աշակերտները տեղերից թվարկում են մարդու թրաֆիքինգի և շահագործման իրենց հայտնի պատճառները: Ուսուցիչը կամ մեկ աշակերտ գրատախտակին գրում են նշված բոլոր գործոնները:

Իմաստի ընկալում (5-10 րոպե)

Եթե խթանման ժամանակ սովորողներն ակտիվ են եղել ու վեր են հանել հնարավորինս շատ գործոններ, ուսուցիչը կարող է բավարարվել 5 րոպեանոց խոսքով չասված հանգամանքների մասին: Եթե սովորողներն ակտիվ չեն եղել, ապա ուսուցիչը կարող է 10 րոպեի ընթացքում խոսել մարդու թրաֆիքինգին նպաստող գործոնների մասին՝ քարտեզագրելով դրանք (Տե՛ս Գլուխ 3.):

Ցանկալի է քննարկել աղքատությունը, եկամտի և այլ հնարավորությունների (օրինակ՝ ուսման) որոնումը, քաղաքական բախումներն ու անկայուն վիճակը, գենդերային խտրականությունը, էժան աշխատուժի և սեռական ծառայությունների պահանջարկը, հասարակական միջավայրի բարոյազրկումը և այլն:

Կշռադատում (25 րոպե)

Կշռադատման փուլն անցկացնելու համար ցանկալի է կիրառել դերային խաղի մեթոդը՝ անցկացնելով ստորև առաջարկվող դերախաղը:

Դերային խաղ «Փարիզ, Փարիզ»[17]

Դասարանը բաժանվում է չորս խմբի: Բոլոր խմբերին ներկայացվում է նույն իրադրությունը, որը նրանցից երեքը պետք է խաղարկեն, իսկ չորրորդ խումբը պետք է գնահատի: Երեք խմբերից յուրաքանչյուրը, իրադրությունը խաղարկելու և դրա հնարավոր շարունակությունը ներկայացնելու համար հանդես է գալիս տարբեր տեսանկյուններից: Առաջին խումբը լավատեսների խումբն է, որը ներկայացնում է իրադրությունն ու դրա հնարավոր ավարտը լավատեսական տեսանկյունից: Երկրորդ խումբը հոռետեսների խումբն է, որը ցույց է տալու, թե ինչ կարող է պատահել վատագույն դեպքում: Իսկ երրորդ խումբը իրատեսների խումբն է, որը փորձում է գուշակել, թե իրական կյանքում, որպես կանոն, նման իրադրություններն ինչ լուծում են ստանում, ու ներկայացնել այդ տարբերակը:

Իրադրության նկարագրության հետ խմբերը ստանում են 7-8 րոպե ժամանակ, որի ընթացքում պետք է որոշեն, թե ինչ գործող անձինք են ունենալու և թե ինչպես են ընթանալու դեպքերը: Յուրաքանչյուր խումբ պետք է բեմադրի 3-5 րոպեանոց ներկայացում: Մինչ երեք խմբերը պատրաստվում են ներկայացնելուն, չորրորդ՝ գնահատողների խմբին ուսուցիչը բացատրում է գնահատման չափանիշները, որոնցից յուրաքանչյուրի վերաբերյալ խմբի անդամները համաձայնության են գալիս միմյանց հետ: Ապա

[17] Տվյալ դերային խաղը ցանկալի է անցկացնել նաև դասընթացի ավարտին, մասնավորապես, վիկտիմ վարքի մասին թեման անցնելուց հետո, խնդրելով սովորողներին ցուցադրել դերային խաղի գլխավոր դերակատարների կողմից հանդես բերվող վիկտիմ կամ ոչ վիկտիմ վարք:

մոտենում են պատրաստվող խմբերին ու նրանց աշխատանքը գնահատում համագործակցային լինելու տեսանկյունից, առաջնորդվելով հետևյալ կամ նման այլ չափանիշներով.

- Որքանով են ընդգրկված խմբի բոլոր անդամները պատրաստվելու գործընթացում:
- Աշխո՞ւյժ է, արդյոք, քննարկումը, թե՞ խմբի անդամները տարակուսանքի մեջ են:
- Կա՞ն առաջնորդներ, ուղղորդողներ, թե՞ վարվում են ինչպես պատահի:
- Կարողանու՞մ են ժամանակին հասցնել կատարել առաջադրանքը:
- Եվ այլն...

Երեք խմբերից յուրաքանչյուրի ներկայացումը գնահատելիս կարելի է օգտագործել հետևյալ չափանիշները.

- Արդյո՞ք ներկայացումը համապատասխանում է խմբի վերցրած ընդհանուր մոտեցմանը (լավատեսական, հոռետեսական, չեզոք):
- Արդյո՞ք խմբի բոլոր անդամներն ընդգրկված են ներկայացման մեջ:
- Կարողանո՞ւմ են 3-5 րոպեի ընթացքում ավարտել ներկայացումը:
- Հանդես բերու՞մ են թրաֆիքինգի հետ կապված խնդիրների ըմբռնում:

Խմբերի ներկայացումներից հետո գնահատող խմբին տրվում է 5-7 րոպե ժամանակ իր գնահատականը ներկայացնելու մտախորհում-անդրադարձ կատարելու համար: Անդրադարձի ժամանակ ցանկալի է, որ ուսուցիչն անպայման նշի (եթե աշակերտների ներկայացումներում դա չկար) ապօրինի սահմանահատումների և թրաֆիքինգի փոխադարձ կապը:

Բաշխման նյութ դերային խաղի համար

Ընթերցեք հետևյալ իրավիճակը, և ըստ ուսուցչի հրահանգների, պատրաստվեք դերային խաղի (տրվում է խաղարկող խմբերին):

Էդգարը երիտասարդ ծրագրավորող է, նրա կինը՝ Անուշը՝ դերասանուհի: Ունեն 12 տարեկան աղջիկ՝ Լիլիթը և 9 տարեկան տղա՝ Արամը: Օրերից մի օր Էդգարը ոգևորված գալիս է տուն ու ասում, որ հանդիպել է մի հին ծանոթի՝ Հակոբին, որն առաջարկել է իրեն ընտանիքով մեկնել Փարիզ, քանի որ իր մասնագիտությամբ Էդգարն այնտեղ շատ ավելի լավ կվաստակի, և ընտանիքով առոք-փառոք կապրեն:

Ընտանիքի անդամները ոգևորվում են ու սկսում վաճառել ունեցվածքը՝ ճանապարհի ծախսերը հոգալու համար: Հակոբը գալիս է նրանց տուն ու բացատրում, թե ոնց են իրականացնելու Փարիզում հաստատվելու ծրագիրը: Էդգարն ինքնաթիռով մեկնելու է Ստամբուլ, ապա այնտեղից տրանսպորտի այլ միջոցներով հասնելու է Փարիզ: Անուշը թատերախմբի հետ մեկնելու է Աթենք, այնտեղ լքելու է խումբն ու գնացքով հասնելու է Փարիզ: Իսկ երեխաներին Հակոբն իր հետ տանելու է Պրահա, ապա այնտեղից հուսալի մարդկանց ուղեկցությամբ ճանապարհելու է Փարիզ, որտեղ երկու շաբաթվա ընթացքում ընտանիքը կվերամիավորվի:

Հակոբն ասում է, որ այս ամենի հետևում փոխնախարար մարդ է կանգնած, ու ամեն ինչ ստացվելու է բարձր մակարդակով:

Ձեր խմբի խնդիրն է 10 րոպեի ընթացքում ներկայացնել այս պատմության շարունակությունը թատերական ներկայացման տեսքով: Շարունակությունը ներկայացնելու համար դուք կարող եք դնել տարբեր «ակնոցներ»՝ լավատեսի, հոռետեսի կամ իրատեսի: Դուք կարող եք ունենալ լրացուցիչ հերոսներ, եթե դրա անհրաժեշտությունը զգում եք: Կարող եք ներկայացնել միջանկյալ տեսարաններ, կամ վերջնական մի տեսարան, որտեղ հերոսները կպատմեն իրենց գլխով անցած-դարձածը:

Ուշադրություն դարձրեք, թե որ տեսանկյունից պետք է զարգացնեք դեպքերը. լավատեսակա՞ն, հոռետեսակա՞ն, թե՞ իրատեսական: Հիշե՛ք, որ ներկայացումն իր մեջ պետք է պարունակի թրաֆիքինգ երևույթի քննադատություն՝ անմիջական կամ միջնորդավորված ձևով:

Ներկայացնողները կգնահատվեն, իսկ գնահատողները կգնահատեն ըստ ստորև ներկայացվող սյունակաշարի:

Հաշվի առեք, որ ներկայացումները պետք է տևեն 3-5 րոպե:

Դերային խաղի գնահատման սյունակաշար
(տրվում է գնահատող խմբին)

Որքանո՞վ էր ներկայացումը վեր հանում թրաֆիքինգ երևույթի բնորոշ կողմերը	Լիովին 5	Մասամբ 4	Մեկ-երկու գծով 3	Փորձ կա, բայց արդյունավետ չէ 2	Վեր չի հանում թրաֆիքինգ երևույթի կողմերը 1
Դերային խաղը դիտելով, կարելի՞ է եզրակացնել, որ մասնակիցները կարող են բացատրել թրաֆիքինգի էությունը	Միանգամայն 5	Այո, որոշ վերապահումներով 4	Որոշակի չափով 3	Դժվար է նման եզրակացություն անել 2	Կարծես թե չեն պատկերացնում թրաֆիքինգի էությունը 1
Արդյո՞ք խումբն աշխատում էր համագործակցված	Այո, բոլորն իրենց նպատակն էին բերում աշխատանքին 5	Մեծամասնությունը մասնակցում էր 4	Խմբի կեսն էր մասնակցում 3	Մեծամասնությունն անտարբեր էր 2	Չկար խմբի անդամների համագործակցություն 1
Կարողացե՞լ էին մտնել դերի մեջ	Լիովին 5	Մասամբ 4	Դժվարությամբ 3	Համարյա՝ ոչ 2	Ոչ 1
Տեղավորվո՞ւմ էին ժամանակի մեջ	Լիովին 5	Մասամբ 4	Դժվարությամբ 3	Համարյա՝ ոչ 2	Ոչ 1
Դերային խաղից կարելի՞ է ուսուցանող եզրակացություններ հանգել	Այո, միանգամայն 5	Գոնե մեկ եզրակացություն ենթադրվում է 4	Որոշ ճշգրտումներով՝ այո 3	Դժվարությամբ 2	Ոչ 1

ԴԱՍ 3.
Թրաֆիքինգի դրսևորումները

Դասի նպատակները՝

Այս դասի արդյունքում սովորողները

- կիմանան մարդու թրաֆիքինգի և շահագործման դրսևորման տեսակները,
- կկարողանան մարդու թրաֆիքինգը և շահագործումը տարբերակել այնպիսի երևույթներից, ինչպիսիք են մարմնավաճառությունը, մարդկանց մաքսանենգությունը և այլն:

Խթանում (10 րոպե)

Ուսուցիչը ներկայացնում է դատողություններ և աշակերտներին առաջարկում արտահայտել իրենց դիրքորոշումը համաձայն եմ/համաձայն չեմ տարբերակով:

1. Լավ կենսապայմաններ ունենալու համար պետք է գնալ արտասահման:
2. Թրաֆիքինգը կապ չունի մարդու իրավունքների հետ:

Իմաստի ընկալում (20 րոպե)

Կարճ դասախոսության մեթոդով ուսուցիչը ներկայացնում է թրաֆիքինգի գործընթացը և տեսակները:

Ստորև անկանոն ներկայացված են մարդու թրաֆիքինգի և շահագործման մասին մի պատմության հատվածներ: Երեխաները պետք է դասավորեն պատմության հատվածները ճիշտ հերթականությամբ, նշեն այն հատվածները, որոնցում կա մարդու իրավունքների խախտում և բացատրեն, թե մարդու որ իրավունքն է խախտված: Երեխաները պետք է նշեն նաև, թե տվյալ դեպքը մարդու թրաֆիքինգի և շահագործման որ տարրերն է պարունակում:

Ամեն օր նրանց երկու անգամ ճաշ էր տրվում:
Մայրը Ա.-ին ուղարկեց Դուբայ: Նա մտածում էր, որ երեխան արդեն այնքան մեծ է, որ կարող է իր մասին հոգ տանել, աշխատել և ընտանիքին գումար ուղարկել:
Լ.-ն ասաց, որ ինքը կվճարի ճանապարհածախսը: Դուբայում Լ.-ն Ա.-ին տարավ գործարան և վաճառեց 500 ԱՄՆ դոլարով:
Ա.-ն 13 տարեկան էր: Նրա ընտանիքը շատ աղքատ էր և ծնողներն այլևս ի վիճակի չէին Ա.-ին ուղարկել դպրոց:
Լ.-ն, որը ընտանիքի հարևանուհին էր, առաջարկում է Ա.-ին տանել Դուբայ, որտեղ նա կարող է մեծ գումարներ վաստակել:
Գործարանում աշխատողների մեծ մասը 12-15 տարեկան էին: Նրանք աշխատում էին առավոտյան 6-ից մինչև երեկոյան 10-ը:
Կիրակի օրերին նրանք հսկիչների հետ գնում էին հիգիենիկ պարագաներ գնելու:
Մի աղջիկ կարողացավ փախչել և հայտնել ոստիկանություն:
Գործարանի սեփականատերերը խստությամբ հսկում էին երեխաներին, որպեսզի նրանք աշխատեն: Եթե երեխաները խախտում էին կանոնները, նրանց ծեծում էին: Երեխաները չէին կարող խաղալ, ծիծաղել, զրուցել միմյանց հետ:

Կշռադատում (15 րոպե)

Ուսուցիչն աշակերտներին հանձնարարում է կարդալ ստորև բերվող իրավիճակները և պատասխանել հաջորդող հարցերին:

Իրավիճակ 1.

10 տարեկան երեխան ապրում է ծայրահեղ աղքատ ընտանիքում: Մի օր ծնողներն առաջարկում են երեխային բարեկամ ընտանիքի հետ մեկնել արտերկիր աշխատելու՝ ընտանիքի նյութական կարիքները հոգալու նպատակով: Երեխան մեծ սիրով համաձայնվում է և մեկնում: *Արդյո՞ք երեխան մարդու թրաֆիքինգի զոհ է: Ընտրե՛ք ստորև բերվող տարբերակներից ճիշտը:*

1. Այո: Նույնիսկ եթե երեխան համաձայն էր մեկնելու, միևնույն է նա շատ փոքր էր նման որոշում կայացնելու հարցում:
2. Այո: Երեխան պարզապես զրկվում է կրթության իրավունքից:
3. Ոչ, քանի որ ընտանիքը տվեց իր համաձայնությունը:
4. Ոչ, քանի որ երեխան իր կամքով է մեկնել:
5. Չգիտեմ:

Իրավիճակ 2.

16 տարեկան երկու դպրոցականներ որոշում են ամառային արձակուրդներին գնալ աշխատելու պահածոյի գործարանում: Նրանց ծնողները համաձայնում են, մտածելով, որ աշխատանքն օգտակար կլինի տղաների համար: Գործարանն այլ քաղաքում էր, և ծնողները երեխաներին գումար են տալիս տրանսպորտի և հանրակացարանում սնվելու համար: Սպասվելիք եկամուտների ակնկալիքով տղաները առաջին իսկ օրը գնում են տվյալ քաղաքի ժամանցային կենտրոն ու իրենց ողջ գումարը ծախսում այնտեղ: Հաջորդ օրն իմանում են, որ աշխատավարձը ստանալու են միայն ամսվա վերջին: բայց քանի որ սնվելու գումար չունեին, որոշում են երեկոյան փողոցում կանգնել ու գումար մուրալ: Ոստիկանությունը նրանց բռնում է ու տուն ուղարկում: *Արդյո՞ք նրանք մարդու թրաֆիքինգի ենթարկվեցին: Ընտրեք ստորև բերվող այն տարբերակները, որոնք համապատասխանում են իրականությանը:*

1. Այո: Նրանք աշխատում էին գործարանում, բայց սոված էին:
2. Ոչ, քանի որ գործարանը պետք է վճարեր նրանց պայմանավորված ժամանակին:

3. Ոչ, քանի որ նրանք իրենց կամքով էին մուրացկանություն անում:
4. Չգիտեմ:

Իրավիճակ 3.

22-ամյա մի տղա ամուսնության առաջարկ է անում 19-ամյա մի աղջկա: Նա վճարում է մի տղամարդու և կնոջ՝ որպես իր ծնողներ հանդես գալու համար: Աղջիկն ու տղան ամուսնանում են և մեկնում արտերկիր: Մեկ շաբաթ անց տղան պարտադրում է աղջկան զբաղվել մարմնավաճառությամբ: Աղջիկը դառնում է մարմնավաճառ և սպասում այն օրվան, երբ կկարողանա դուրս գալ այդ կարգավիճակից: *Ինչպես կբնութագրեք աղջկա վիճակը:*

1. Ամուսնություն:
2. Խաբված և շահագործված, բայց թրաֆիքինգի չենթարկված:
3. Թրաֆիքինգի զոհ:
4. Չգիտեմ:

ԴԱՍ 4.
Թրաֆիքինգի դրսևորումները (շարունակություն)

Դասի նպատակները

Այս դասի արդյունքում սովորողները

- կկարողանան վերլուծել իրավիճակներ՝ տարբերակելով մարդու թրաֆիքինգի և շահագործման տարրերը և տեսակները:

Խթանում (10 րոպե)

Ուսուցիչը ներկայացնում է դատողություններ և աշակերտներին առաջարկում արտահայտել իրենց դիրքորոշումը համաձայն եմ/համաձայն չեմ տարբերակով:

1. Մարդու թրաֆիքինգը և անկանոն միգրացիան նույն բանն են:

2. Մարդու թրաֆիքինգի և շահագործման զոհերն անխելք մարդիկ են:

Իմաստի ընկալում (25 րոպե)

Ուսուցիչը դասարանը բաժանում է երեք խմբի: Յուրաքանչյուր խմբի տրվում է մեկ իրավիճակ: Աշակերտները պետք է վերլուծեն յուրաքանչյուր իրավիճակը և ամբողջ դասարանին ներկայացնեն մարդու թրաֆիքինգի և շահագործման տարրերը (Գլուխ 1):

Իրավիճակ 1.

Ա.-ն 21 տարեկան աղջիկ է: Նա ցանկանում է աշխատել որպես մոդել, բայց չունի աշխատանքային փորձ: Հունվարի 1-ին նա ստորագրեց պայմանագիր X ընկերության հետ, որի համաձայն նա պետք է աշխատեր արտասահմանում որպես մոդել: Մի շարք կետեր չներառվեցին աշխատանքային պայմանագրում, բայց դրանց շուրջ եղան բանավոր պայմանավորվածություններ Ա.-ի և ընկերության տնօրենի միջև: Դրանք էին՝

1. Նա պետք է օրական 30 րոպե լիներ բեմում, մնացած ժամանակը նա չպետք է աշխատեր, բայց պետք է լիներ ընկերության տրամադրության տակ:
2. Ընկերությունը օրական երեք անգամ պետք է սնունդ հատկացներ Ա.-ին:
3. Ընկերությունը Ա.-ին պետք է ապահովեր կացարանով:

Սահմանն անցնելուց հետո Ա.-ն գումար խնդրեց սնվելու համար, բայց ընկերության աշխատակիցն ասաց, որ նա դեռևս չի աշխատել, որպեսզի իրեն վճարեն: Երբ Ա.-ն հասավ նպատակակետ երկիր, պարզ դարձավ, որ նա պետք է բնակվի փոքրիկ կացարանում, ընկերության երկու այլ աշխատակիցների հետ: Առաջին աշխատանքային օրվա ներկայացումից հետո Ա.-ին արգելվեց հեռանալ աշխատավայրից և նրան սնունդ չտրվեց: Հաջորդ օրը, երբ Ա.-ն գումար խնդրեց սննդի համար, նրան ասվեց, որ նախորդ օրը լավ չի աշխատել, և չեն կարող իրեն գումար տալ: Ա.-ն ցանկություն հայտնեց հետ վերադառնալ: Երբ վերադարձից հետո նա դիմեց ընկերության տնօրենին, ստացավ նախօրոք խոստացված գումարի 1/3-ը:

Իրավիճակ 2.

Գ.-ն և Դ.-ն որոշում են մեկնել Իսպանիա գյուղատնտեսության ոլորտում աշխատելու նպատակով: Նրանց որոշման համար հիմք էր ծառայել տեղական կազմակերպություններից մեկի նրանց աշխատանքով ապահովելու մասին խոստումը: Նրանք վճարեցին 2000 ԱՄՆ դոլար այդ գործակալությանը և մեկնեցին Իսպանիա: Նրանց տարան մի բնակարան, որտեղ ոչ հոսանք կար, ոչ ջուր, ոչ էլ՝ կահույք: Տղաները ամեն առավոտ ժամը 6-ին գնում էին այգի միրգ հավաքելու և վերադառնում կեսգիշերին: Վաստակած գումարով կարողանում էին գնել միայն որոշ սննդատեսակներ և ջուր: Մի օր տղաները վերադարձան Հայաստան:

Իրավիճակ 3.

Լ.-ն համալսարանն ավարտելուց հետո ցանկություն ուներ աշխատելու արտասահմանում: Աշխատանքային գործակալությունը նրան առաջարկեց երեխաներին խնամողի աշխատանք մի ընտանիքում, որտեղ կային մինչև 5 տարեկան երեք երեխաներ: Աշխատանքը Փարիզում էր և Լ.-ին համոզեցին, որ ֆրանսերենի չիմացությունը խնդիր չէ, քանի որ ընտանիքի հետ ապրելով շատ արագ կյուրացնի այդ լեզուն: Նա տուրիստական վիզա ստանալուց հետո մեկնեց Փարիզ: Օդանավակայանում նրան դիմավորեց այդ ընտանիքի ենթադրյալ հայրը և ուղեկցեց տուն: Ճանապարհին նա հարցրեց, թե քանի ամսով է մուտքի վիզա ստացել: Տեղեկանալով որ վիզան մեկ ամսվա համար է, ենթադրյալ հայրը վերցրեց Լ.-ի անձնագիրը վիզան վեց ամսով երկարացնելու համար:

Երբ նրանք ժամանեցին տուն, պարզվեց, որ այնտեղ երեխաներ չկան: «Մենք կատակել ենք: Այս տան երեխան ես եմ, և դուք պետք է ինձ խնամեք»,- ասում է ենթադրյալ հայրը և հայտնում, որ Լ.-ն պետք է մարմնավաճառությամբ զբաղվի: Նա սպառնում է Լ.-ին չփորձել որևէ տեղ զանգել կամ որևէ մեկին դիմել, քանի որ ինքը սպանել է նման փորձեր ձեռնարկած այլ մարդկանց:

Կշռադատում (10 րոպե)

Ուսուցիչն աշակերտներին առաջարկում է խմբերով ընթերցել ստորև բերվող իրավիճակները և պատասխանել հաջորդող հարցերին՝ հիմնավորելով պատասխանները:

Իրավիճակ 1.

Արտերկրում աշխատող մի տղամարդ առաջարկում է 17 տարեկան դպրոցականին թողնել դպրոցը և իր հետ մեկնել աշխատելու: Դպրոցականն ընդունում է առաջարկը և աշխատանքի ընդունվում մի մասնավոր ընկերությունում: Անցան շաբաթներ, բայց երեխան ոչ մի գումար չստացավ իր աշխատանքի դիմաց: Երբ երեխան որոշեց այլևս չաշխատել, ընկերության տնօրենն ասաց. «Մենք զգալի գումար ենք վճարել քո ընկերոջը քեզ այստեղ բերելու համար: Մեզ վերադարձրու այդ գումարը, և մենք կթողնենք, որ դու գնաս»: Անցավ մեկ տարի, և երեխան շարունակում էր աշխատել նույն պայմաններում:

Հարց. Արդյո՞ք երեխան թրաֆիքինգի զոհ է:

Իրավիճակ 2.

18 տարեկան մի երիտասարդ ԱՄՔՈՐ-ի գործընկեր կազմակերպության կողմից ուղղորդվել էր ԱՄՔՈՐ-ի ապաստարան: Հարցազրույցից պարզվել էր, որ նա թրաֆիքինգից տուժած է: Նրա պատմությունը կարող է արտասովոր թվալ, սակայն ունի շատ նմանություններ այլ տուժածների պատմությունների հետ: Նա երեք տարեկան էր, երբ ընտանիքը տեղափոխվեց Երևան: Նրա հայրը մահացավ: Տղայի ավելի երիտասարդ քույրերին և եղբորը ուղարկեցին տարբեր մանկատներ: Որոշ ժամանակ նա սովորում էր հատուկ կրթական հաստատությունում, որտեղ, ըստ նրա, նա ապրում էր բավարար պայմաններում:

Երբ նա դարձավ 17 տարեկան, նրան տեղափոխեցին այլ մանկատուն, և նա այնտեղ մնաց մեկ տարի: 2006 թվականին նրա խորթ մայրը եկավ և ուժով տարավ նրան մանկատնից՝ պնդելով, որ կունենան իրենց տունը՝ լավ պայմաններով, և նա ոչնչի պակաս չի զգա: Իրականությունն այլ էր: Երբ նրանք հասան Երևան, պարզվեց,

որ խոստացված «բնակարանը» մի խղճուկ սառը ներքնահարկ է մի հիվանդանոցի ընդունարանի կողքին: Նրանք աթոռներ կամ մահճակալներ չունեին, սենյակում կար միայն սեղան: Նա քնում էր հատակին: Խորթ մայրը ապրում էր իր ռուս ընկերոջ հետ: Նրանք երկուսն էլ շատ էին խմում և ոչ մի տեղ չէին աշխատում: Շուտով նրանք ստիպեցին տղային մուրալ փողոցներում և նրանից վերցնում էին հավաքած ամբողջ գումարը: Անգամ «սահմանել էին», թե օրական որքան գումար պետք է բերի. ոչ պակաս, քան 5000 դրամ: Այն օրերը, երբ նա չէր կարողանում հավաքել անհրաժեշտ գումարը, ամենածանրն էին, քանի որ նրան դաժանորեն ծեծում էին:

Ծեծից հետո նա հաճախ փախչում էր «տնից», բայց շուտով հայտնաբերվում և վերադարձվում էր տուն: Վերջապես, երբ նա հրաժարվեց վաստակած գումարը տալ իր «ծնողներին», նրա վրա եռացրած ջուր լցրին: Նրա մարմնի վրա այրվածքի հետքեր ու կապտուկներ կային: Նա արդեն հոգնել էր ծեծից ու մուրացկանությունից: Նա իր ընկերոջից լսել էր Հայ օգնության միության մասին և դիմեց նրանց: Այստեղից նրան ուղարկեցին ԱՄՔՈՐ և ներգրավեցին օգնության ծրագրում: Տղան ուզում էր սովորել դերձակի ու կոշկակարի արհեստները, նաև ցանկանում էր ֆլեյտա նվագել (ժամանակին նա մի փոքր սովորել էր նվագել):

Օգնությունը տրամադրել է ԱՄՔՈՐ/ԺԱ ՀԿ -ի ծրագիրը

Հարց. Թրաֆիքինգի ի՞նչ եղանակներ և ձևեր են օգտագործվում վերոնշյալ օրինակում:

Դասը կարելի է ամփոփել հետևյալ և նման հարցերով.

1. Մարդու թրաֆիքինգի և շահագործման ինչպիսի՞ դրսևորումների հետ ծանոթացանք:
2. Կա՞ն արդյոք մարդու թրաֆիքինգի և շահագործման տարրեր, որոնք ընդհանուր են բոլոր իրավիճակների համար:

Լրացուցիչ ընթերցանության նյութ

«Յոթ հոգով մի փոքր սենյակում էինք մնում, որտեղ նույնիսկ տարրական կոմունալ հարմարություններ չկային: Համարյա միշտ

կիսասոված էինք. օր էր լինում՝ ցամաք հաց էինք ուտում, լինում էր՝ կաղամբի կոթեր, օր էլ է եղել՝ բան չենք կերել: Ութ ամիս այդպես արդեն աշխատել էինք, երբ իմացանք, որ Խ-ը ոչ մի կոպեկ մեր տուն չի ուղարկել՝ չնայած որ եղբոր գերեզմանով էր երդվում, որ տնեցիք ամեն ամիս փողը ստանում են»,- պատմում է Գյումրու բնակիչ, 42-ամյա Ռ. Կ-ն:

Դեկտեմբերի 8-ին Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանում սկսվեց Խ. Մ.-ի դեմ հարուցված քրեական գործի դատաքննությունը: Նա մեղադրվում է Ռ. և է. Կ.-երին, Ա.Գ.-ին հավաքագրելու և Ռուսաստանի Դաշնության Թաթարստանի հանրապետության Ալմետևսկ քաղաքում ավելի քան մեկ տարի աշխատանքային շահագործման ենթարկելու մեջ:

Մինչև Թաթարստան մեկնելը Ռ-ն աշխատում էր Ծաղկաձորում՝ շինարարության վրա: Երբ ավարտվեցին աշխատանքները, վերադարձավ Գյումրի: 2003թ.-ի դեկտեմբերին Գյումրիում հարազատներից մեկի թաղման արարողության ժամանակ հանդիպում է մորաքրոջ տղային՝ Խ-ին և պատմում, որ նյութական ծանր վիճակում է և աշխատանք է փնտրում: Խ-ը նրան պատմում է, որ իր ընկերներից մեկը՝ Մ-ն, Թաթարստանում շինարարության վրա աշխատող խումբ է հավաքում, և նրանք միասին կարող են մեկնել: Ռ-ն համաձայնվում է: Որոշ ժամանակ անց Խ-ը գնում է Ռ-ի տուն՝ գործի մանրամասները քննարկելու: Ռ-ի ու նրա կնոջ՝ Հ. Կ.-ի հետ զրույցի ընթացքում Խ-ն ասում է, որ ամսական վճարը վարպետի գործի համար կկազմի մոտ 400 դոլար, իսկ բանվորի համար՝ մոտ 350 դոլար, որից կհանվի ապրուստի ամսական գումարը՝ 50 ԱՄՆ դոլար:

Ռ-ն որոշում է իր հետ վերցնել նաև 16-ը նոր լրացած որդուն՝ է-ին, և իր կնոջ եղբորը՝ Ա-ին: Քիչ փող չէր առաջարկում: Ու քանի որ մեծ ընտանիք ենք, հոգսերն էլ շատ են՝ մեծ տղաս հիվանդ էր, բանակի, համալսարան ընդունվելու հարց կար, դրա համար էլ մտածեցի՝ վատ չի լինի, որ փոքր տղաս էլ Ռ-ի հետ գնա: Իսկ Խ-ի առաջ պայման դրեցի, որ է-ին Ռ-ից չբաժանի, պետք է միասին աշխատեն: Նա էլ համաձայնվեց, - պատմում է Հ. Կ.-ն:

Խ-ն ասում է, թե ճանապարհածախսի գումար չունի, և նրանք պետք է գումար ճարեն մեկնելու համար: Հետո էլ վստահեցնում է, որ հասնելուց ամենաշատը 20 օր հետո այն կուղարկեն: Ուստի, Ռ-ն ու Ա-ն տոկոսով 300 դոլար են վերցնում ու ապրիլի 25-ին մեկնում:

Հասնելուն պես Ռ-ն ու Ա-ն իմանում են, որ աշխատելու են Խ-ի ղեկավարությամբ: Խ-ը Ռ. և Է. Կ.-երին ու Ա-ին մի քանի այլ բանվորների հետ բնակեցնում է Ալմետևսկի մոտ գտնվող Տեխսնաբ գյուղում վարձակալած սենյակում, որտեղ անկողիններից բացի ոչինչ չի լինում:

«Առավոտ 7-ից, երբեմն էլ 6-ից գնում էինք աշխատելու: Չնայած նախապես պայմանավորվել էինք աշխատել մինչև իրիկվա 7-ը կամ ամենաուշը 8-ը, լինում էր՝ գիշերը 1-ին ու 2-ին էինք գալիս: Նորմալ հաց չէինք ուտում: Մի անգամ էլ հիվանդացա, ոչ դեղ առավ, ոչ էլ բժիշկ կանչեց: Որ մի բան էլ ուզում էինք, ասում էր՝ փող չունեմ, լավ չեք աշխատում, փողը քիչ ա: Բայց երդում էր ուտում, որ աշխատածներս տուն ա ուղարկում»,- պատմում է Ա. Գ.-ն:

Որոշ ժամանակ անց Խ-ը գրանցման հարցերը լուծելու պատրվակով հավաքում է նրանց անձնագրերը, հետո էլ հայտարարում, թե գործ չկա ու դրա համար էլ պետք է ուրիշ բրիգադիրի մոտ ուղարկի աշխատելու: 2004-ի հունիսին Խ-ը Ռ-ին առանց Է-ի ուղարկում է Նուրլատ գյուղ: Մոտ 7 ամիս աշխատելուց հետո Ռ.-ն վերադառնում է ու տեսնում, որ Խ-ը դաժան ծեծի է ենթարկել Է-ին:

«Երեխան ասել էր՝ փող տուր տուն գանգեմ, տեսնեմ ինչ կա: Նա էլ ծեծել էր երեխուն: Հետո էլ մի փչացած հեռախոս էր նվիրել ու խոստացել, որ կլիցքավորի, բայց ոչինչ էլ չէր արել: Ընդհանրապես շատ էր լինում, որ խմած գալիս էր ու ծեծկռտուք սարքում: Իսկ բողոքել չէինք կարող, քանի որ ոստիկանների հետ լավ հարաբերությունների մեջ էր»,- դատարանում ասաց Ռ.Կ-ն:

Մի քանի անգամ էլ Ա. Գ-ն է ծեծվել, երբ տուն վերադառնալու համար Խ-ից անձնագիրն է պահանջել: Այսպես ամիսներ շարունակ Խ-ը Կ-երի ու Ա.Գ.-ի՝ տարբեր խմբերում աշխատելուց եկամուտ էր ստանում, իսկ նրանց հայտարարում, թե վատ են աշխատել, դրա համար էլ գործատուները չեն վճարել:

Այդ ընթացքում Գյումրիում Հ. Կ.-ն մի քանի անգամ այցելել է Խ-ի բնակարան՝ նրա ընտանիքից ինչ-որ լուր իմանալու:

«Շատ վատ էին ինձ ընդունում, կոպտում էին ու ասում, որ ոչ մի տեղեկություն չունեն: Մի օր էլ նրանց մոտից հենց տուն վերադարձա, Խ-ը զանգեց ու սկսեց սպառնալ ու պահանջել, որ իր ընտանիքին չանհանգստացնեմ: Հետո էլ Ռ-ի հետ խոսեցի, ասացի, որ հայրը վատ

է, մեծ տղային էլ հոսպիտալ են պառկեցրել, տոկոսներն էլ մի կողմից. գումար է հարկավոր: Զարմացավ, կարծում էր փող ենք ստանում: Հետո էլ կաշկանդված ասաց, թե ամեն ինչ լավ կլինի, որ չբողոքեմ: Մի անգամ էլ Խ-ը զանգեց ու սպառնաց, թե եթե նորից ընտանիքին անհանգստացնեմ կամ բողոք գրեմ, է-ի գլուխը փաթեթավորած կուղարկի»,- պատմում է Հ.Կ.-ն:

Սակայն Հ.Կ.-ն 2004-ի նոյեմբերից սկսում է տարբեր ատյաններ բողոքներ գրել: Ռ. ու է. Կ.-երը և Ա. Գ.-ն հետախուզման մեջ են հայտնվում: Հետո բողոքները հասնում են Մոսկվա, որտեղից էլ հարցում է կատարվում Թաթարստան: 2005-ի մայիսին Թաթարստանի միգրացիայի վարչությունը ձերբակալում է Ռ. Կ.-ին և ուղարկում Կազան: Ռ-ը Կազանի բանտում 2 ամիս է անցկացնում, որի ընթացքում ձերբակալվում են որդին՝ է-ն ու Ա.Գ.-ն: Հուլիսին Ռ. և է. Կ.-երն ու Ա. Գ.-ն վերադառնում են Հայաստան:

Խ-ը դատավարության ընթացքում հրաժարվեց պատասխանել հարցերին և հայտարարեց, որ պնդում է նախաքննական ցուցմունքները: Նա նախաքննական ցուցմունքում պատմել է, որ Ռ. Կ.-ն խաբել է իրեն, թե լավ վարպետ է, և որ նրա կատարած ցանկացած գործ բողոքի տեղիք է տվել: է-ն ու Ա.Գ.-ն էլ լավ չեն աշխատել, դրա համար էլ ինքը ոչ մի գումար չի ստացել: Ինչ վերաբերում է սննդին ու ծեծին, սուտ է: Բացի այդ, ինքը որոշակի գումար է նրանց վճարել, սակայն ապացուցել չի կարող:

Դատարանը Խ-ին դատապարտեց 5 տարի ազատազրկման և պարտավորեցրեց Ռ. և է. Կ.-երին ու Ա.Գ.-ին վճարել 11 հազար 400 ԱՄՆ դոլար:

ԴԱՍ 5.
Երիտասարդությունը՝ որպես մարդու թրաֆիքինգի և շահագործման ռիսկային խումբ

Դասի նպատակը

Սովորողը պետք է՝

- թվարկի և քննարկի այն գործոնները, որոնք երիտասարդներին դարձնում են թրաֆիքինգի և մարդկանց շահագործման առավել խոցելի խումբ,
- առաջարկի և հիմնավորի խնդրի լուծման տարբերակներ:

Խթանում (5 րոպե)

Ուսուցիչը կազմակերպում է բանավոր քննարկում հետևյալ հարցի շուրջ. «Ինչու են երիտասարդները համարվում մարդկանց առևտրի առանձնահատուկ ռիսկային խումբ»:

Իմաստի ընկալում (25 րոպե)

Ուսուցիչն աշակերտներին հանձնարարում է ընթերցել «Երիտասարդությունը՝ որպես մարդու թրաֆիքինգի և շահագործման ռիսկային խումբ» նյութը (Տե՛ս Գլուխ 4, Գ կետ):

Այնուհետև ուսուցիչը կատարում է վարժություն՝ «պատճառների ինտելեկտուալ գրոհ», որոնց պատճառով երիտասարդությունը համարվում է մարդկանց թրաֆիքինգի ռիսկի խումբ: Վարժության նպատակն է՝ խորացնել գիտելիքները և որոշել պատճառները, թե ինչու են հատկապես երիտասարդները դառնում մարդու թրաֆիքինգի զոհ, ինչպես նաև որոնել լուծումներ այդ երևույթի կանխարգելման համար: Առաջադրանքի կատարման համար անհրաժեշտ է ստեղծել մթնոլորտ, որտեղ բոլորն իրենց ազատ կզգան և արտահայտվելու հնարավորություն կունենան:

Դասարանը բաժանում է 5 կամ 6 խմբերի՝ պայմանավորված սովորողների թվով: Յուրաքանչյուր խմբին տրվում է որոշակի քանակությամբ թղթեր, որոնց վրա խմբային քննարկումներից հետո աշակերտները պետք է թվարկեն երիտասարդների՝ թրաֆիքինգի զոհ

դառնալու պատճառները: Յուրաքանչյուր պատճառ գրվում է առանձին թղթի վրա: Խմբի յուրաքանչյուր անդամի տրվում է մեկ թերթիկ, որում նշված խնդրի լուծումը նա պետք է գտնի՝ աշխատելով անհատապես, և գրի նույն թերթիկի վրա:

Այնուհետև ուսուցիչը հրահանգ է տալիս փոխանակել թերթիկները: Խմբի հաջորդ անդամը կարդում է, թե ինչ է գրել նախորդ աշակերտը և իր կողմից կատարում է լրացում: Թղթերը փոխանցվում են ձեռքից ձեռք այնքան, մինչև խմբի բոլոր անդամները կարդան և ավելացնեն իրենց կարծիքները: Այնուհետև խմբում քննարկվում են ինչպես պատճառները, այնպես էլ հնարավոր լուծումները, որից հետո խումբը դասարանին ներկայացնում է առաջադրված խնդիրը և լուծման իր առաջարկները:

Կշռադատում

Համոզմունքների վերլուծություն: Վարժության նպատակն է խթանել երիտասարդների՝ ինքնուրույն վերլուծելու կարողությունը:

Դասարանը բաժանվում է 2 խմբի: Ուսուցիչն աշակերտներին բաժանում է թերթիկներ, որտեղ գրված են պնդումներ թրաֆիքինգի մասին, հանձնարարում է քննարկել այն խմբով և լրացնել սյունակները՝ բերելով կողմ կամ դեմ փաստարկներ՝ ելնելով խմբի դիրքորոշումից:

Ուսուցիչն ընթերցում է պնդումներից յուրաքանչյուրը, իսկ երկու խմբերը ներկայացնում են նույն պնդման վերաբերյալ իրենց գրած փաստարկները: (10 րոպե)

1. Մարդկանց վաճառքը չի վերաբերում նորմալ մարդկանց:

.....

2. Մարդկանց վաճառքի զոհերը ծագումով գյուղական վայրերից են կամ՝ փախստականներ:

.....

3. Մարդկանց վաճառքի զոհերը իրենք են մեղավոր կատարվածի համար, քանի որ շատ միամիտ են եղել:

.....

4. Ե՛վ տղամարդկանց, և՛ կանանց համար միևնույն հնարավորություններն են աշխատանքի շուկայում:

.....

5. Ծանոթների կողմից կատարված աշխատանքային առաջարկություններին կարելի է հավատալ:

.....

6. Բարձրագույն կրթությամբ մարդիկ չեն դառնում մարդկանց առևտրի զոհ:

.....

7. Օտար լեզվի տիրապետումն այնքան էլ կարևոր չէ՝ բավական է իմանալ պարզագույն արտահայտություններ, որոնք օգտագործվում են առօրյա կյանքում:

.....

8. Պատճառներից մեկը, որի հիման վրա մարդիկ մեկնում են արտերկիր, զանգվածային լրատվամիջոցներից ստացած սխալ պատկերացումներն են:

.....

9. «Գործարար մարդիկ» ամենուրեք են, այնպես որ քեզ կարող են խաբել նույնիսկ հայրենիքում:

.....

ԴԱՍ 6.
«Վիկտիմություն», «վիկտիմ վարք» հասկացությունները

Դասի նպատակը

Սովորողը պետք է կարողանա՝

- սահմանել ու բնութագրել վիկտիմ վարքը,
- թվարկել ու քննարկել վիկտիմ վարքի դրսևորման ձևերը,
- համարժեք գնահատել ստեղծված իրավիճակը:

Խթանում (10 րոպե)

Կիրառել «Համառոտ դասախոսության մեթոդը»: Ուսուցիչը տեղեկատվություն է տալիս սովորողներին վիկտիմ վարքի մասին (Տե՛ս Գլուխ 3, Դ կետ):

Ուսուցիչը կազմակերպում է քննարկում հետևյալ հարցերի շուրջ.

- Ի՞նչ է իրենից ներկայացնում վիկտիմ վարքը:

- Ձեր կարծիքով որո՞նք են վիկտիմ վարքի դրդապատճառները:

Դասի այս փուլում վեր են հանվում ինչպես աշակերտների նախնական գիտելիքները, այնպես էլ այն, ինչ նրանք նոր սովորեցին:

Իմաստի ընկալում (20րոպե)

Ուսուցիչը դասարանը բաժանում է 4 խմբի: **Մեթոդը:** Ուսուցիչը հանձնարարում է ընթերցել ձեռնարկից «Վիկտիմություն, վիկտիմ վարք» նյութը:

Կիրառել «Փոխգործուն նշանների» մեթոդը:

Ուսուցիչն առաջարկում է սովորողներին ընթերցել նյութը և կատարել նշումներ՝ օգտագործելով ՓԳՀ-ի նշանները:

V հաստատում է իմ իմացածը

\+ նոր տեղեկատվություն է

\- իմացածին հակասում է

? անհասկանալի է

! հետաքրքիր է, կարելի է քննարկել

Անհատական աշխատանքից հետո աշակերտները խմբում քննարկում են իրենց գրառումները և նշում աղյուսակի համապատասխան սյունակում՝ դասակարգելով իրենց գիտելիքները:

V	+	-	?	!

Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր կազմած աղյուսակը:

Կշռադատում (15 րոպե)

Այս փուլում որպես նախաբան ուսուցիչը ներկայացնում է. «Աղքատությունից, անապահով պայմաններից, տնտեսական և քաղաքական դժվարություններից դրդված, մարդիկ լքում են իրենց հայրենի տները՝ ավելի լավ կյանք գտնելու հույսով: Այդ որոնումներն, ավաղ, կարող են տանել դեպի դժոխք: Տղամարդ, կին, թե երեխա՝ բոլորը կարող են վիկտիմ վարքի դրսևորման հետևանքով դառնալ թրաֆիքինգի զոհ...»

Այնուհետև ուսուցիչը ներկայացնում է վիկտիմ վարքի պոտենցիալ զոհերին հավաքագրելու հիմնական ձևերն ու միջոցները.

- Ծանոթներին ու պատահական մարդկանց հավատալը,
- Արտասահմանում աշխատանքի տեղավորելու հայտարարությունները,
- Ամուսնական հայտարարությունները,
- Ինտերնետում տեղադրված հայտարարությունները:

Ապա յուրաքանչյուր խմբին տալիս է վերոհիշյալ թեմաներից մեկը, որի շուրջ նրանց հանձնարարում է հորինել և ներկայացնել մի պատմություն կամ իրավիճակ: Վերջում ուսուցիչը դասն ամփոփում է՝ յուրաքանչյուր խմբին հանձնարարելով գրել մեկ կարգախոս իրենց նկարագրած իրավիճակում չհայտնվելու համար: Ուղղորդելու

համար ուսուցիչը խմբերին տալիս է հետևյալ բանալի արտահայտությունները. «Մի՛ գայթակղվեք....», «Մի՛ հավատացեք....», «Մի՛ տվեք ձեր անձնական փաստաթղթերը...» և այլն (Ցանկալի է աշակերտներին նախապես ծանոթացնել Դաս 7 -ի *«Գործնական խորհուրդներ. Ինչպե՞ս խուսափել մարդկանց շահագործումից» նյութին*):

ԴԱՍ 7.
Մարդու թրաֆիքինգի և շահագործման կանխարգելումը

Դասի նպատակը

Սովորողը պետք է՝

- ներկայացնի թրաֆիքինգի կանխարգելման ուղղությունները,
- առաջարկի, մեկնաբանի և քննարկի մարդկանց շահագործումից (թրաֆիքինգից) խուսափելու կոնկրետ ուղիներ ու միջոցներ:

Դասի ընթացքը

Դասարանը նախապես բաժանվում է 5 կամ 6 խմբի (պայմանավորված սովորողների թվով):

Խթանում

Ուսուցիչը թրաֆիքինգի կանխարգելման մասին փոքրիկ ներածական խոսք է ասում, որից հետո խմբերին առաջարկում է ընթերցել և ուսումնասիրել *«Մարդկանց շահագործման դեպքերի նկարագրություններ»* ենթաբաժինը: Յուրաքանչյուր խումբ ուսումնասիրում է իր համար նախատեսված դեպքի նկարագրությունը:

Մարդկանց շահագործման դեպքերի նկարագրություններ

Ընթերցում և քննարկում է առաջին խումբը:

Հեռավոր լեռնային գյուղում բնակվող մի տղամարդ, որն աշխատում է արտասահմանում, իր 16-ամյա համագյուղացուն

առաջարկում է թողնել դպրոցն ու իր հետ մեկնել արտագնա աշխատանքի: Տղան համաձայնում և արտասահմանում աշխատանքի է անցնում մի մասնավոր գործարանում: Մի քանի շաբաթ անցնելուց հետո տղան հասկանում է, որ իրեն չեն պատրաստվում վարձատրել: Երբ տղան ցանկանում է թողնել աշխատանքը և հեռանալ, հրացանով զինված պահակը նրան արգելում է՝ ասելով, որ նրա համար գործարանատերը մեծ գումար է վճարել, և նա կարող է հեռանալ գումարը վերադարձնելուց հետո միայն: Մեկ տարի է անցել, բայց տղան դեռևս աշխատում է այդ պայմաններում...

Ընթերցում և քննարկում է երկրորդ խումբը:

Բարձր առաջադիմություն ունեցող մի ուսանողուհի երազում էր ուսումը շարունակել արտասահմանյան հեղինակավոր ուսումնական հաստատություններից մեկում: Աղջկա ծնողները չունեին բավարար միջոցներ իրենց դստեր կրթությունը արտասահմանում ապահովելու համար: Աղջկա ծանոթներից մեկը, որն աշխատում էր արտասահմանում և շատ հարուստ մարդ էր, առաջարկում է նրան իր հետ մեկնել արտասահման: Աղջիկն ընդունում է առաջարկը, իսկ այդ անձնավորությունը նրան արտասահմանում ստիպում է զբաղվել մարմնավաճառությամբ ...

Ընթերցում և քննարկում է երրորդ խումբը:

Աղջիկը մատուցողուհի էր աշխատում սրճարաններից մեկում: Երբ սրճարանը փակվում է, աղջկան փողոցում հանդիպում է սրճարանի մշտական հաճախորդներից մեկը և առաջարկում է գնալ Դուբայ. այնտեղ շատ աշխատանք կա սրճարաններում, ռեստորաններում և բավականին լավ վարձատրությամբ: Աղջիկը համաձայնվում է: Այդ կնոջ տանը նա հանդիպում է մեկ այլ կնոջ: Վերջինս բացատրում է, որ ավելի հեշտ է կանանց խմբով տանել: Նա վճարում է աղջկա տոմսի գումարը և 200 դոլար էլ տալիս է, որպեսզի աղջիկը թողնի ընտանիքի անդամներին: Դուբայի օդանավակայանից կանանց տանում են փոքրիկ հյուրանոց և հրահանգում պատրաստ լինել հաճախորդներ ընդունելու: Աղջիկը, լսելով «հաճախորդ» բառը շատ է զարմանում. նրան ասել էին, որ

պետք է մատուցողուհի աշխատի: Հաջորդ օրը «կազմակերպիչ» կինը գալիս է մի արաբի ուղեկցությամբ: Պարզվում է, որ կանանց վաճառել են այդ արաբին, ու եթե կանայք չանեն այն, ինչ նա ասեր, նա կարող էր նրանց հետ վարվել ինչպես կամենար: Դա նրա երկիրն էր, և բոլորը կհավատային նախ և առաջ նրան, իսկ ոստիկանությունն ու էմիգրացիոն պաշտոնյաները բողոքներ չէին ընդունի: Այդ օրվանից սկսվեց աղջկա թշվառ կյանքը ...

Ընթերցում և քննարկում է չորրորդ խումբը:

Ամուսնու մահից հետո կինը մնում է մենակ չորս երեխաների հետ: Նա չէր կարողանում աշխատանք գտնել Հայաստանում: Հարևանուհին, որը նույնպես աշխատանք էր փնտրում, տեղեկացնում է, որ իր ծանոթներից շատերը աշխատանք են գտել Թուրքիայում՝ ավտոբուսային գործակալների միջոցով: Նրանք միասին հասնում են Թուրքիա, մտնում գործակալություն, որտեղ նրանց արդեն սպասում էր մի մարդ: Վերջինս նրանց գործ է առաջարկում իր գործարանի ճաշարանում՝ շաբաթական 200 դոլար վարձավճարով՝ օրական 10 ժամ աշխատանքի դիմաց: Երբ շաբաթն անցնում է կանայք խնդրում են իրենց վարձատրել, բայց գործատերն ասում է, որ նրանք պետք է ավելի շատ աշխատեն, և պետք է վերանայի նախնական պայմանավորվածությունը: Մեկ շաբաթ ևս կանայք աշխատում են առանց վճարի ... Երկրորդ ամսվա վերջում, բազմաթիվ խնդրանքներից հետո, այդ մարդը վճարում է 100 դոլար: Ավելի ուշ, երբ կինը նորից է խոսակցություն բացում վարձատրության մասին (Երևանից նրան զանգել և տեղեկացրել էին, որ իր տղան հիվանդ է, և բուժման համար գումար է պետք), գործատերը սպառնում է էմիգրացիոն ոստիկանությանը հայտնել կնոջ ժամկետանց վիզայի մասին ...

Ընթերցում և քննարկում է հինգերորդ խումբը:

Երիտասարդ ընկերները երկար ժամանակ աշխատանք էին փնտրում: Վերջապես նրանցից մեկը թերթում Իսպանիայում աշխատելու բավականին գրավիչ առաջարկի վերաբերյալ հայտարարություն է կարդում:

Հայտարարությունը թերթում զետեղած գործակալության

միջոցով նրանք հասնում են Իսպանիա: Երիտասարդներին անմիջապես տանում են ֆերմա նարինջ հավաքելու: Առաջին իսկ օրը նրանց հետ պայմանագիր են կնքում: Այն գրված է լինում օտար լեզվով, երիտասարդները ոչինչ չեն հասկանում և, միայն կռահելով աշխատավարձի չափը՝ 250 եվրո, ստորագրում են: Հաջորդ օրվանից սկսվում է նրանց տաժանակիր աշխատանքը: Տղաներն աշխատում և ապրում էին աննկարագրելի ծանր պայմաններում: Նրանք օրական աշխատում էին 12-15 ժամ և աշխատավարձ կարող էին ստանալ, եթե կատարում էին օրվա նորման՝ 27 արկղ նարինջ: Նրանք ապրում էին կիսաքանդ, առանց պատուհանների խոնավ սենյակում, որտեղ չկար պահարան, աթոռ, սանհանգույց: Ընդհանուր լոգարանից օգտվելու համար հարկ էր ժամերով հերթ կանգնել: Գործակալությունում նրանց խոստացել էին, որ երիտասարդներն արագ կհարստանան, բայց երիտասարդների մտքով չէր էլ անցնում, որ այդ պայմաններում աշխատելով նրանք արագ ուժասպառ կլինեն և դժվար թե կարողանան գոնե տուն վերադարձի համար գումար վաստակել ...

Ընթերցում և քննարկում է վեցերորդ խումբը:

Քաղաքացի Կ.-ն գտնվում էր X երկրում ապօրինի (նրա մուտքի թույլտվության ժամկետը լրացել էր), սակայն չէր ցանկանում վերադառնալ ՀՀ, քանի որ հիվանդ կնոջ վիրահատության համար ցանկանում էր գումար վաստակել: Նա դիմում է իր ծանոթներին, խնդրելով իր հետ տվյալ երկիր եկած իր անչափահաս տղային իրենց հետ տանել ՀՀ, որպեսզի ինքը հնարավորություն ունենա աշխատանք գտնելու: Ծանոթները, չարաշահելով Կ.-ի խոցելի վիճակը, նրա անչափահաս տղային հանձնեցին «բարեգութ» մի ընտանիքի համարյա որպես ստրուկ աշխատեցնելու համար:

Խմբերին հանձնարարվում է նախ՝ խմբերի ներսում անհատապես, ապա՝ խմբային քննարկման արդյունքում որոշել, թե *կոնկրետ դեպքի առնչությամբ* ինչ է հարկավոր իմանալ և կամ նախապես ինչ քայլեր է անհրաժեշտ ձեռնարկել նման անցանկալի իրավիճակում չհայտնվելու, դրանից խուսափելու համար:

Քննարկման արդյունքների գրանցման համար ուսուցիչը խմբերին տրամադրում է ձևանմուշ:

Օրինակ՝

Ի՞նչ պետք է իմանալ, կամ նախապես ի՞նչ քայլեր են անհրաժեշտ ձեռնարկել նման անցանկալի իրավիճակում չհայտնվելու, դրանից խուսափելու համար.

1.....

.....

.....

2.....

.....

.....

Հանձնարարությունը կատարելուց հետո յուրաքանչյուր խումբ կարդում է դեպքի նկարագրությունը, առաջարկում անցանկալի իրավիճակից խուսափելու իր տարբերակը: Մյուս խմբերը լսում են, հարցեր տալիս, առաջարկում նոր տարբերակներ:

Բոլոր տարբերակները, համառոտ ձևակերպված, գրանցվում են գրատախտակին, և ստեղծվում է թրաֆիքինգից խուսափելու քայլերի շարք: (15 րոպե)

Իմաստի ընկալում

Ուսուցիչն առաջարկում է կարդալ և ուսումնասիրել *«Գործնական խորհուրդներ. Ինչպե՞ս խուսափել մարդկանց շահագործումից»* նյութը և այնտեղ ներկայացված գործնական խորհուրդները համեմատել իրենց առաջարկած տարբերակների, գործողությունների շարքի հետ (քննարկված կոնկրետ դեպքերի համար լրացուցիչ ի՞նչ խորհուրդների հանդիպեցին, ի՞նչ նոր խորհուրդներ ընթերցեցին, ո՞ր խորհուրդն էր ամենագործունը), տետրում նշումներ անել: *(20 րոպե)*

Կշռադատում

Սովորողներն իրենց ուսումնասիրությունների արդյունքները, կարծիքները ներկայացնում են ուսուցչին ու դասընկերներին, լսում նրանց կարծիքները: *(10 րոպե)*

Գործնական խորհուրդներ. Ինչպե՞ս խուսափել մարդկանց շահագործումից

- Նախքան ծանոթ կամ պատահական մարդկանց՝ արտասահմանում, ինչու չէ նաև Հայաստանում, աշխատելու, սովորելու, ամուսնության գայթակղիչ առաջարկներն ընդունելը, այն հանգամանալից քննարկեք ընտանիքի անդամների, բարեկամների և համապատասխան մասնագետների հետ: **Ոչ մի դեպքում մի՛ վստահեք նրանց ձեր փաստաթղթերը:** Արագ, հեշտ և մեծ գումար վաստակելը, որպես կանոն, իրականությանը չի համապատասխանում: Իրատես եղեք:
- Անմիջապես մի՛ վստահեք արտասահմանում կամ Հայաստանում աշխատանքի տեղավորման, ուսուցման կազմակերպման, ամուսնության վերաբերյալ քաղաքի (գյուղի) ամենատարբեր վայրերում փակցված, թերթերում, համացանցում տեղադրված հայտարարություններին: Դրանք ճշգրտման և հստակեցման կարիք ունեն:
- Մանրամասն հետաքրքրվե՛ք հրավիրող արտասահմանյան ֆիրմաների և տեղում աշխատանքն իրականացնող միջնորդ գործակալությունների (տուրիստական, ամուսնական, աշխատանքային, ուսումնական) օրինական գործունեության մասին:
- Համացանցում գտե՛ք հրավիրող ֆիրմայի տնային հասցեն, խորհրդակցեք մարդկանց շահագործման դեմ պայքարի հարցերով զբաղվող կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:[18]
- Պարզե՛ք՝ արդյո՞ք միջնորդական առաքելությամբ զբաղվող հայաստանյան գործակալությունը ունի գործունեություն ծավալելու թույլտվություն:

[18] Տե՛ս հավելվածում:

- Արտասահմանում ոչ մեկից կասկածելի նվերներ մի՛ վերցրեք: Կարիք չկա որևէ մեկի նկատմամբ պարտավորվածություն ունենալ:
- Նախքան աշխատանքի որևէ առաջարկ ընդունելը, թե՛ արտերկրում և թե՛ հայրենիքում, ճշտե՛ք աշխատանքի պայմանները, հստակեցրե՛ք հասցեներն ու հեռախոսահամարները, մանրամասն ծանոթացե՛ք և տեղյակ եղե՛ք ձեր՝ որպես երիտասարդ աշխատողի իրավունքներին:

Եթե դուք պատրաստվում եք մեկնել արտասահման՝

- Ոչ ոքի մի՛ վստահեք ձեր անձնագիրը: Ձեր անձը հաստատող փաստաթղթերը միշտ պետք է գտնվեն միայն ձեզ մոտ:
- Ձեր հարազատներին և ընկերներին մանրամասն տեղեկություններ թողե՛ք արտասահմանում ձեր բնակության վայրի մասին (հասցե, հեռախոսահամարներ), գործատուի մասին, թողեք արտասահմանյան ձեր ընկերների հասցեները:
- Հարազատների հետ պայմանավորվեք, թե ձեր մասին կոնկրետ երբ և ինչպես եք տեղեկություններ հայտնելու: Մշտապես կապ պահպանեք հարազատների հետ:
- Թողե՛ք տանը ձեր անձնագրի և պայմանագրի կրկնօրինակները, ձեր վերջին լուսանկարը: Անձնագրի լուսապատճենը տարեք ձեզ հետ, պահեք անձնագրից առանձին, որպեսզի անձնագիրը կորցնելու դեպքում հեշտ լինի այն վերականգնելը:
- Չմոռանա՛ք Ձեզ հետ վերցնել արտասահմանում հայկական դեսպանատների և հյուպատոսական ներկայացուցիչների հասցեներն ու հեռախոսահամարները:[19] Եթե դուք դժվար իրավիճակում եք հայտնվել կամ ձեզ ինչ-որ մեկը սպառնում է, դիմե՛ք Հայաստանի Հանրապետության դեսպանատուն, ինչպես նաև տեղի ոստիկանական ծառայություններին:
- Արտասահմանյան երկրներում ակտիվորեն աշխատում են հասարակական կազմակերպություններ և ծառայություններ,

[19] Տե՛ս հավելվածում:

որոնք ծանր իրավիճակում հայտնված մարդկանց օգնության են հասնում: Նախապես ճշտեք դրանց հասցեները:

Օտարերկրյա պետության տարածքում ձեր գտնվելու ժամկետը նշված է ձեր վիզայում: Վիզային ռեժիմի խախտումը անհնար կդարձնի արտասահման մեկնելու ձեր հաջորդ փորձը:

Մի մոռացե՛ք, որ օտար լեզվի թեկուզ տարրական բառերի իմացությունը զգալիորեն կթեթևացնի արտասահմանում ձեր գտնվելը և ծանր պահին կփրկի ձեզ:

Եթե դուք պատրաստվում եք պայմանագիր կնքել արտասահմանում աշխատելու կամ սովորելու նպատակով՝

- Եթե դուք պատրաստվում եք աշխատել կամ սովորել արտերկրում, պայմանագիրը կնքե՛ք Հայաստանում, այլ ոչ թե արտասահմանյան երկիր գնալուց հետո:
- Հոգացեք այն մասին, որ պայմանագիրը կազմված լինի ձեր մայրենի կամ էլ ձեզ հասկանալի լեզվով, որպեսզի դուք հասկանաք աշխատանքի բոլոր մանրամասներն ու պայմանները:
- Անմիջապես մի՛ ստորագրեք պայմանագիրը: Այն վերցրեք ձեզ հետ, հանգիստ պայմաններում վերընթերցեք, ցույց տվեք մասնագետներին:
- Պահանջե՛ք, որ ձեր ապագա աշխատանքի (ուսման) պայմանները, տեղը, ժամանակը, աշխատավարձի չափը հստակ ձևակերպված լինեն:
- Եթե պայմանագրի պահանջները ձեզ չեն բավարարում, մի՛ ստորագրեք:
- Ուշադի՛ր եղեք, որ պայմանագիրը ստորագրված լինի ֆիրմայի տնօրենի, նախագահի կողմից: Իսկ եթե այն ստորագրված է պաշտոնակատարի՝ փոխտնօրենի, փոխնախագահի կամ մեկ այլ անձի կողմից, պահանջե՛ք ձեզ տրամադրել պայմանագիր կնքելու իրավասությունները հաստատող փաստաթղթեր՝ տնօրենի կամ նախագահի հրաման, լիազորագիր (նոտարի հաստատմամբ, կնիքի առկայությամբ):

Ստորագրված պայմանագիրը պատճենահանե՛ք (ցանկալի է բոլոր փաստաթղթերը) և թողեք հարազատների, մտերիմների մոտ:

ԴԱՍ 8.
Մարդու թրաֆիքինգի և շահագործման զոհերի պաշտպանությունը և աջակցությունը

Դասի նպատակը

Սովորողը պետք է կարողանա՝

- Վերլուծել թրաֆիքինգի հետևանքները զոհերի վրա:
- Քննարկել և գնահատել թրաֆիքինգի զոհերի օգնության և աջակցության հարցերով զբաղվող տարբեր կառույցների դերն ու գործունեությունը:
- Առաջարկել թրաֆիքինգի զոհերի օգնության, աջակցության ուղիներ ու ձևեր:

Դասի ընթացքը

Խթանում

Ուսուցիչը գրատախտակին գրում է՝ *«Մարդը ինքն է որոշում և ընտրում գումար վաստակելու ճանապարհը, հետևաբար հետևանքների համար միայն ինքն է պատասխանատու»* միտքը և առաջարկում սովորողներին խորհել վերջինիս շուրջ:

Սովորողները խորհում են հարցի շուրջ, ներկայացնում իրենց մոտեցումները, լսում ընկերների տեսակետները: (5 րոպե)

Իմաստի ընկալում

Դասարանը բաժանվում է չորս խմբի: Ուսուցիչը խմբերին առաջարկում է ընթերցել «Թրաֆիքինգի հետևանքները» ենթաբաժինը և քննարկել, թե ինչպիսի դժվարությունների մասին է խոսքը գնում կոնկրետ նյութում:*Կարելի է նաև առաջարկել, որ յուրաքանչյուր խմբից մեկը դասարանին շատ հակիրճ ներկայացնի իրենց ուսումնասիրած հատվածի էությունը:*

Ընթերցում և քննարկում է առաջին խումբը:

Թրաֆիքինգի հետևանքները*: Որպեսզի հասկանանք, թե ինչպես է հարկավոր օգնել թրաֆիքինգի զոհերին, որպեսզի անհրաժեշտ օգնությունն արդյունավետ լինի, հարկավոր է նախ պարզել, թե ինչ հետևանքներ է թողում թրաֆիքինգը զոհերի վրա, թե հատկապես ինչ են ապրել ու զգացել մարդկանց շահագործման զոհերը, ինչպիսին են նրանց կարիքները:*

Թրաֆիքինգի հետևանքները մարդկանց առևտրի զոհերի համար ***միշտ էլ բացասական են****: Անգամ, եթե զոհին հաջողվում է դուրս գալ այդ վտանգավոր ցանցից և տուն վերադառնալ, թրաֆիքինգի հիմնախնդիրները դրանով չեն ավարտվում: Մինչև բնականոն կյանքի անցնելը թրաֆիքինգի զոհերը պետք է վերականգնվեն նվաստացումից, անտարբեր վերաբերմունքից, ֆիզիկական և հոգեբանական բռնությունից:*

Տուն վերադառնալուց հետո թրաֆիքինգի զոհերը հաճախ բախվում են սոցիալ-տնտեսական, առողջական, հոգեբանական, կյանքի անվտանգության և իրավական բնույթի բարդ ու անլուծելի թվացող խնդիրների հետ:

Նրանք ունենում են տարաբնույթ և բարդ սոցիալ-տնտեսական խնդիրներ: Շատերը աշխատելու, սովորելու և այլ առաջարկներով արտասահման գնալուց առաջ կա՛մ դուրս են գալիս իրենց բնակության վայրի գրանցումից, կա՛մ արտասահմանում կորցնում են (հավաքագրողները հետ չեն տալիս) փաստաթղթերը: Ոմանք էլ վաճառում են իրենց բնակարանները, որպեսզի ինքնաթիռի տոմսի, արտասահմանում տեղավորվելու և որոշ ժամանակ ապրելու, շահավետ գործարքներ կնքելու, համատեղ բիզնես ստեղծելու գայթակղիչ առաջարկների համար գումար ունենան: Վերադառնալով հայրենիք՝ նրանք հաճախ համալրում են գործազուրկների շարքերը: Չունենալով որոշակի մասնագիտություն և կրթություն թրաֆիքինգի զոհերը բախվում են աշխատանք որոնելու անվերջ խնդրին: Նրանք սովորաբար խոշոր պարտքեր են ունենում: Չունենալով աշխատանք և աջակցություն, նրանց պարտքերը գնալով մեծանում են: Շրջապատը նման մարդկանց, որպես կանոն, անվստահությամբ է վերաբերվում ...

Ընթերցում և քննարկում է երկրորդ խումբը:

Թրաֆիքինգի հետևանքները: *Որպեսզի հասկանանք, թե ինչպես է հարկավոր օգնել թրաֆիքինգի զոհերին, որպեսզի անհրաժեշտ օգնությունը արդյունավետ լինի, հարկավոր է նախ պարզել, թե ինչ հետևանքներ է թողում թրաֆիքինգը զոհերի վրա, թե հատկապես ինչ են ապրել ու զգացել մարդկանց շահագործման զոհերը, ինչպիսին են նրանց կարիքները:*

Թրաֆիքինգի հետևանքները մարդկանց առևտրի զոհերի համար ***միշտ էլ բացասական են****: Անգամ, եթե զոհին հաջողվում է դուրս գալ այդ վտանգավոր ցանցից և տուն վերադառնալ, թրաֆիքինգի հիմնախնդիրները դրանով չեն ավարտվում: Մինչև բնականոն կյանքի անցնելը թրաֆիքինգի զոհերը պետք է վերականգնվեն նվաստացումից, անտարբեր վերաբերմունքից, ֆիզիկական և հոգեբանական բռնությունից:*

Տուն վերադառնալուց հետո թրաֆիքինգի զոհերը հաճախ բախվում են սոցիալ-տնտեսական, առողջական, հոգեբանական, կյանքի անվտանգության և իրավական բնույթի բարդ ու անլուծելի թվացող խնդիրների հետ:

Թրաֆիքինգի զոհերը հաճախ վախենում ու տագնապում են իրենց և իրենց հարազատների կյանքի ու անվտանգության համար: Քիչ չեն դեպքերը, երբ հավաքագրողները, հանցավոր խմբերը սպառնում են զոհի հետ հաշվեհարդար տեսնել՝ սպանել նրան, նրա հարազատներին, առևանգել երեխաներին, սպառնում են տուժողին կամ նրա մերձավորներին արատավորող տեղեկություններ տարածել, նրանց գույքը ոչնչացնել կամ վնասել: Օրինակ՝ պատմել հարազատներին, շրջապատին, թե իրականում ինչով են զբաղվել թրաֆիքինգի զոհ մարմնավաճառ կանայք, եթե վերջիններս դիմեն իրավապահ մարմիններին: Հանդիպում են նաև դեպքեր, երբ թրաֆիքինգի զոհերը վրեժ լուծելու կամ հանցագործներին ինքնուրույն պատժելու նպատակով իրենք են հենց հանցագործ դառնում: Այս առումով նրանք սեփական և հարազատների կյանքի պաշտպանության և իրավական խորհրդատվական օգնության և տեղեկատվության կարիք ունեն (հատկապես իրենց իրավունքների վերաբերյալ, ընդ որում այնպիսի լեզվով, որը հասկանալի է նրանց):

Ընթերցում և քննարկում է երրորդ խումբը:

Թրաֆիքինգի հետևանքները: *Որպեսզի հասկանանք, թե ինչպես է հարկավոր օգնել թրաֆիքինգի զոհերին, որպեսզի անհրաժեշտ օգնությունը արդյունավետ լինի, հարկավոր է նախ պարզել, թե ինչ հետևանքներ է թողում թրաֆիքինգը զոհերի վրա, թե հատկապես ինչ են ապրել ու զգացել մարդկանց շահագործման զոհերը, ինչպիսին են նրանց կարիքները:*

Թրաֆիքինգի հետևանքները մարդկանց առևտրի զոհերի համար ***միշտ էլ բացասական են****: Անգամ, եթե զոհին հաջողվում է դուրս գալ այդ վտանգավոր ցանցից և տուն վերադառնալ, թրաֆիքինգի հիմնախնդիրները դրանով չեն ավարտվում: Մինչև բնականոն կյանքի անցնելը թրաֆիքինգի զոհերը պետք է վերականգնվեն նվաստացումից, անտարբեր վերաբերմունքից, ֆիզիկական և հոգեբանական բռնությունից:*

Տուն վերադառնալուց հետո թրաֆիքինգի զոհերը հաճախ բախվում են սոցիալ-տնտեսական, առողջական, հոգեբանական, կյանքի անվտանգության և իրավական բնույթի բարդ ու անլուծելի թվացող խնդիրների հետ:

Թրաֆիքինգի զոհերը հաճախ ունենում են առողջության հետ կապված լուրջ խնդիրներ: Աշխատելով և ապրելով խիտ բնակեցված շինություններում և հակահիգիենիկ պայմաններում՝ նրանք հեշտությամբ վարակվում են ինֆեկցիոն հիվանդություններով: Մշտական կիսաքաղց վիճակը հանգեցնում է մարսողության խնդիրների, ստամոքսի խոցերի, թափվում են ատամները: Ծանր ու երկարատև աշխատանքը առաջացնում է սիրտ-անոթային համակարգի, ողնաշարի հիվանդություններ: Հաճախ, ենթարկվելով բռնության ու ծեծի՝ ունենում են ներքին օրգանների վնասվածքներ: Այս տեսակետից հատկապես տուժում են մարմնավաճառները, որոնց, «ապրանքային» տեսքը չվնասելու համար, հարվածում են մարմնի հենց այն մասերին, որտեղ գտնվում են ներքին օրգանները: Հաճախ սեռական բռնության զոհերը տառապում են սեռական ճանապարհով փոխանցվող անբուժելի հիվանդություններով (ՄԻԱՎ/ՁԻԱՀ):

Ընթերցում և քննարկում է չորրորդ խումբը:

Թրաֆիքինգի հետևանքները: *Որպեսզի հասկանանք, թե ինչպես է հարկավոր օգնել թրաֆիքինգի զոհերին, որպեսզի անհրաժեշտ օգնությունը արդյունավետ լինի, հարկավոր է նախ պարզել, թե ինչ հետևանքներ է թողում թրաֆիքինգը զոհերի վրա, թե հատկապես ինչ են ապրել ու զգացել մարդկանց շահագործման զոհերը, ինչպիսին են նրանց կարիքները:*

Թրաֆիքինգի հետևանքները մարդկանց առևտրի զոհերի համար ***միշտ էլ բացասական են****: Անգամ, եթե զոհին հաջողվում է դուրս գալ այդ վտանգավոր ցանցից և տուն վերադառնալ, թրաֆիքինգի հիմնախնդիրները դրանով չեն ավարտվում: Մինչև բնականոն կյանքի անցնելը թրաֆիքինգի զոհերը պետք է վերականգնվեն նվաստացումից, անտարբեր վերաբերմունքից, ֆիզիկական և հոգեբանական բռնությունից:*

Տուն վերադառնալուց հետո թրաֆիքինգի զոհերը հաճախ բախվում են սոցիալ-տնտեսական, առողջական, հոգեբանական, կյանքի անվտանգության և իրավական բնույթի բարդ ու անլուծելի թվացող խնդիրների հետ:

Բավականին լուրջ են թրաֆիքինգի զոհերի հոգեբանական խնդիրները: Հաճախ նկատվում են հասարակության մեջ նրանց մեկուսացվածության, շրջապատից փախչելու դեպքեր, նրանք չեն ցանկանում խոսել իրենց հետ պատահածի մասին, կամ էլ ստում են ու ձևանում, կարծես, թե ոչինչ չի եղել: Թրաֆիքինգի շատ զոհեր ապրում են մշտական վախի ու սարսափի մեջ, որ ինչ-որ մեկը իրենց նկատմամբ բռնություն կցուցաբերի, նրանք չեն կարողանում թուլանալ և հանգստանալ, անվստահությամբ են վերաբերվում մյուս մարդկանց: Քիչ չեն դեպքերը, երբ նրանք ընկնում են դեպրեսիայի մեջ, նրանց հանգիստ չի տալիս կյանքին վերջ տալու միտքը: Թրաֆիքինգի զոհերի մեջ հաճախ են հանդիպում ինքնասպանություն կամ ինքնասպանության փորձ կատարած անձինք:

Այնուհետև, ուսուցիչը բոլոր խմբերին հանձնարարում է կարդալ և քննարկել «Պաշտպանություն և աջակցություն թրաֆիքինգի զոհերին» ենթաբաժինը: (15 րոպե)

Որից հետո ուսուցիչը խմբերի ուշադրությունը հրավիրում է դասանյութի վերջում զետեղված աղյուսակներին, հանձնարարում լրացնել դրանք և ստեղծել թրաֆիքինգի դեմ պայքարի կազմակերպման պաստառ:

Ընթերցում են բոլորը

Պաշտպանություն և աջակցություն թրաֆիքինգի զոհերին: *Առավել բարդ են այն դեպքերը, երբ մարդկանց առևտրի զոհը զգում է ոչ միայն, օրինակ, սոցիալ-տնտեսական դժվարություններ, այլև բացասական հետևանքներ, որոնք անդրադառնում են նաև նրա ֆիզիկական և հոգեկան առողջության վրա: Այդ պատճառով, օգնության կազմակերպման արդյունավետությունը մեծապես պայմանավորված է վերը նշված ոլորտների մասնագետների, տարբեր շահագրգիռ կառույցների և կազմակերպությունների համատեղ աշխատանքով և համագործակցությամբ:*

Ինչպես նշվեց, թրաֆիքինգից տուժած մարդիկ, վերադառնալով տուն, բախվում են բազմաթիվ խնդիրների, ունենում են շատ դժվարություններ: Ավելին, համապատասխան աջակցության և հնարավորությունների բացակայությունը բերում է նրան, որ նրանցից ոմանք նորից են ենթարկվում բռնության և շահագործման, կրկին ընկնում են թրաֆիքինգի շրջապտույտի մեջ: Սրանով պայմանավորված էլ առաջնահերթ խնդիր է դառնում թրաֆիքինգի զոհերի վերականգնողական և վերասոցիալականացմանն ուղղված ծառայությունների ու ծրագրերի ստեղծումն ու նրանց գործունեության զարգացումը, որոնք պետք է գործեն կամավորության և գաղտնիության սկզբունքներով:

Որպես ուղենիշ ունենալով կարևոր այն սկզբունքը, որ թրաֆիքինգից տուժած անձինք կարիք ունեն ըմբռնման և կարեկցանքի և ոչ մի դեպքում չպետք է դատապարտվեն կամ հետապնդվեն, ծրագրերը և ծառայությունները պետք է առաջնորդվեն ***տրամաբանորեն ուղղորդվող և իրար հաջորդող գործողությունների հետևյալ շղթայով՝***

- *թրաֆիքինգի զոհի հայրենիք վերադարձի կազմակերպում, դիմավորում օդանավակայանում, անհրաժեշտության դեպքում տուժածի ուղեկցում ողջ ուղևորության ընթացքում,*

- *անձի պաշտպանության ապահովում,*
- *սոցիալական, հոգեբանական, բժշկական օգնության կազմակերպում,*
- *իրավական օգնություն,*
- *փաստաթղթերի վերականգնում,*
- *օգնություն կրթական հաստատությունում (դպրոց, բուհ) վերականգնվելու և ուսումը շարունակելու համար,*
- *մասնագիտական հմտությունների ուսուցում կամ նոր մասնագիտություն ձեռք բերելու օգնություն,*
- *օգնություն զոհին՝ վերադառնալու աշխատաշուկա,*
- *այլ օգնություն՝ պայմանավորված անձի անհատական պահաջմունքներով:*

Յուրաքանչյուր խումբ ուսումնասիրում, քննարկում և լրացնում է մեկ աղյուսակ: (Ուսուցիչը խմբերին տրամադրում է A1 չափսի թղթեր՝ աղյուսակը լրացնելու և թրաֆիքինգի դեմ պայքարի կազմակերպման պաստառները ստեղծելու համար): (20 րոպե)

Կշռադատում

Խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքները: Կազմակերպվում է դասարանական քննարկում: (Աշխատանքների ներկայացումներն ու քննարկումները կարելի է կազմակերպել նաև «Զբոսանք պատկերասրահում» մեթոդով): (20 րոպե)

Աղյուսակի նմուշօրինակ

Խնդիր, որ ունենում է թրաֆիքինգի զոհը	Դժվարություններ	Օգնության և աջակցության պատասխանա տուներ (անձինք, ոլորտներ, կազմակերպություններ)	Առաջարկություններ, նկատառումներ
Հոգեբանական	1.խոր մեկուսացվա-ծություն, դեպրեսիա 2.վախ, տագնապ 3.ինքնասպանության մտքեր, փորձեր...	1. Ոստիկանություն 2. ՄՄԿ 2.հոգեբաններ 3.հասարակական կազմակերպություններ...	....

Հավելված 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՊԼՈՄԱՏԻԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ավստրիայի Հանրապետություն
Հասցե՝ 28, Hadikgasse, 1140 Vienna, Austria
Հեռ.՝ (43-1) 5227479
Ֆաքս՝ (43-1) 5227481
Էլ. փոստ՝ armaustriaembassy@mfa.am
Կայք՝ http://austria.mfa.am

Խորվաթիայի Հանրապետություն
Նստավայրը՝ Վիեննա, Ավստրիա

Արաբական Միացյալ Էմիրություններ
Հասցե՝ Al Karamah 24 Str., Zone 2, Embassies Area, UAE, Abu Dhabi
Հեռ.՝ (9712) 4444196, 4444128
Ֆաքս՝ (9712) 4444197
Էլ. փոստ՝ armemiratesembassy@mfa.am
Կայք՝ http://uae.mfa.am

Գերմանիայի Դաշնային Հանրապետություն
Հասցե՝ 4, Nussbaumallee,14050, Berlin, Germany
Հեռ.՝ (49) 304050910
Ֆաքս՝ (49) 3040509125
Էլ. փոստ՝ armgermanyembassy@mfa.am
Կայք՝ http://germany.mfa.am

Իտալիայի Հանրապետություն
Հասցե՝ Via XX Settembre, 98/E - 00187 Rome, Italy
Հեռ.՝ (39) 06 3296638
Ֆաքս՝ (39) 06 3297763
Էլ. փոստ՝ info@ambasciataarmena.it
Կայք՝ http://italy.mfa.am

Սլովենիայի Հանրապետություն
Նստավայրը՝ Հռոմ, Իտալիա

Կանադա
Հասցե՝ 7, Delaware Avenue, Ottawa, Ontario, K2P 0Z2, Canada
Հեռ.՝ (1-613) 2343710
Ֆաքս՝ (1-613) 2342144
Էլ. փոստ՝ armcanadaembassy@mfa.am
Կայք՝ http://canada.mfa.am

Հունաստանի Հանրապետություն
Հասցե՝ 95, Konstantinou Paleologou Avenue, Khalandri 15232, Athens, Greece
Հեռ.՝ (30-210) 6831130, 6831145 (Հյուպատոսական բաժին)
Ֆաքս՝ (30-210) 6831183
Էլ. փոստ՝ embassy.athens@mfa.am
Կայք՝ http://greece.mfa.am

Կիպրոսի Հանրապետություն
Նստավայրը՝ Աթենք, Հունաստան

Նիդերլանդների Թագավորություն
Հասցե՝ Lan Van Meerdervoort 90, 2517 AP, The Hague
Հեռ.՝ +31 703106436, +31 703311002 (Հյուպատոսական)
Ֆաքս՝ +31 703311002
Էլ. փոստ՝ armembnl@mfa.am
Կայք՝ http://netherlands.mfa.am

Չեխիայի Հանրապետություն
Հասցե՝ Na Piskach 1411/95, 160 00 Prague 6, Dejvice, Czech Republic
Հեռ.՝ +420 220 518 175
Ֆաքս՝ +420 220 517 686
Էլ. փոստ՝ armembassy.cz@mfa.am
Կայք՝ http://cz.mfa.am

Սլովակիայի Հանրապետություն
Նստավայրը՝ Պրագա, Չեխիա

Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն
Հասցե՝ 9, Tayuan Nanxiaojie, Chaoyang District,
100600 Beijing, PRC
Հեռ.՝ (8610) 65325677
Ֆաքս՝ (8610) 65325654
Էլ. փոստ՝ armchinaembassy@mfa.am
Կայք՝ http://china.mfa.am

Ռուսաստանի Դաշնություն
Հասցե՝ 2, Armianskiy Pereulok, 101000 Moscow, Russia
Հեռ.՝ +7 495 6241269
Ֆաքս՝ +7 495 6244535
Էլ. փոստ՝ incom@armem.ru
Կայք՝ http://russia.mfa.am

Հավելված 2

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (IOM)

Գրասենյակ՝ Պետրոս Ադամյան փող. 14
Աշխատանքային օրերը և ժամերը.
երկուշաբթի - ուրբաթ 9.00-17.30
Հեռախոս՝ 58-56-92, 54-33-75, 58-37-86
Ֆաքս՝ 54-33-65
Էլ.փոստ՝ IOMArmenia@iom.int
Կայք՝ www.iom.int/countries/armenia

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ (UNDP)

Գրասենյակ՝ Պետրոս Ադամյան փող., 14
Աշխատանքային օրերը և ժամերը.
երկուշաբթի - ուրբաթ 9.00 - 18.00
Հեռախոս՝ 56-60-73,Ֆաքս՝ 54-38-11
Էլ.փոստ՝ registry.am@undp.org

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ (UNHCR)

Գրասենյակ՝ Պետրոս Ադամյան փող., 14
Աշխատանքային օրերը և ժամերը.
երկուշաբթի - ուրբաթ 9.00 - 17.30
Հեռախոս՝ 56-47-71, 54-84-92
Ֆաքս՝ 56-78-17, Էլ. փոստ՝ armye@unhcr.org

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ (UNICEF)

Գրասենյակ՝ Պետրոս Ադամյան փող., 14
Աշխատանքային օրերը և ժամերը.
երկուշաբթի-ուրբաթ 9.00-18.00
Հեռախոս՝ 58-01-74, 58-05-16, 52-35-46, 56-64-97, 54-38-09
Ֆաքս՝ 54-38-10
Էլ.փոստ՝ Yerevan@unicef.org

ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ (ICRC)

Գրասենյակ՝ Նաիրի Զարյան փող., 73/1
Աշխատանքային օրերը և ժամերը.
երկուշաբթի - ուրբաթ 9.00 - 18.00
Հեռախոս՝ 29-74-15, 29-74-16, 29-74-17, 29-74-18,
29-76-35, 29-76-36, 29-76-37, 29-76-38
Ֆաքս՝ 29-74-20
Էլ.փոստ՝ erevan.ere@icrc.org

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՀԱՏՈՒԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ (SRSGCE)

Գրասենյակ՝ Վազգեն Սարգսյան 26/1, Էրեբունի Պլազա
Բիզնես կենտրոն, 6-րդ հարկ
Աշխատանքային օրերը և ժամերը.
երկուշաբթի - ուրբաթ 9.00 - 18.00
Հեռախոս՝ 54-63-22, 54-63-26, 54-63-28, 54-63-29
Ֆաքս՝ 54-63-19
Էլ. փոստ՝ coe.yerevan@coe.int
Կայք՝ www.coe.am

ԲԱԺԻՆ 3.

ՄԵԹՈԴՆԵՐԻ ՇՏԵՄԱՐԱՆ

ԽՃԱՆԿԱՐ

Սովորողները համագործակցային խմբերով միևնույն թեմայի շուրջ աշխատում են առանձին ուղղություններով: Բոլոր խմբերի գործունեության արդյունքները միավորվում են և դառնում ողջ դասարանի սեփականությունը:

Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է: «Խճանկար» անվանումն ինքնին բնութագրում է մեթոդը: Համագործակցային ուսումնառությունը տեղի է ունենում, երբ աշակերտներն աշխատում են միասին՝ զույգերով կամ փոքր խմբերով ընդհանուր խնդիր լուծելու, ընդհանուր թեմա հետազոտելու կամ անհատական պատկերացումները միախառնելով՝ նոր միտք, նոր համադրույթ ստեղծելու համար: Մեթոդի առանձնահատկությունն այն է, որ սովորողները մեծ պատասխանատվություն են կրում միմյանց ուսումնառության համար, միաժամանակ հանդես են գալիս և՝ սովորողի, և՝ սովորեցնողի դերում: Ինքնին խմբային աշխատանքը դեռևս համագործակցային ուսումնառություն չէ: Համաձայն համագործակցային ուսուցման և ուսումնառության մոտեցման հիմնադիրներ Ջոնսոն եղբայրների՝ համագործակցային ուսուցման ուսումնառությանը հատուկ են հետևյալ բնորոշիչները.

1. *Դրական փոխկախվածություն.* Սովորողները զգում են, որ ընդհանուր առաջադրանքը կատարելու համար իրենք միմյանց կարիքն ունեն: Ուսուցիչը կարող է դրական փոխկախվածություն ապահովել՝ սահմանելով նպատակներ, որոնք միաժամանակ և՛ անհատական են, և՛ ընդհանուր: (Օրինակ՝ «Սովորիր և հավաստիացիր, որ խմբի բոլոր անդամները սովորում են»), համատեղ մրցանակներ

(միավորներ խմբային ձեռքբերումների համար), բաժանվող նյութեր (մեկ մեծ թուղթ ամբողջ խմբին, անհրաժեշտ ինֆորմացիայի հատվածների տրամադրում խմբի առանձին անդամներին), հանձնարարված դերեր (ամփոփող, խրախուսող, լրամշակող, ժամանակը հսկող):

2. *Անհատական հաշվետվողականություն.* Յուրաքանչյուր սովորողի առաջադիմությունը հաճախ գնահատվում է և ստացված արդյունքը տրվում է ինչպես աշակերտին, այնպես էլ գումարվում է խմբի միավորներին: Ուսուցիչը կարող է անհատական հաշետվողականությունը խթանելու համար այս կամ այն սովորողին տալ անհատական առաջադրանք կամ պատահական ընտրությամբ՝ խմբի մի անդամին խնդրել պատասխանել ամբողջ խմբի փոխարեն: Սա պետք է արվի մեծ զգուշությամբ և անպայմանորեն բարյացակամության մթնոլորտում. նպատակը սովորողի ձեռքբերումն ի հայտ բերելն է և ոչ երբեք ցուցադրելը, որ մեկը մյուսներից պակաս ներդրում ունի խմբի ընդհանուր արդյունքի մեջ: Խմբի յուրաքանչյուր անդամ պատասխանատու է կատարված առաջադրանքը ներկայացնելու համար:

3. *Դեմ առ դեմ փոխազդեցություն.* Խմբի անդամները մոտ են իրար և երկխոսություններ են վարում միմյանց հետ:

4. *Սոցիալական հմտությունների շեշտադրում.* Ուշադրության են արժանանում և զարգացվում են մարդկային փոխազդեցության հմտությունները, որոնք հնարավորություն են ընձեռում խմբերին աշխատել, օրինակ՝ լսել միմյանց, օգնել միմյանց, խրախուսել: Ուսուցիչն այս հմտությունները նպատակաուղղված կերպով սովորեցնում է երեխաներին այնպես, ինչպես ակադեմիական հմտությունները: Համագործակցային հմտությունները ներառում են ղեկավարումը, որոշում կայացնելը, վստահություն ձևավորելը, հաղորդակցվելը, կոնֆլիկտի կառավարումը:

5. *Խմբային վերլուծություն.* Խմբի անդամները գնահատում են իրենց համագործակցային ջանքերը և թիրախավորում բարելավումները:

6. *Ինտերակտիվ առաջադրանք.* Առաջադրանքի հանձնարարությունը պահանջում է սովորեցնել մյուսներին ... և ներառում է վերը թվարկած տարրերը:

Գոյություն ունեն խճանկար մեթոդի մի շարք տարատեսակներ:

Խճանկար - 1

Մեթոդի քայլերը

1. Թեման բաժանել առանձին հատվածների:
2. Ձևավորել 4-5 հոգանոց համագործակցային խմբեր:
3. Համագործակցային խմբերի («մայր» խմբեր) անդամներին տալ համարներ՝ 1, 2, 3, ...:
4. Նույն համարները կրող մասնակիցները միավորվում են նոր՝ «փորձագիտական» խմբերում (1,1, 1...., 2, 2, 2... և այլն): Յուրաքանչյուր փորձագիտական խմբի տրվում է առանձին առաջադրանք (օրինակ, եթե նյութը բաժանել ենք հատվածների, փորձագետների առաջին խումբը կաշխատի նյութի առաջին հատվածի վրա, 2-րդ խումբը՝ երկրորդի և այլն):
5. Աշակերտները վերադառնում են «մայր» խմբեր և հաշվետվություն են տալիս իրենց «փորձագիտական» խմբի ուսումնասիրած նյութի մասին՝ հանդես գալով նաև սովորեցնողի դերում: Աշակերտներն իրենց սովորածը սովորեցնում են միմյանց, միավորվում, ամբողջացնում են գիտելիքները:
6. «Մայր խմբերը» ամբողջ դասարանին ներկայացնում են ամբողջ թեման՝ իրենց նախընտրած ձևով, 5-10 րոպեի ընթացքում:
7. Թեման ամփոփելու նպատակով ուսուցիչը կարող է տարբեր հանձնարարություններ տալ: Օրինակ՝ «Ո՞րն էր ամենակարևորը», «Համառոտ ձևակերպեք թեմայի գլխավոր գաղափարը», «Ինչի՞ վրա խումբն ամենաշատը կանգ առավ» և այլն: Այս քայլը հնարավորություն կտա նյութն ամփոփել և գնահատել տարբեր տեսանկյուններից:

Խճանկար - 2

Մեթոդի քայլերը.

Ուսումնական նյութը բաժանել երկու մասի:

1. Սովորողներին խնդրել զույգեր կազմել նյութի ուսումնասիրության համար: Նույն գործընկերոջ հետ նրանք աշխատելու են ամբողջ դասի ընթացքում:
2. Սովորողներին հաղորդել, որ նրանք նյութը կարդալու են առանձնահատուկ ձևով: Ի վերջո նրանք պետք է յուրացնեն ամբողջ նյութը, սակայն այս պահին նրանք պետք է կենտրոնանան առաջին հատվածի վրա: Երկուսն էլ կարդալու են նույն հատվածը՝ սակայն ունենալով տարբեր խնդիրներ, կատարելով տարբեր դերեր:
3. Գործընկերներից յուրաքանչյուրին հանձնարարել ընտրել դեր՝ մեկին զեկուցողի դեր, մյուսին՝ հարցեր առաջադրողի:

   Զեկուցողը ուշադիր կարդում է հատվածը և բովանդակությունը ամբողջացնում, հանրագումարի բերում, գրառումներ անում, ներկայացման համար պլան կազմում, առանձնացնում հիմնական պահերը: Աշխատանքն ավարտելուց հետո սեփական բառերով այն ներկայացնում է ընկերոջը:

   Հարցեր առաջադրողը նույնպես մանրակրկիտորեն ընթերցում և ուսումնասիրում է հատվածը: Զեկուցողին լսելուց հետո վերջինիս տալիս է հատվածի վերաբերյալ ցանկացած հարց, որը կարող է պարզություն մտցնել, հստակեցնել պատկերը, վեր հանել նոր տեղեկատվություն.

   «Ի՞նչ կասես ...», «Հիշու՞մ ես ...», «Այնտեղ մի բան կա՞ր ... մասին»:
4. Առաջարկել զույգերին դերերով ընթերցել հատվածը և հետո քննարկել այն:
5. Սովորողներին հանձնարարել նույն ձևով ընթերցել և հետո քննարկել նյութի երկրորդ հատվածը, բայց արդեն փոխված դերերով. զեկուցողը ստանձնում է հարցեր առաջադրողի, հարցեր առաջադրողը՝ զեկուցողի դերը:

6. Նյութն ամբողջապես ուսումնասիրելուց հետո զույգերը միավորվում են ավելի մեծ խմբերով և քննարկում նյութի խմբային մշակման ու ներկայացման հարցերը:
7. Նյութի ներկայացում. Զեկույցները կարող են տարբեր ձևեր ընդունել: Լավագույն ձևերից մեկը ցուցադրական դասակարգիչներն են:
8. Յուրաքանչյուր ներկայացում կարելի է ուղեկցել ծափահարություններով:

ԴԵՊՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ

Մեթոդի նկարագրությունը

Մանկավարժական մեթոդների մեջ դեպքի ուսումնասիրումը դասավանդման մոտեցում է, որը սովորողներից պահանջում է ակտիվ մասնակցություն պրոբլեմային իրավիճակներում: Աշակերտը ստանում է որևէ իրավիճակի կամ դեպքի նկարագրություն, որը պարունակում է տվյալ դեպքին վերաբերող փաստեր կամ տեղեկություններ: Աշակերտը վերլուծության է ենթարկում այդ փաստերն ու տեղեկությունները, գնահատում խնդրի էությունը, կայացնում որոշում և ներկայացնում իր լուծումը:

Դեպքերը կարող են կազմվել կամ ընտրվել ուսուցչի, ամբողջ դասարանի, դասարանի որևէ խմբի կամ էլ աշակերտի կողմից: Դեպքի ուսումնասիրումը և վերջնական ներկայացումը կարող է տևել մեկ դասաժամից մինչև մեկ տարի: Դեպքերը կարող են լինել իրական կամ հորինված պատմվածքներ, փաստեր կամ տեղեկություններ: Դեպքերը հիմնականում պետք է լինեն անավարտ կամ չվճռված, որոնք խնդրի առաջ են կանգնեցնում մասնակիցներին՝ վերլուծելու, քննարկելու, ենթադրություններ, դատողություններ և եզրակացություններ անելու և իրենց կարծիքներն արտահայտելու: Դեպքերը իրենց բովանդակությամբ չպետք է լինեն այնքան ավարտուն, որ փակեն քննարկումը կամ ուսումնասիրումը: Դեպքերը կարող են լինել կարճ՝ դասարանային քննարկման համար, կամ երկար և բարդ՝ որպես տարվա նախագիծ:

Դեպքերը կարևոր են նրանով, որ դրանք դասարան են բերում իրական աշխարհի խնդիրները, ապահովելով աշակերտների ակտիվ մասնակցությունը, և կարող են առաջ բերել խնդրի նորանոր լուծումներ:

Դեպքերի տեսակները.

1. **Ավարտված դեպքեր**՝ հիմնված փաստերի վրա: Նման դեպքերը անհրաժեշտ են միայն վերլուծման համար, քանի որ

խնդրի լուծումը արդեն որոշված է, սակայն կարող են առաջարկել այլընտրանքային լուծումներ:

2. **Չավարտված դեպքեր**, որոնց արդյունքները պարզ չեն: Այդպիսի դեպքը դեռ չի եկել փաստական ավարտի իրական կյանքում, կամ էլ ուսուցիչը բաց է թողել հիմնական փաստերը: Աշակերտը պետք է ենթադրություններ անի, որոնց հիման վրա էլ հանգելու է որևէ լուծման:

2. **Հորինված դեպքեր**՝ գրված ուսուցչի կողմից: Այդպիսի դեպքը կարող է լինել ավարտված կամ անավարտ: Սակայն այն պետք է այնպես ներկայացվի, որ նմանվի իրականությանը, և լինի բարդ, բայց միևնույն ժամանակ ոչ այնքան խճճված, որ անհասկանալի դարձնի վարժության նպատակը:

4. **Իրական փաստարկներ**՝ լուրեր, հոդվածներ, զեկուցումներ, փաստեր և վիճակագրական տվյալներ, հարցազրույցներ, հատվածներ պատմական գրքերից, հակափաստարկներ, գրական երկտողեր, տեսագրություններ և ձայնագրություններ:

Դեպքեր ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել.

1. դեպքը պետք է սերտորեն առնչվի աշակերտի կենսափորձի և իմացության հետ,
2. առաջարկված խնդիրները հաճախ պետք է լինեն բարդ և բազմաբնույթ,
3. խնդիրները չպետք է ունենան մեկ ճշգրիտ լուծում, կամ՝ այո և ոչ պատասխաններ:

Մեթոդի ընթացքը.

1. ներկայացնել դեպքը,
2. սովորողներին ժամանակ տալ դեպքին ծանոթանալու համար,
3. ներկայացնել քննարկվող հարցերը և խնդիրը, որը պետք է լուծում գտնի,

4. սովորողներին ժամանակ տալ խնդիր(ներ)ը լուծելու համար,
5. սովորողներին թույլ տալ ներկայացնելու իրենց լուծումները և պատասխանները,
6. քննարկել հնարավոր բոլոր լուծումները և պատասխանները,
7. հարցնել սովորողներին, թե նրանք ինչ սովորեցին,
8. հարցնել, թե որքանով է դեպքը առնչվում իրենց շրջապատին,
9. կատարել ամփոփում:

Դեպքի ուսումնասիրման ընթացքի կառավարումը

1. Ծրագրի քննարկում փոքր խմբերի համար (4-6 աշակերտը արդյունավետ խումբ է դեպքի քննարկման համար): Դեպքը պետք է այնպես լինի, որ պահանջի աշակերտների ակտիվ մասնակցություն: Եթե հնարավոր է, ամեն խմբից պահանջել, որ հասնեն համաձայնության՝ պահանջվող քննարկման վերաբերյալ:
2. Կառուցել քննարկումը: Ուսուցիչը պետք է կազմի հարցերի մի շարք, որը փոքր խմբերին կտանի քննարկման: Ուշադրություն պետք է դարձնել հարցերի հաջորդականության վրա: Նախնական հարցերը մասնակիցներից պետք է պահանջեն կատարել դիտումներ դեպքերի վերաբերյալ: Հետագա հարցերը կարող են պահանջել համեմատություններ, հակադրություններ և դիտարկումներ կամ հիպոթեզների (վարկածների) վերլուծություն: Վերջնական հարցերը կարող են պահանջել աշակերտներից դրսևորել ինքնուրույն վերաբերմունք խնդրի վերաբերյալ: Հարցերը պետք է անհնար լինի պատասխանել պարզ այո կամ ոչ պատասխաններով:
3. Ամփոփել քննարկումը՝ համեմատելով խմբերի պատասխանները:
4. Թույլ տալ խմբերին աշխատելու առանց ուսուցչի միջամտության:

Մեթոդի առավելությունները.

- զարգացնում է սովորողների վերլուծական մտածողությունը,
- զարգացնում է խնդիր լուծելու հմտությունները,
- դեպքեր ուսումնասիրելով՝ ձեռք են բերում նոր գիտելիքներ,
- զարգացնում է հարցեր կազմելու հմտություններ,
- զարգացնում է բարդ և բազմաբնույթ իրավիճակներում կողմնորոշվելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն:

Մեթոդի դժվարությունները.

- կարող են այնպիսի դեպքեր ընտրվել կամ կազմվել, որ աշակերտների համար դժվար լինի ուսումնասիրել կամ լուծումներ առաջարկել,
- հարցերը կարող են այնպես կազմվել, որ չտանեն խնդրի լուծմանը, այլ շեղեն աշակերտներին հիմնական խնդրից:

ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄԵԹՈԴ

Նախագծերի մեթոդը ուսուցման համագործակցային տեխնոլոգիայի ռազմավարություններից է: Ուսուցման և ուսումնառության գործընթացում նախագծերի մեթոդի առաջնային նպատակներն են՝

- Խթանել սովորողի ինքնազարգացումը՝ նոր փորձ ձեռք բերելու, գիտելիքները կիրառելու համար: Ընդգրկվելով ուսումնական նախագծերում, աշակերտները սովորում են կատարել հետազոտություններ, հավաքել տարաբնույթ տեղեկատվություն, կողմնորոշվել տեղեկատվության «ծովում», ընտրել անհրաժեշտ նյութերը, տարանջատել գլխավորն ու երկրորդականը, համակարգված և հստակ ձևակերպել իրենց մտքերը, գրավոր ստանալ և առաքել (ուղարկել) մեծ քանակությամբ տեքստային, թվային և գրաֆիկական տեղեկատվություն, վերլուծել ստացված տեղեկատվությունը և առաջադրել նոր մտքեր (գաղափարներ):
- Ապահովել սովորողների փոխհամագործակցությունը հետազոտական աշխատանքի կատարման ընթացքում: Այն պետք է լիովին համապատասխանի խմբային աշխատանքի արդյունավետ կազմակերպման պայմաններին:

Հետազոտական նախագիծն ըստ բովանդակության կարող է լինել *ներառարկայական*՝ իրականացվում է կոնկրետ առարկայի նյութի վրա, *միջառարկայական*՝ ինտեգրում է մի քանի առարկաներ և *վերառարկայական*:

Հետազոտական նախագիծը կարող է լինել *ամփոփիչ*, երբ նրա կատարման արդյունքների հիման վրա գնահատվում է սովորողների կողմից որոշակի ուսումնական նյութի յուրացման մակարդակը և *ընթացիկ*՝ երբ ինքնակրթության և նախագծային գործունեության համար առանձնացվում է ուսումնական նյութի մի մասը միայն:

Հետազոտական նախագծերը ուսումնական գործընթացում ներառելը կազմակերպչական առումով բավականին բարդ է: Ուսուցիչը ուսումնական տարին պլանավորելիս պետք է առանձնացնի գլխավոր կամ առաջատար թեմաները, որոնք պետք է ուսուցանվեն նախագծերի մեթոդով: Այնուհետև պետք է ձևակերպել 15-20 ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքի թեմաներ, որոնց հետ աշխատանքը նախատեսված է ուսումնական պլանով:

Նախագծերի մեթոդի իրականացման փուլերը

- Նախագծի թեմայի ընտրություն,
- Հիմնահարցի ձևակերպում,
- Աշխատանքային խմբի ձևավորում,
- Հետազոտական հարցերի առաջադրում և աշխատանքի բաժանում,
- Խմբերի ինքնուրույն աշխատանք, հետազոտություններ,
- Ստացված արդյունքների միջանկյալ քննարկումներ,
- Կատարված աշխատանքի արդյունքների ներկայացում,
- Անհատների և ամբողջ խմբի աշխատանքի արդյունքների գնահատում,
- Արտաքին գնահատում, վերլուծություն, ամփոփում,
- Հետագա աշխատանքի ուղիների նախանշում:

Նախագծերի մեթոդով աշխատանքի կազմակերպումը

1. Նախապատրաստական փուլ

- Կազմակերպչական աշխատանք,
- Աշխատանքի պլանավորում,
- Գնահատման չափանիշների մշակում:

2. Ուսումնական փուլ

- Ծանոթացում գնահատման չափանիշներին,
- Ծանոթացում աշխատանքային նյութերին,

- Ինքնուրույն հետազոտական աշխատանք,
- Գնահատում:

3. Եզրափակիչ փուլ

- Արդյունքների ներկայացում,
- Ներկայացման գնահատում,
- Կազմակերպչական աշխատանք:

Նախագծերի մեթոդի արդյունքների ներկայացում

- Ներկայացման ձևի ընտրություն (բուկլետ, տեսաերիզ, համացանցային կայք, PowerPoint),
- Արդյունքների ներկայացման միջոցառման կազմակերպում,
- Արդյունքների ներկայացման գնահատում:

Նախագծի իրականացման արդյունքների ներկայացման սցենարի տարբերակ

1. Շնորհանդեսի բացման խոսք

- Նախագծի ղեկավարի ողջույնը (նախագծի ստեղծման և ընթացքի մասին ներկայացնել հյուրերին),
- Խմբերի ելույթների հերթականության հրապարակումը:

2. Խմբերի ելույթները

- Յուրաքանչյուր խմբի ելույթից հետո մյուս խմբերը քննարկում և գնահատում են նրանց աշխատանքը,
- Նշել ներկայացված ելույթի երեք կարևոր (հաջողված) կողմերը,
- Նշել ներկայացված ելույթում տեղ գտած երկու թերություն (լրամշակման ենթակա կողմ),
- Ներկայացնել նախագծի կատարելագործմանն ուղղված սեփական տեսակետը,
- Ընդհանրացում (օգտվելով գնահատման աղյուսակից ներկայացնել ելույթի գնահատականը):

3. Ընդհանուր քննարկում, անհատական ելույթներ, հյուրերի ելույթներ, կարծիքների փոխանակում:

4. Նախագծի ղեկավարի եզրափակիչ խոսք

- Գնահատականների ամփոփում,
- Աչքի ընկած աշակերտների, մասնակիցների պարգևատրում,
- Հետագա գործունեության, աշխատանքի կատարելագործման ուղղիների նախանշում,
- Շնորհակալական խոսք:

Նախագծերի մեթոդի արդյունքների գնահատում

- Ուսուցչի և աշակերտների կողմից,
- Արտաքին գնահատում,
- Գնահատել յուրաքանչյուր աշակերտին,
- Գնահատել ամբողջ խմբի աշխատանքըգ,
- Պարգևատրել աչքի ընկած աշակերտներին:

Նախագծի իրականացման արդյունքների ներկայացման գնահատում

Լրացրեք աղյուսակը նախագծի իրականացման արդյունքների ներկայացման ժամանակ: Գնահատեք յուրաքանչյուր խմբի զեկույցը՝ բերված չափանիշների համար և նշանակեք միավոր: Գնահատականների ամփոփման համար հաշվեք յուրաքանչյուր խմբին նշանակված միավորների գումարը:

Չափանիշներ, որոնցով կարելի է գնահատել աշխատանքները (տարբերակ).

- Նախագծի կապը ուսումնական ծրագրի և ուսպլանի հետ,
- Ստեղծագործական մոտեցումներ, լուծումներ,
- Մուլտիմեդիա միջոցների կիրառում,
- Դասավանդման նոր մեթոդների կիրառում,

- Խմբային աշխատանք, աշխատանքի բաժանում,
- Գրաֆիկական դիզայն,
- Ներկայացման յուրահատուկ ոճ,
- Դպրոցում նախագծի կիրառման կազմակերպումը:

ԴԵՐԱԽԱՂ*

Մարդկանց շահագործումը կանխելուն ուղղված ուսուցողական միջոցառումների հիմքում պետք է ընկած լինեն կրթության ժամանակակից փիլիսոփայության ձեռքբերումները, քանի որ նման ուսուցանումն ունի անմիջական գործնական նպատակ. այն ոչ միայն և ոչ այնքան տեղեկատվություն պետք է պարունակի, որքան պետք է նպաստի, որպեսզի ստացված *գիտելիքը ներքնայնացվի (ինտերիորիզացիայի ենթարկվի) սովորողի կողմից՝ դառնալով նրա համար կենսական սկզբունք, մտածելակերպ ու գործելակերպ:* Իսկ այս նպատակին հասնելու համար շատ կարևոր են **բուն (authentic) ուսուցման** սկզբունքները, երբ որպես ուսուցման օբյեկտ և միջավայր հանդես է գալիս իրական կյանքը: Կարևոր է նաև **կառուցողականության (կոնստրուկտիվիստական)** սկզբունքը, ըստ որի *սովորողին մատակարարվում է ոչ թե վերջնական պատրաստի նյութ, այլ հնարավորություն է տրվում, որպեսզի սովորողի ներաշխարհում աստիճանական աշխատանքի, մտորումների ու գործողությունների հետևանքով ձևավորվեն սեփական համոզմունքներն ու մոտեցումները:* Այս երկու սկզբունքներին համահունչ է **նմանակումների (սիմուլյացիա) և դերային խաղերի** օգտագործումը ուսումնական գործընթացում:

Շատ գործոններ կան, որոնք նպաստում են դասավանդման ազդեցության մեծացմանը: Նման կարևոր գործոնների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ *այն ուսուցիչները, ովքեր մտածում և ջանում են, որ դպրոցական օրվա ընթացքում իրենց առաջադրանքներն ու վարժությունները նաև խաղային ու դերախաղային լինեն, կարողանում են, որպես կանոն, բավականին արդյունավետ ու մնայուն դասավանդում իրականացնել:* ***Եթե***

---

* Դերային խաղ մեթոդի մասին տե՛ս նաև. **Ս. Ս.Պետրոսյան,** *Դերային խաղի նշանակությունը քաղաքացիական կրթության դասերի ժամանակ: Մարդ և հասարակություն:*, 2005, Թիվ 1, էջ 17-24, **Ս. Պետրոսյան, Ս. Խաչատրյան և այլոք**, *Հասարակագիտության ինտեգրված ուսուցում: Ուսումնական ծրագրի մշակում և թեմատիկ միավորների օրինակներ*, ԱՅՈԵՔՍ, Երևան, Լուսաբաց, 2006, էջ 211-228, **Ս. Խաչատրյան, Ս. Պետրոսյան, Թ. Տեր-Մկրտչյան և այլոք**, *Քաղաքացիական կրթություն: Ժողովրդավարության հիմնարար արժեքներ: Ուսուցչի ձեռնարկ*, Երևան, 2004, էջ 88-94:

դասավանդման ձևը դրամատիկ հույզեր է առաջացնում, ապա այն, ինչ սովորեցնում ենք, ամրապնդվում է սովորողի հիշողության մեջ (Tumer, 2004թ.):

Վերոնշյալ միտքն առանձնապես ճշմարիտ է այնպիսի բարդ ու զգայուն նյութ դասավանդելիս, ինչպիսին մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հիմնախնդիրն է:

Գերմանական դասական փիլիսոփայության հիմնադիր Իմանուիլ Կանտը հավատում էր մարդ արարածի առաքինի բնությանը և պնդում էր, որ բարձրագույն բարոյականություն է, երբ մարդ կարող է իրեն պատկերացնել մեկ ուրիշի դերում ու հասկանալ նրան: Կանտը հավատում էր, որ մեծ առաքինություն է, երբ մարդը կարողանում է հասնել երկխոսության իր ներաշխարհում՝ միաժամանակ մտածելով իր «ես»-ի և «այլոց» տեսանկյուններից: Այս կարողության զարգացման համար լավագույն մանկավարժական ուղին դերային խաղն է, որը հնարավորություն է տալիս հասկանալ ոչ միայն ուրիշներին, այլ նաև սեփական «ես»-ը: Իսկ թրաֆիքինգ երևույթին առնչվելիս Կանտի միտքը ձեռք է բերում արդիական մի նոր հնչերանգ, քանի որ սովորողները ոչ թե օտարվում են մարդկանց շահագործման զոհերի խնդիրներից, մտածելով, որ վերջիններն իրենք էին մեղավոր իրենց հետ կատարվածի համար, այլ ձեռք են բերում նրանց ապրումակցելու (էմպատիայի) կարողություն, որը դպրոցի պատերից դուրս կնպաստի ավելի մարդկային հարաբերությունների հաստատմանն ու թրաֆիքինգի զոհերի համար վերականգնվելու հնարավորությունների ընդլայնմանը:

Չպետք է մոռանալ նաև մի կարևոր հանգամանք. թրաֆիքինգի ուսումնասիրության ժամանակ սովորողները գործ են ունենում արտակարգ զգայուն նյութի հետ. մարմնավաճառություն, պոռնկագրություն, ծեծ, հայհոյանքներ, հոգեբանական տարատեսակ ճնշումներ, որոնց իրական մոդելավորումն անհնար է մարդկային արժանապատվությունը չնսեմացնելու տարրական իրավական պահանջի հետևանքով: Սակայն դերային խաղի միջոցով ստեղծելով անվտանգ միջավայր և համաձայնելով, որ ամեն ինչ պայմանական է, սովորողները կարող են որպես դերակատարներ մտնել անգամ մարմնավաճառների, կավատների, հավաքագրողների դերերի մեջ, զգալ նրանց բարոյական ընտրությունների բեռը, հասկանալ, թե ինչ է կատարվում թրաֆիքինգի զոհերի

ներաշխարհում և, ի վերջո, այս ամենի արդյունքում ձևավորել կայուն աշխարհայացք ու չլինել խոցելի տարբեր հոգեբանական մանիպուլյատորների, հավաքագրողների, կանանց ու տղամարդկանց երազանքները չարաշահողների համար:

Դերախաղի ճիշտ օգտագործումն օգնում է.

- զարգացնել աշակերտների միջանձնային հաղորդակցության հմտությունները,
- գնահատել այլոց տեսակետներն ու մոտեցումները, ճանաչել և ընդունել դրանք,
- ըմբռնել, թե ինչպես որոշ մարդկանց որոշումները կարող են ազդել ուրիշների վրա,
- սովորել տեսական նյութը՝ իրենց պատկերացնելով այն մարդկանց տեղում, ովքեր իրական կյանքում այդ դերերն էին կատարում,
- զարգացնել աշակերտների հիմնախնդիրներ լուծելու և հակասությունները հարթելու ունակությունները:

Հասարակագիտության ուսուցման ընթացքում դերախաղի մեթոդը նյութն ավելի հետաքրքիր է դարձնում և ապահովում է սովորողների հուզական մասնակցությունը: Դերախաղն անուղղակիորեն զարգացնում է սովորողների հիմնական ժողովրդավարական արժեքները, ինչպես ասենք՝ ազատ արտահայտվելու ունակությունը, հանդուրժողականությունը, մասնակցությունը հասարակական կյանքին և այլն:

Դերախաղի ժամանակ ի հայտ եկող դրամատիկ իրավիճակն ամեն անգամ նորություն է բերում սովորողներին, որովհետև լուծումը գալիս է քննարկման, սովորելու ընթացքում, այն նախապես տրված չէ: Դա անանուն, դրսից պարտադրված գիտելիք չէ, այլ ներքին՝ զգացմունքների ու մտքերի արդյունք: Իսկ դերախաղին անդրադարձն ու այդ մասին խորհրդածությունները շատ կարևոր են: Ամեն անգամ նոր դերախաղն ավարտելուց հետո աշակերտներին անհրաժեշտ է հարցեր առաջադրել այն մասին, ինչ տեղի ունեցավ, և խորհել դերախաղի նպատակի մասին: Դերախաղն ուսուցչի համար լուրջ փորձություն է, որովհետև նրա մեջ անհայտի և անսպասելիի մեծ բաժին կա և՛ աշակերտի, և՛ ուսուցչի համար: Ուսուցչից

պահանջվում է ստեղծագործական մոտեցում և դասարանում սովորողների համար ապահով միջավայր ստեղծելու հմտություն: Ուսուցիչները կարող են դերախաղ անցկացնել մեկ առանձին դասի կամ դասաշարի ժամանակ: Տևական նմանակումների ժամանակ աշակերտները կարող են որոշակի դերեր վերցնել և որոշ ժամանակ մշակել, զարգացնել դրանք (օրինակ՝ հավաքագրող, ընտանիքի անդամներ, պաշտոնյա, կաշառակեր, դատավոր և այլն), այն ընթացքում, երբ ուսումնական ծրագրի համաձայն խորանում է որոշ թեմաների ուսումնասիրությունը (օրինակ՝ ռիսկի խմբեր, թրաֆիքինգի տեսակներ և այլն):

Դերախաղի ազդեցությունը կարելի է բացատրել նաև Բրուների մարդկային ճանաչողության տեսությամբ: Ջերոմ Բրուները (1966թ.), առանձնացնում է երեք համակարգ, որոնց միջոցով մարդիկ կարողանում են իրենց կենսափորձը պահպանել, վերականգնել ու կիրառել: Նա այս համակարգերն անվանում է գործուն, պատկերային և խորհրդանշական (սիմվոլիկ):

Գործուն համակարգում գիտելիքը փոխարկվում է գործողության, որովհետև բառերով դժվար է արտահայտել, ավելի հեշտ է ցուցադրել, կատարել այն, ինչ որ գիտեն: *Պատկերային* գիտելիքը կամ հասկացությունները փոխարկվում են տեսողական կամ զգայական այլ համակարգերի: Նկարները, աղյուսակներն ու դիագրամները պատկերային փորձերի ներկայացման օրինակներ են: Երրորդը խորհրդանշային համակարգն է, որը այս երեքից ամենաբարդն է: Այն լավագույնս ներկայացվում է և՛ գրավոր, և՛ բանավոր լեզվում: Հասարակագիտական գիտելիքը մեծ մասամբ ներկայացվում է երրորդ ձևում, բայց այն ձեռք բերելու համար ավելի արդյունավետ կլինի բոլոր երեք ձևերի համադրումը, քանի որ դրանք ավելացնում են յուրաքանչյուրի առանձին ազդեցությունը:

Դերախաղն աշակերտներին հնարավորություն է տալիս օգտվել բոլոր երեք ձևերից, երբ արտահայտում են իրենց մտքերն ու գաղափարները, ասենք՝ պատմական իրադարձությունների վերաբերյալ: Թրաֆիքինգի հիմնախնդիրների մասին դասընթաց անցկացնող ուսուցիչները պետք է կարողանան լինել նաև «բեմականացման ռեժիսորներ», որոնք աշակերտների հասարակագիտական գիտելիքը կերտում են հիմնականում Բրուների նշած երրորդ ձևի միջոցով: Սակայն, ինչպես արդեն

ասացինք, գիտելիքի ուսուցման համար ավելի նպատակահարմար է օգտվել այս երեք ձևերից էլ, քանի որ դրանք ապահովում են դասի բեմական մթնոլորտը: Դերախաղ ստեղծել կարողացող ուսուցիչներն աշակերտներին ներկայացնում են պատմության, մշակույթի և մարդկային հարաբերությունների դրամատիկական պատկերը, որի շնորհիվ երեխաները կարողանում են, ասես «մտնել» այդ հակասությունների մեջ, գործող անձանց հոգեբանության և իրադարձությունների մեջ:

Որպես ռեժիսորներ՝ ուսուցիչները կարող են օգտագործել մի շարք բեմական մեթոդներ, որոնք կնպաստեն աշակերտների մասնակցությանը, հետաքրքրություն կարթնացնեն և հետազոտություն կատարելու դրդապատճառ կդառնան, կզարգացնեն իրադարձությունների հաջորդականության զգացումը, բանավոր և գրավոր արտահայտվելու հմտություններն ու այլոց զգացմունքների ու գաղափարների նկատմամբ զգայուն վերաբերմունքը: Դերախաղն, ընդօրինակումներն ու բեմականացումը կարող են խթանել սովորողների հետազոտական կարողությունները, երբեմն էլ աշակերտների համար նոր՝ կենսական իմաստ ու նպատակ հաղորդել տեղեկություններ հավաքելու և ուսումնասիրելու աշխատանքին:

Դերախաղի միջոցով աշակերտներն ուսումնասիրում են այնպիսի ժամանակներ, վայրեր և իրադրություններ, որոնց հետ իրենք ուղղակիորեն չեն առնչվել: Երկխոսությունը սցենար չէ, սակայն ուսուցիչը թատերական իրադրություն է ստեղծում, իսկ աշակերտներն օգտագործում են իրենց փորձն ու գիտելիքները, և տալիս դերակատարների պատասխան-արձագանքները տվյալ հանգամանքներում: **Հանգամանքներն օգնում են աշակերտներին հասկանալ իրադրությունը** (Morris, 2001թ.):

Դերախաղը դասարանը կարող է աշակերտների համար դարձնել հրաշալի վայր՝ օգնելով մտապահել պատմական, մշակութային գաղափարներն ու փաստերը: *Այն կարող է պատմել հասարակական փոխազդեցությունների մասին և զարգացնել աշակերտների ինքնաընկալումը, օգնել, որ կարողանան հասկանալ ուրիշներին և զարգացնել կարեկցելու, ապրումակցելու կարողությունները:* Սակայն երբեմն էլ նման մեթոդով աշխատանքը կարող է անհանգստություն պատճառել: Երբեմն ոգևորվելով, որոշ դերակատարներ կարող են չափից ավելի ներքաշվել խաղի մեջ ու, կորցնելով խաղի և

իրականության սահմանը, օրինակ, կարող են կոպտել միմյանց, ձգտելով լինել իրական, անվայելուչ պահել իրենց և այլն: Նման դեպքերից խուսափելու համար խիստ կարևոր է ուսուցչի դերը: Մարդկանց շահագործումն ուսումնասիրելիս և որոշ հոռի երևույթներ վեր հանելիս պետք է շատ զգույշ լինել, որպեսզի ուսումնական նպատակներով մտահղացված դերախաղը չնպաստի հակառակին, չխեղի սովորողների հոգեբանությունը, չառաջացնի վախի և անելանելիության մթնոլորտ: Պետք է հաշվի առնել նաև 15-17 տարեկանների հոգեբանական զարգացման առանձնահատկությունները, զգացմունքայնությունը, հեշտորեն խոցելի լինելն ու ոչ մի դեպքում չպարտադրել դերեր այն սովորողներին, ովքեր չեն ուզում հանդես գալ այդ դերով: Եթե դասարանում որևէ դերի համար կամավոր կատարող չգտնվի, այդ դերը կարող է կատարել ուսուցիչը, կամ ավելի լավ է ընդհանրապես հրաժարվել այդ պահին այդ դերախաղն այդ դասարանում անցկացնելուց: Նման դեպքում ուսումնական նպատակին կարելի է հասնել այլ եղանակներով, իսկ դերախաղը կարելի է թողնել այնպիսի ժամանակի, երբ սովորողներն իրենց առավել հարմարավետ կզգան թեմային անդրադառնալիս:

Ուսուցիչն ինքը պետք է դրականորեն լիցքավորված և համոզված լինի, որ իր ներքին հնարավորություններով կարող է դասարանը հետաքրքիր ու գրավիչ միջավայր դարձնել դերախաղի համար՝ միաժամանակ պահելով վերահսկողությունը: Դերախաղը երբեմն ներառում է նաև աշակերտների ակտիվ մասնակցությունը պլանավորման ու անցկացման փուլերում:

Դերախաղը չի կարելի դիտարկել որպես լոկ ժամանակ անցկացնելու ու զբաղվելու միջոց, այն պետք է լինի լուրջ ու նպատակային: Չպետք է մոռանալ նաև նախապատրաստության և անդրադարձի ու կշռադատման մասին: Ուսուցչի համար առաջին կանոնը պետք է *նախապատրաստվելը* լինի: Ուսուցիչը պետք է վստահ լինի իր քայլերում. նյութի ճիշտ ընտրություն, հստակ պլանավորում, աշակերտներին դերախաղին նախապատրաստում, վարժեցում, ինչպես նաև կարողանա առաջնորդել աշակերտներին դեպի անկեղծ ու նորարարական դերախաղ:

Շատ կարևոր է, որ դերախաղի ժամանակ աշակերտներն իրենց հոգեբանորեն ապահով զգան և համոզված լինեն, որ չեն արժանանա հասակակիցների հեգնանքին:

Դերախաղի տեսակները

Դերախաղի դասակարգման շատ ձևեր կան: Ստորև բերված աղյուսակում մենք փորձել ենք ընդգրկել գրեթե բոլոր տեսակները:

Դերախաղի դասակարգման մեթոդներ*

Ըստ ձևի	
Երևակայական	Ներկայացվող
Խոսքային	Վարքային
Ինքնաբուխ	Նախապես գրված սցենարով
Ըստ բովանդակության	
Անձը խաղում է ինքն իրեն	Անձը խաղում է ուրիշի
Գործողությունները վերցված են իրական կյանքից անիրական են	Գործողություններն ընդհանրապես

- **Երևակայական դերային խաղի** ժամանակ բավական է, որ գործողն իրեն պատկերացնի որևէ գրքի հերոսի, քաղաքական գործչի կամ այլ դերում, այնինչ **ներկայացվող** դերային խաղի ժամանակ գործողը պետք է կարողանա հանդես գալ իրական գործողություններով: Երևակայական դերախաղ կարելի է անցկացնել ցանկացած դասի ժամանակ: Օրինակ՝ սովորողներին կարելի է տալ մարդկանց շահագործման

* Տե՛ս Ս.Խաչատրյան, Ս.Պետրոսյան և ուրիշներ, (2004), *Քաղաքացիական կրթություն. ժողովրդավարության հիմնարար արժեքներ: Ուսուցչի ձեռնարկ,* Երևան, Էդիթ պրինտ, էջ 88-94:

դեպքերի նկարագրություններ ու առաջարկել իրենց երևակայել դեպքի հերոսներից որևէ մեկի դերում: Ներկայացվող դերախաղերը ժամանակատար են, պահանջում են մանրամասն հրահանգներ ու հատուկ դասաժամ:

- **Խոսքային դերային խաղը** հիմնականում բանավեճի, համոզման, դեկլարատիվ բնույթ ունի, իսկ **վարքայինում** գործող անձինք խոսքից անցնում են արարքների: Խոսքային դերախաղի օրինակ կարող է լինել, օրինակ, թրաֆիքինգի զոհի պատմությունն իր վերապրածի մասին, որ սովորողները կարող են անգամ իմպրովիզով հնարել:
- **Ինքնաբուխ դերային խաղը** ծագում է ցանկացած լսարանում, ուսուցիչը պարզապես կարող է այն նրբորեն ուղղորդել ցանկալի ուղղությամբ, ի հակադրություն սրա, **նախապես մշակված** դերային խաղն ունի խիստ որոշակիություն, չնայած հնարավոր է նաև միջին դեպքը, երբ գործողը ստանում է հրահանգ իր դերի մասին, բայց նաև ունի իմպրովիզացիայի հնարավորություն:
- Ցանկացած **անձ կարող է խաղալ ինքն իրեն,** սակայն հոգեբանորեն առավել անվտանգ է **ուրիշ մեկին խաղալը**: Թրաֆիքինգի խնդիրներին անդրադառնալիս ցանկանալի է միշտ խաղալ ուրիշի, քանի որ անկանխատեսելի շրջադարձեր կարող են լինել, որոնք կարող են ցավ պատճառել իրենք իրենց խաղացողներին:
- **Գործողությունները** կարող են լինել **իրական,** օրինակ՝ հավաքագրողը խաբում է տղամարդկանց մի խմբի՝ նրանց ձեռքերից վերցնելով անձնագրերը: Կարող են լինել նաև **երևակայական**, օրինակ՝ թրաֆիքինգի զոհի հոգին կամ կրկնակը հերթով այցելում է իր այդ վիճակի բոլոր մեղավորներին ու մեղադրում նրանց:

Արդեն նշվեց, որ կառուցվածքի տեսանկյունից դերային խաղերը կարող են լինել **չպլանավորված, առանց հստակ կառուցվածքի և կուռ կառուցվածք ունեցող:** Սրանք իրենց հերթին ունեն ենթատեսակներ, որոնցից մի քանիսը կարելի է դիտարկել մանրամասն:

Չպլանավորված դերային խաղեր.

ա) որևէ մասնակցի խնդրի վրա հիմնված,

բ) գոյություն ունեցող որևէ հիմնախնդիր առավել ցայտուն դարձնելու նպատակով,

գ) ինքնաբուխ:

Օրինակներ.

ա) Ուսուցիչն աշակերտների հետ վերլուծում է նախագծի իրականացման ժամանակ հանդիպած բարդությունները: Սովորողներից մեկը դժգոհում է, որ մարդիկ լսել անգամ չեն ուզում մարդկանց շահագործման երևույթի մասին, հրաժարվելով հարցազրույց տալ իրենց: Մարդիկ ասում են, որ իրենց ողջ կյանքը շահագործում է, էլ ինչի մասին է խոսքը: Ուսուցիչն անմիջապես առաջարկում է այդ աշակերտին բանակցել իր հետ՝ պատկերացնելով, որ ինքն է այն անձը, որից սովորողը ցանկանում էր հարցազրույց վերցնել: Ուսուցիչը բերում է փաստարկներ, դժվարին կացության մեջ դնելով սովորողին: Ապա դերերը փոխվում են. այժմ ուսուցիչը համոզում է սովորողի ներկայացրած անձին տալ հարցազրույց՝ կարևորելով թրաֆիքինգի դեմ պայքարելու անհրաժեշտությունը: Այնուհետև դասարանը կարող է քննարկել, թե ինչ կատարվեց: Ուսուցիչը կարող է նաև հարցնել, թե որևէ մեկը կարո՞ղ է իրեն ավելի լավ համոզել: Խաղարկվում է նաև այդ տարբերակը: Դարձյալ քննարկվում, համեմատվում են տարբերակների ուժեղ ու թույլ կողմերը: Ուսուցիչը կարող է նաև ոչ թե ինքը խաղալ, այլ կամավորներ հրավիրել դասարանից:

բ) Թրաֆիքինգի հիմնախնդիրը սովորողների ընկալման մեջ ավելի ցայտուն ներկայացնելու համար ուսուցիչը կարող է նրանց առաջարկել իրենց պատկերացնել որպես կառավարության անդամներ ու քննարկել, թե ինչ կարող են անել թրաֆիքինգի հիմնախնդիրը ՀՀ-ում հաղթահարելու համար:

գ) Դպրոցում ինչ-որ դեպք է կատարվել, աշակերտները բուռն վիճում են: Ուսուցիչը կարող է անմիջապես մեկ-երկու աշակերտի առաջարկել դիտորդի դեր՝ իրավիճակը գնահատելու և վերլուծելու համար: Նրանք կարող են վիճաբանողներին դիմել հարցերով, ասենք՝ եթե դու լինեիր X-ը, ինչպե՞ս կվարվեիր և այլն:

Պլանավորված դերային խաղեր.

ա) ներկայացում
բ) «փոխարինի՛ր ինձ»
գ) դժվար խնդրի լուծում
դ) եռյակներ
ե) ճառ
զ) խաղ «դատարկ» աթոռի հետ
է) մամուլի ասուլիս
ը) «ստվեր»

ա) Ներկայացում: Դերային խաղի այս ձևն իրականացվում է երկու և ավելի գործող անձանց կողմից, որոնք դասարանին կամ ավելի մեծ խմբի որևէ իրադրություն են ներկայացնում (հնարավոր իրադրություններն իրականում անսահման են), որն էլ մեծ խմբի համար դառնում է քննարկման ու որոշակի եզրակացությունների հանգելու ազդակ: Հասկանալի է, որ ներկայացման հաջողության համար անհրաժեշտ է նախնական լուրջ պատրաստություն, ինչ-որ առումով նաև դերասանական տաղանդ:

Դերային խաղի այս ձևն ունի շատ տարածված ենթատեսակ՝ **«Ճիշտ ու սխալի»** մեթոդը, երբ խումբը նախ և առաջ ներկայացնում է որևէ իրադրություն՝ մասնակիցների ոչ ճիշտ վարվելակերպով, այնուհետև, քննարկումից հետո նույն խումբը ներկայացնում է տվյալ իրադրության մեջ մասնակիցների ճիշտ վարքի հնարավոր տարբերակը: Սա հնարավորություն է տալիս բանավիճող կողմերին հիմքեր գտնել իրենց բերած փաստարկների օգտին: Օրինակ՝ «Գայթակղիչ առաջարկ» կամ «Փարիզ, Փարիզ» դերախաղերն իրականացնելիս (տե՛ս Դաս 2) կարելի է խաղարկել և համաձայնելու, և առաջարկից հրաժարվելու դեպքերը:

բ) «Փոխարինիր ինձ»: Դերային խաղի այս ձևում նվազագույնի է հասցվում խաղացողների անհարմար վիճակներում հայտնվելու ռիսկի հավանականությունը, քանի որ նրանք իրավունք ունեն խաղի ցանկացած պահին փոխարինվել այլ խաղացողով: Ինչպե՞ս է դա կատարվում: Մեծ խումբը բաժանվում է երկու խմբի, որոնցից յուրաքանչյուրին տրվում են գաղտնի հրահանգներ: Որպես կանոն, վերցվում են երկու հակոտնյա կողմեր: Ապա առաջին երկու կամավորը (յուրաքանչյուր խմբից՝ մեկը) խաղարկում են իրավիճակը մնացյալ ողջ խմբի առջև: Սա կարող է տևել առավելագույնը երեք րոպե: Դրանից հետո ամեն թիմից հերթով յուրաքանչյուր մասնակից իրեն փորձում է նույն դերում: Խաղացողներից յուրաքանչյուրն իրավունք ունի դերը ստանձնելու պահից մինչև երեք րոպեի ընթացքում բարձրացնել ձեռքը, ինչը նշանակում է՝ «Փոխարինե՛ք ինձ»: Հաջորդ խաղացողն անմիջապես պետք է մտնի «բեմ» ու շարունակի «խաղը»: Սակայն չի կարելի, որ միաժամանակ երկու թիմերի խաղացողներն էլ փոխարինվեն, ցանկալի է, որ դա կատարվի հերթականությամբ, ինչը հնարավորություն կտա, որ խաղը շարունակական լինի: Եթե ինչ-որ մեկը սահմանված ժամանակից երկար է մնում խաղի մեջ, ուսուցիչն է բարձրացնում ձեռքը, ու խաղացողն անմիջապես փոխարինվում է: Այս մեթոդով հարմար է թրաֆիքինգի զոհերի հոգեվիճակն ուսումասիրելուն միտված դերախաղերի անցկացումը, երբ կստեղծվի իրադրություն, երբ խոսում են արդեն թրաֆիքինգից ազատված մարդն ու նրան հավաքագրողը:

Դերային խաղից հետո բոլոր խաղացողներին կարելի է տալ հարցաթերթիկներ՝ մոտավորապես այսպիսի հարցերով.

- Հարազա՞տ էր Ձեզ այս դերը:
- Խուսափո՞ւմ էիք խաղի մեջ մտնելուց: Հե՞շտ էր արդյոք կատարել, օրինակ, զոհի կամ հավաքագրողի դերը: Ինչո՞ւ:
- Սպասո՞ւմ էիք, որ մյուս թիմից որոշակի կոնկրետ մարդ մտնի խաղի մեջ, որպեսզի դառնաք նրա խաղընկերը, թե՝ միևնույնն էր ում հետ խաղալ:
- Արդյո՞ք երեք րոպե խաղացիք, թե՞ շուտ դուրս եկաք:
- Եթե շուտ փոխարինվեցիք, ի՞նչը ստիպեց շուտ դուրս գալ խաղից:

գ) Դժվար խնդրի լուծում: Այս դերային խաղը նման է ներկայացմանը, սակայն իրավիճակների լուծումները չեն տրվում խաղացողներին, կամ առաջարկվում են մի քանի հնարավոր ելք ունեցող իրավիճակներ: Խաղացողները, ստանալով նախնական հրահանգները, մնացյալն իրականացնում են հանպատրաստից՝ իմպրովիզացիայով, փորձելով հենց խաղի մեջ լուծել դժվարին խնդիրը: Ապա լսարանը քննարկում է, թե արդյո՞ք դա նրանց հաջողվեց: Լուծումները կարելի է իրականացնել լավատեսական, հոռետեսական կամ իրատեսական տեսանկյուններից, ինչպես առաջարկվել է «Փարիզ, Փարիզ» դերախաղում (տե՛ս Դաս 2):

դ) Եռյակներով դերային խաղում ներգրավվում է ամբողջ մեծ խումբը, որը բաժանվում է եռյակների: Յուրաքանչյուր եռյակում առաջին երկուսը կատարում են կողմերի դերերը, իսկ երրորդները՝ դիտորդների: Կողմերն իրենց դերերի մասին հրահանգներ են ստանում, իսկ դիտորդները՝ նաև լրացուցիչ թերթիկ՝ դերային խաղը և նրա մասնակիցներին գնահատելու համար: Թերթիկում կարող են լինել այս կարգի հարցեր.

- Արդյո՞ք «առաջինը» ճիշտ էր ներկայացնում իր դերը: Փաստարկե՛ք:
- Արդյո՞ք «երկրորդը» համապատասխան խաղով էր հանդես գալիս: Բերե՛ք փաստարկներ:
- Ի՞նչ եք կարծում, նրանք հասա՞ն որևէ հանգուցալուծման: Ինչո՞ւ եք այդպես կարծում:
- Ձեզ ինչ-որ բան տվե՞ց խաղին հետևելը: Ի՞նչ:
- Դիտորդների առկայությունը ստիպում է մասնակիցներին առավել լուրջ մոտենալ դերին: Խմբերում խաղը քննարկելուց հետո կատարվում է նաև համադասարանական քննարկում:

ե) Ճառ: Սովորողներին նախապես առաջարկվում է որոշակի ժամանակահատվածում ներկայացնելու համար ճառ պատրաստել սեփական, որևէ իրական կամ մտացածին անձնավորության անունից: Ճառերը ներկայացվում են ողջ դասարանին ու դրվում քննարկման: Օրինակ՝ կարելի է ճառ գրել որպես երկրի նախագահ

կամ վարչապետ, որի խնդիրն է պայքարել թրաֆիքինգի դեմ, որպես անկախ լրագրող, որը քննադատում է առկա ինչ-ինչ հոռի երևույթներ և այլն:

զ) Խաղ «դատարկ» աթոռի հետ: Կենտրոնում դրվում է դատարկ աթոռ, որը որևէ պաշտոնյա է, որոշումներ ընդունող անձ և այլն: Կամավորները գալիս են ու աթոռի հետ «լուծում» են իրենց հարցերը կամ առաջ են քաշում նոր հարցեր: Սա կարելի է անցկացնել մրցույթային կարգով: Պարզ է, որ նման դերախաղի համար թիրախ կարող են լինել կաշառվող ոստիկանները, պաշտոնյաներ և սահմանային անցագրային ծառայությունների ներկայացուցիչներ: Մրցակցային ձևով անցկացնելու դեպքում կարելի է ընտրել ժյուրի, որը կգնահատի, թե որքանով են այս կամ այն խմբի ներկայացուցիչները ուժեղ փաստարկներ բերում կաշառակեր պաշտոնյաներին մեղադրելու և հասարակական կարծիք ձևավորելու համար:

է) «Մամուլի ասուլիս» դերային խաղում սովորողները նախապես ուսումնասիրում են իրենց հանձնարարված կերպարների վարքը, կյանքը, մտածելակերպը, քաղաքական հավատամքը: Բուն խաղի ժամանակ լսարանը լրագրողների դերում է հանդես գալիս: «Լրագրողները» որոշակի հարցեր են տալիս, որոնց «հերոսների» դերակատարները պետք է պատասխանեն՝ ձգտելով հնարավորինս նմանվել իրենց կերպարի նախատիպին:

ը) «Ստվերը» կարելի է օգտագործել պարզ դերային խաղերի ժամանակ, երբ գործում են մեկից-երեք անձ: «Ստվերը» նույնպես գործող անձ է, որը հանդես է գալիս որպես խաղացողի ներքին ձայն կամ խիղճ: Մասնակիցը խաղում է նախօրոք ստացած հրահանգների համաձայն, իսկ «Ստվերը» գործում է հանպատրաստից՝ հենվելով ինտուիցիայի կամ ներկայացվող հերոսի մասին այլ տեսակետի վրա: Երբ խաղացողն ինչ-որ միտք է ասում, «Ստվերն» իրավունք ունի լսարանին տեղեկացնել, որ խաղացողն այլ բան է մտածում: Սա հնարավորություն է տալիս նույն մարդուն միանգամից տեսնել երկու տարբեր տեսանկյուններից: Սակայն երբեմն խաղացողի ու «Ստվերի» միջև բուռն վեճեր են

ծագում, ինչը դժվարացնում է այս մեթոդի կիրառումը: Բայց եթե «Ստվերի» դերակատարն օժտված է խորաթափանցությամբ ու նրբանկատությամբ, խաղը կարող է բավական արդյունավետ լինել: Ուսուցիչը կարող է երբեմն նաև արգելել խաղացողի և «Ստվերի» հաղորդակցումը, կարծես թե նրանք զուգահեռ աշխարհներում են գտնվում:

Նման «ստվերներ» կարող են ունենալ հավաքագրողները, որոնք ապագա զոհերին պայծառ հույսեր կտան, իսկ ստվերն այլ մասնակցի ձայնով կներկայացնի հավաքագրողի իսկական մտքերը: Մտածելու և վարվելու այդ հակասությունը ակնառու տեսնելիս, սովորողներն ավելի պարզ կընկալեն հավաքագրողների բարոյազուրկ լինելը:

Բացի նշված ընդհանուր տեսակներից, կան նաև որոշ բարդ, սակայն հասարակագիտության համար շատ օգտակար տեսակներ: Մարդկանց շահագործման հիմնախնդիրների դասավանդման համար կարելի է դրանցից օգտագործել երևակայական դատավարությունների հետևյալ տեսակները:

1. **Իրական դատավարությունների վերստեղծում:** Ներկայացվում է անցյալում տեղի ունեցած ինչ-որ դատավարություն այնպես, ինչպես որ այն եղել է: Որքան մանրակրկիտ հետազոտենք և լավ պատրաստվենք, այնքան այն ամբողջական կլինի: Արխիվները և տպագրված նյութերը կարող են մեծապես օգնել այս հարցում:
2. **Դերախաղ - դատավարություններ՝ բաց դատավճիռներով:** Խաղ - դատավարության այս տեսակն ամեն ինչով նման է առաջինին, տարբերությունը միայն մեկն է՝ դատավճիռը կարող է փոխվել:
3. **Գրական կերպարների դատեր:** Այսպիսի դատավարությունների շնորհիվ աշակերտներն ամրապնդում են արդարության, ազնվության և այլ հարցերի մասին ունեցած իրենց պատկերացումները, բավարարում բնական հետաքրքրասիրությունը և կարողանում ազատվել կանխակալ կարծիքներից: Օրինակ, կարելի է դատել Սամվել Փուլշատյանին:

4. **Ընթացիկ հակասություններին և հարցերին առնչվող դատավարություններ:** Դատական դեպքերի համար հիմք են ծառայում լրագրերն ու նորությունների թողարկումները, հարազատների և բարեկամների կարծիքները: Ժամանակակից իրադարձություններին վերաբերող հարցերը կարևոր են և առնչվում են աշակերտներին, վերջիններս էլ փորձում են սեփական դատավարությունները առաջ քաշել: Օրինակ, կարելի է դատել այն հորը, որը հրաժարվում է իր թրաֆիքինգի զոհ դարձած աղջկան ընդունել ընտանք, պնդելով, որ չի դիմանա խայտառակությանը:

5. **Մշակել նոր սցենար և դերախաղով ներկայացնել այն:** Սա միանգամայն ստեղծագործական աշխատանք է, երբ աշակերտները ստեղծում են մի պատմություն, որտեղ առկա են հանցանք, զոհ, վկաներ, հանցանշաններ և հանցանքի մեջ մեղադրվող ոճրագործ: Այստեղ գործընթացի էությունը տեսական նյութից նրա կիրառմանն անցնելն է: Սրա համար անհրաժեշտ են նաև լայն մտահորիզոնի և հետազոտական հմտությունների տեր ուսուցիչներ: Եթե հանցանքը բարդ է, և չենք կարող դատել, ապա շարունակում ենք հետազոտել, թե իրավական համակարգն ինչպես է դատում նման հանցանքները:

6. **Ընթերցողի թատրոն:** Ընթերցողի թատրոնը, որն առաջարկել է Թղրները (2004թ.), խնդիր է դնում պատմողական ոճով գրված գործը պիեսի վերածել: Աշակերտների մի խումբ ընթերցում է պատմվածքը, հետո պլանավորում, թե ինչպես այն պիեսի նման ընթերցել: Առանցքը դրամատիկական պլանավորման գործընթացն է: Պատմողական ձևը փոխելու համար աշակերտները պետք է ամբողջովին հասկանան դերակատարներին, զգան տեսարանը, մտապահեն նպատակը, թեմաները և գործողությունների զարգացումը կամ սյուժեն: Նրանք բառացիորեն նորից են գրում պատմվածքը և պատմողական մասերը վերածում երկխոսության: Նրանք ստիպված են մտածել, թե որ հերոսին է վերաբերում ինֆորմացիան և ինչպես կարելի է այն վերածել երկխոսության կամ մենախոսության: Երբ պատմվածքն արդեն

պլանավորված և արտագրված է, աշակերտները կարող են մի քանի անգամ խաղալ այն: Ռաֆֆու «Անմեղ վաճառք» պատմվածքը կարելի է նման ձևով խաղարկել: Նման ձևով կարելի է խաղարկել նաև Ղազարոս Աղայանի «Անահիտ» հեքիաթի այն հատվածը, որտեղ հերոսները շահագործման զոհ են դառնում: Ներկայացումները կարելի է անցկացնել դաղարներով, ամեն մի դրվագից հետո քննարկելով թրաֆիքինգին առնչվող հարցեր:

Խորհրդածություն կամ անդրադարձ դերախաղից հետո

Դերախաղը գործողության մեջ շատ հզոր մեթոդ է, սակայն այն լիարժեք չէ առանց անդրադարձի, այսինքն՝ առանց աշակերտների՝ իրենց կատարածի մասին խորհրդածելու փուլի: *Այս գործընթացը կոչվում է անդրադարձ կամ կշռադատում (reflection), երբ աշակերտներն ու ուսուցիչը հարցուպատասխանով փորձում են բացահայտել աշակերտների յուրացրածը*:

Հետազոտողներից շատերը կարևորում են հետխաղային այս քննարկումը, որն անհրաժեշտ է դերախաղի մեթոդն առավելագույն արդյունավետության հասցնելու համար (Gillespie 1973, as cited in Petraneck, Corey Black, 1992): Դերախաղային վարժանքներից շատերն ինքնուսույց խաղեր չեն, և անպայման անդրադարձի անհրաժեշտություն է զգացվում, որը կօգնի սովորողներին խորհրդածել իրենց վարքագծի, ինչպես նաև դերախաղի կամ նմանակումների մեթոդի մասին: Խաղը չպետք է դիտել որպես դասարանական առօրյայից շեղում: Այն այդ առօրյայի մասն է՝ բանավոր հարցուպատասխանի առանձնահատուկ նպատակներով: Երբ խաղից հետո նրա մասնակիցները մտորում, կշռադատում են, նրանք խորհրդածելու հմտություններ են ձեռք բերում նաև կյանքի յուրաքանչյուր իրավիճակի համար:

Բանավոր հարցուպատասխանի ժամանակ ուսուցչի դերը միանգամայն տարբեր է դասախոսի դերից: Նա անկեղծ տոն է տալիս և ընդունում նոր մտքերը: Հարցուպատասխանի ժամանակ ուսուցիչը նախաձեռնող է և խրախուսում է բոլորի կարծիքները: Սա կարող է դժվար լինել, եթե ուսուցչի մեջ գերակշռում է դասախոսելու ոճը (պասիվ աշակերտների համար): Հարցուպատասխանների

ընթացքը չպետք է ուսուցչակենտրոն լինի: Ուսուցիչը պետք է ժամանակ հատկացնի և բազմակողմանի հարցեր առաջադրի: Նա պիտի քաջալերի աշակերտներին նկատել վարքագծի մոդելները և առաջարկի կապել դերախաղն իրական կյանքի հետ:

Հանքինսոնը (1987թ.) և Հսուն (1989թ.) բանավոր հարցման շրջանի հետևյալ կառուցվածքն են առաջարկում: Նրանց կարծիքով, **բանավոր հարցուպատասխանի բաղադրամասերը չորս E-երն են (անգլերենում չորս բառն էլ E տառով են սկսվում. Events, Emotions, Empathy, Explanations՝ *իրադարձություններ, հույզեր, ապրումակցում և բացատրություններ*):**

Զրույցը սկսելու լավագույն ձևը մասնակիցներին խնդրելն է, որ նկարագրեն *իրադարձությունները*, այսինքն՝ այն ամենն, ինչ կատարվել է իրենց հետ: Խոսում են բոլոր ցանկացողները: Հարկ եղած դեպքում աշակերտները մանրամասնում են: Այստեղ խնդիրը զրույցը վերլուծական հունով տանելն է:

Իրադարձությունների ուսումնասիրությունից հետո, զրույցը տանում ենք մյուս կարևոր գաղափարի ուղղությամբ՝ *հույզերի*, որ ծավալվում են իրադարձությունների շուրջ: Զգացմունքները բացահայտելու հարցում ուսուցիչը զգույշ պիտի լինի: Եթե աշակերտների համար իրենց հույզերը բառերով արտահայտելը դժվար է, որպես սկիզբ ուսուցիչն առաջարկում է հնարավորինս շատ զգացմունքներ: Ուսուցչի դերն այստեղ վստահության միջավայրի ստեղծումն է, այնպիսի մթնոլորտի, որում հարգվում են բոլոր *զգացմունքներն* ու մտքերը: Եթե երբեմն որոշ տհաճ *զգացմունքներ* են քննարկվում, ուսուցիչն ընդունում է և շնորհակալություն հայտնում անկեղծության համար:

Իրադարձություններն ու հույզերը առատ տեղեկատվության աղբյուր են: Որպեսզի աշակերտներն այս իրադրության մեջ սովորեն, ուսուցիչն անցնում է երրորդ կարևոր մասին՝ *ապրումակցմանը* և առաջարկում նմանակումը քննարկել տարբեր տեսանկյուններից: Նա քաջալերում է մասնակիցներին իրենց ուրիշների տեղը դնել և նայել աշխարհին նրանց աչքերով: Նույն իրադրության նկատմամբ երկու հակադիր տեսակետներն ընդունելի են: Դերախաղ սովորելու հարցում կարևոր է տարբեր կարծիքների մեջ թափանցելը:

Դերախաղին անդրադարձն ավարտվում է *բացատրությամբ կամ վերլուծությամբ*, որը հանդես է գալիս տարբեր ձևերով: Ուսուցիչը

խրախուսում է մասնակիցներին, որ բացատրեն իրենց որոշ գործողությունների դրդապատճառները կամ հույզերի պատճառները: Աշակերտները հանգամանալից մեկնաբանում են դերախաղը և վարժանքի հիմնական նպատակը: Դերախաղը կապվում է իրական աշխարհի հետ, և քննարկվում են նմանություններն ու տարբերությունները: Մասնակիցները մտորում են, թե արդյո՞ք իրական կյանքում մարդիկ նույն որոշումներն են ընդունում: Վերջապես, կարելի է կիրառել նաև վերացական տեսություններ, նոր գործողություններ ու հույզեր: Աշակերտները *մեկնաբանում* են տեսությունները, ապա տրամաբանորեն դրանք կապում դերախաղի հետ:

Երկրորդ մոտեցման հեղինակ Լինդա Լեդերմանն առաջարկում է մի մոդել, ըստ որի անդրադարձը պետք է տեղի ունենա հետևյալ երեք փուլերով.[20]

1. մուտք դեպի համակարգված խորհրդածում և վերլուծություն,
2. վերլուծության և կենսափորձի անձնավորում, սեփական ներաշխարհում դրա տեղի որոնում,
3. կենսափորձի արդյունքների ընդհանրացում և օգտագործում:

Առաջին իսկ հայացքից կարելի է նկատել, որ երկու մոտեցումներն ունեն ընդհանրություններ, իսկ դա նշանակում է, որ անդրադարձի փուլն արդեն կրթության մասնագետների մտապատկերում ձեռք է բերում ընդհանրական որոշակի ուրվագիծ, և ուսուցիչները կարող են երեք փուլերով անդրադարձի ժամանակ կիրառել 4E-երը:

Ըստ Լեդերմանի, առաջին փուլն անդրադարձ կատարող ուսուցիչը (Debriefer) կարող է բաժանել ենթափուլերի՝ խմբի համար ավելի հեշտ ու սահուն դարձնելով ռեֆլեքսիան: Այդ ենթափուլերն ըստ ուսուցչի ընտրության կարող են լինել հետևյալները. 1) մասնակիցներին հրավիրել անկեղծ զրույցի, 2) սահմանել զրույցքննարկման (անդրադարձի) կանոններ տվյալ խմբի համար, 3) խմբի սպասումների գնահատում կատարելով՝ անցնել տեղի ունեցածի նկարագրությանը, 4) նկարագրել *իրադարձությունները*. մասնակիցները կարող են պատմել, թե իրենք ինչ արեցին և ինչու:

[20] Առավել մանրամասն տես **Lederman, L.C. (1992), Debriefing: Toward a systematic assessment of theory and practice. *Simulation and Gaming,*** Vol. 23, No. 2, pages 145-159:

Երկրորդ փուլում աշակերտներն ուսուցչի օգնությամբ փորձում են անդրադառնալ կատարվածի անմիջական ազդեցությանն իրենց վրա: Նրանք նկարագրում կամ խորհում են այն մասին, թե ինչ էին *զգում* դերախաղի ժամանակ, ինչ նոր *զգացումներ* ունեցան, որ չէին ակնկալում, ինչպես իրենց ներաշխարհում բեկվեց ուրիշի դժվարին խնդիրը: Կարողացան, արդյոք, լուծել այն (եթե կա խնդիր), հասկացան, արդյոք, այսպես կամ այնպես վարվող տարբեր մարդկանց և այլն:

Երրորդ փուլում, դարձյալ ուսուցիչ-անդրադարձ կատարողի օգնությամբ աշակերտները փորձում են ընդհանրացումներ կատարել ու հասկանալ, թե որտեղ կկարողանան կիրառել ձեռք բերված գիտելիքները, հմտությունները, *ապրումակցելու* կարողությունը: Այստեղ ուսուցիչն առաջադրում է «Ի՞նչ սովորեցինք մենք այս ամենից» հարցը: Աշակերտները փորձում են համեմատություններ կատարել, փաստեր հիշատակել, ամբողջականացնել դասաժամին ձեռք բերված իրենց նոր կենսափորձը:

Անդրադարձը կարող է ավարտվել *մեկնաբանություններով*, միմյանց աշխատանքի գնահատմամբ, երբ աշակերտները կնշեն, օրինակ, թե որ խմբին հաջողվեց ամենառեալիստական կերպով պատկերել այս կամ այն գաղափարը կամ իրադարձությունը: Որոշ դերային խաղերի դեպքում կարելի է անդրադարձ կատարելուց հետո մեկ անգամ ևս կրկնել դերային խաղը: Այսպիսով, *ճիշտ ընտրված բանավոր հարցուպատասխանը՝ անդրադարձը, հետապնդում է ոչ միայն պլանավորված նյութի դասավանդման հատուկ նպատակներ, այլև զարգացնում է աշակերտների՝ իրենց մասին խորհելու և կենսափորձի ու ճանաչողության միջև կապեր հաստատելու ընդունակությունը:*

Գրականություն ինտերակտիվ մեթոդների մասին

- Ս. Ս.Պետրոսյան, Դերային խաղի նշանակությունը քաղաքացիական կրթության դասերի ժամանակ: *Մարդ և հասարակություն,* 2005, Թիվ 1:
- Ս.Խաչատրյան, Ս.Պետրոսյան և ուրիշներ, *Քաղաքացիական կրթություն. ժողովրդավարության հիմնարար արժեքներ: Ուսուցչի ձեռնարկ,* Երևան, 2004, Էդիթ պրինտ:
- Աստվածատրյան Մ. Գ., Թերզյան Գ. Հ. և ուրիշներ, Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում: Ուսուցչի ձեռնարկ, Երևան, 2006:
- Ս. Պետրոսյան, Ս. Խաչատրյան և ուրիշներ, Հասարակագիտության ինտեգրված ուսուցում: Ուսումնական ծրագրի մշակում և թեմատիկ միավորների օրինակներ, ԱՅՈԵՔՍ, Երևան, Լուսաբաց, 2006:
- Առաջին քայլեր: Մարդու իրավունքների բազային ներածական դասընթաց (երկու գրքով), «Միջազգային համաներում», «Ընտանիք և նոր աշխարհ», Աբովյան, 2004:
- Գ. Յու. Կոմիսարովա, *Ուսուցման գործընթացի ակտիվացումը քաղաքացիական կրթության դասերի ժամանակ*, «Ընտանիք և նոր աշխարհ», Աբովյան, 2004:
- Ա.Ն. Իոֆֆե, Վ.Պ. Պախոմով, *Մեթոդական հնարները քաղաքացիական կրթությունում,* «Ընտանիք և նոր աշխարհ», Աբովյան, 2004:
- Ս.Ա. Լոսև, Վ.Պ.Պախոմով, *Քաղաքացիական գիտելիքների ակտիվ յուրացման տեխնոլոգիաներ: ԱՄՆ-ի քաղաքագիտության փորձից,* «Ընտանիք և նոր աշխարհ», Աբովյան, 2004:

- Ե.Վ. Բելոգլազովա, Տ. Յու. Կրամարովա, *Իրավական կրթության կազմակերպումը դպրոցում*, «Ընտանիք և նոր աշխարհ», Աբովյան, 2004:
- Turner, T.N., (2004), *Essentials of elementary social studies,* Boston, MA: Pearson Education.
- Farris, P.J., (2001), *Elementary and middle school social studies,* Boston, MA: Mc Graw Hill.
- Morris, V.R., (2001), Drama and authentic assessment in a social studies classroom. *The Social Studies,* Washington, 2001. 92(1).
- Lederman, L.C., (1992). Debriefing: Toward a systematic assessment of theory and practice, *Simulation and Gaming,* 23(2).
- Ptraneck, C.F., Corey, S. and Black, R., (1992), Three levels of learning in simulations: participating, debriefing and journal writing, *Simulation and Gaming.* 23(2).
- Tiagarajan, S., (1992). Using games for debriefing. *Simulation and Gaming,* 23 (2).
- Thatcher, D.C., (1990), Promoting learning through games and simulations, *Simulation and Gaming,* 21(3).
- B. Joyce, M. Weil, Models of Teaching, 5th edition.
- Shaw, E. Malcolm, Corsini, J. Raymond etc., (1980), *Role playing: A practical manual for group facilitators*, San Diego, CA.
- J. E. Eitington, *The Winning Trainer*, Houston, Texas, 1996.
- Lederman, L.C., *Debriefing:* Toward a systematic assessment of theory and practice. *Simulation and Gaming,* Vol. 23, No. 2.
- www.justicelearning.org
- http://eycb.coe.int/compass/ru

Գրականության ցանկ

Միջազգային և ազգային իրավական ակտեր

1. ՀՀ քրեական իրավունք: Ընդհանուր մաս: Գ. Ղազինյանի խմբագրությամբ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2007:
2. Երեմյան Ա., Թումասյան Դ., Ղամբարյան Ա., Պետրոսյան Տ. Հայաստանի Հանրապետությունում մարդու թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի իրավական հիմունքները: Երևան, 2011թ., էջ 224:
3. Ս. Պետրոսյան, Ռ. Մուրադյան, Ս. Խաչատրյան, Հ. Խաչատրյան, Կ. Նահապետյան Թրաֆիքինգ (մարդկանց շահագործում), Ձեռնարկ ուսուցիչների համար, ՄՄԿ, Երևան, 2013:
4. Ն. Ասատրյան, Թրաֆիքինգ (մարդկանց շահագործում), Գրքույկ ծնողների համար, ՄՄԿ, Երևան, 2010:
5. Ս. Պետրոսյան, Ռ. Մուրադյան, Ս. Խաչատրյան, Հ. Խաչատրյան, Կ. Նահապետյան Թրաֆիքինգ (մարդկանց շահագործում), Ձեռնարկ սովորողների համար, ՄՄԿ, Երևան, 2010:
6. “The IOM Handbook on Direct Assistance for Victims of Trafficking” IOM, 2007.
7. IOM Data Protection Manual, IOM, 2010 (in Armenian, English)
8. Caring for Trafficked Persons: Guidance for Health Providers, IOM, 2009 (Available in English and Armenian).
9. Caring for Trafficked Persons: Guidance for Health Providers. Facilitator’s Guide, IOM, 2012 (available in English and Armenian).
10 Մ. Անտոնյան, Ա. Սահակյան, Թրաֆիքինգ. Սոցիալական աշխատանքը թրաֆիքինգի զոհերի հետ: Ձեռնարկ ուսանողների համար: Եր., 2010:

11. Բաղդասարյան Է. , Մանուկյան Ա., Անապատի գիշերներում: Լրագրողական հետաքննություն, Երևան, 2005:
12. Գ. Շահինյան, Վ. Ավակովա, Թրաֆիքինգի կանխարգելում և աջակցություն զոհերին: «Ձեռնարկ Զբաղվածության պետական ծառայությանե և սոցիալական ծառայության տարածքային գործակալությունների աշխատողների համար, Եր., 2006:
13. Երեխայի թրաֆիքինգը և շահագործումը Հայաստանում, ուսումնասիրություն թիրախ խմբերի երեխաների և հանրային իրազեկվածության վերաբերյալ, Եր., 2009:
14. Հայ միգրանտների ապօրինի առևտուր և աշխատանքային շահագործում: Սոցիոլոգիական հետազոտություն: Հայկական սոցիոլոգիական ասոցիացիա: Եր., 2005:
15. Վ. Ավակովա, Հ. Էդիլյան, Ե. Շատվորյան, Հայաստանում թրաֆիքինգի զոհերին ցուցաբերված աջակցությունը: Եր., 2007:
16. Криминология/Под ред.В.Н.Кудрявцева.Москва, Юрист, 2002г. ст.279-280.
17. Марион Паюметс, Тийу Лаан: Торговля людьми: методология работы с молодежью, Copyright International Organization for Migration, 2005.
18. Мизулина Е.Б. Торговля людьми и рабство в Росии, М. 2006.
19. Тюрканова Е.В. Принудительный труд в современной России: неурегулируемая миграция и торговля людьми. Женева, 2006.
20. Грани глобализации. Трудные вопросы современного развития. М., 2003.
21. Паюметс М., Лаан Т. Предупреждение торговли людьми: методология работы с молодежью. МОМ, Таллин, 2005.
22. P. Degani. Human Rights and Trafficking in Women and Young People, An Educational Toolkit for Teachers and Students, Padua, 2007.
23. IOM and IOM Armenia websites: www.iom.int/countries/armenia .
24. Կանանց և երեխաների անօրինական փոխադրումները ՀՀ-ից: Ուսումնասիրություն: ՄՄԿ, 2001:

25. Training manual for combating trafficking in Women and Children, Save the Children (UK) and IOM, Myanmar, 2001. Online at:
www.unicef.org/lac/spbarbados/Implementation/CP/Global/trafficking_manual_2002.pdf
26. Trafficking in Persons. Global Patterns, UN office for Drug Control and Crime Prevention,
www.unodc.org/unodc/en/human-trafficking/index.html?ref=menuside
27. BBC "Slavery today - Features and Analysis on Forced Labour in the 21st Century".
http://news.bbc.uk/2/shared/hi/world/05/slavery/html/1ap.stm
28. www.antislavery.org or www.stophumantraffic.org
29. www.freetheslaves.net/home.php
30. www.antitrafficking.am
31. www.europol.europa.eu
32. www.ecpat.net

Մարդու թրաֆիքինգի և շահագործման հիմնախնդրին առնչվող վավերագրական և գեղարվեստական ֆիլմեր

Մարդու թրաֆիքինգի և շահագործման հիմնախնդրին առնչվող վավերագրական և գեղարվեստական ֆիլմերի թարմացվող ցանկը և համապատասխան հղումները կարող եք գտնել հետևյալ կայքում՝ http://humantrafficking.wordpress.com/human-trafficking-movies/

Միգրացիայի միջազգային կազմակերպություն

ՄԱՐԴՈՒ ԹՐԱՖԻՔԻՆԳ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ

ՁԵՌՆԱՐԿ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Լրամշակումը՝ Նունե Ասատրյանի
Ձևավորումը՝ Արամ Ուռուտյանի